



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 122 2021

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Արթուր Չախոյան ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 13.04.2021թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4.75 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սևակ Պողոսյան Հանցագործության օժանդակողի հասկացությունը, օժանդակության տեսակները	3
Արամ Այվազյան Շորթման համար քրեական պատասխանատվություն սահմանող օրենսդրության զարգացման պատմությունը և շորթման որակման որոշ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում	6

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Քրիստինե Ալեքսանյան Վարչարարության համաչափության և մյուս սկզբունքների ներդաշնակությունը մարդու սահմանադրական իրավունքների երաշխավորման համատեքստում	10
---	----

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արթուր Դավթյան Սեփականության իրավունքի հասկացությունը և առանձնահատկությունները ընդհանուր իրավունքում	17
Милена Саргсян Правовые проблемы признания несостоявшихся торгов недействительными	23
Սիմոն Սիմոնյան Հեղինակային իրավունքի տարածումը արհեստական բանականության օգտագործմամբ ստեղծված աշխատանքների նկատմամբ	28

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սոնա Մարգարյան Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի քաղաքացիադատավարական բնույթը	33
--	----

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Լիանա Մալխասյան Ցեղավարությունը որպես տոհմացեղային կառավարման համակարգ.....	41
Լևոն Հարությունյան Ժամանակակից ազգային իրավունքի աղբյուրների տեսական հիմնախնդիրները	46

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Լիլիթ Զիրոյան Բնապահպանական անվտանգության ապահովման պետական երաշխիքները	51
---	----

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Համլետ Հարությունյան Կամավոր հիմունքներով զորահավաքային զինվորական ծառայություն անցնող անձանց կարգավիճակը.....	56
--	----

ԱՇԽԱՏԱՆՔԱՑԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Кристина Трифонова, Сергей Трифонов Проблемы международно-правового урегулирования трудовой миграции в условиях глобализации	61
--	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Абстракты / Abstracts	65
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Ղատախագրության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները.....	76
--	----

ՍԵՎԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայրուհի

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՕԺԱՆՂԱԿՈՂԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՕԺԱՆՂԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Օժանդակող է համարվում այն անձը, ով հանցագործությանն օժանդակել է խորհուրդներով, ցուցումներով, տեղեկատվություն կամ միջոցներ, գործիքներ տրամադրելով կամ խոչընդոտները վերացնելով, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է պարտակել հանցագործին, հանցագործության միջոցները կամ գործիքները, հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները, ինչպես նաև այն անձը, ով նախապես խոստացել է ձեռք բերել կամ իրացնել այդպիսի առարկաները»:

Հանցագործությանն օժանդակելու նշված եղանակներն ու միջոցները սպառիչ են, ինչը ենթադրում է, որ օրենքում չնշված եղանակներով կամ միջոցներով օժանդակություն հնարավոր չէ: Իրավակիրառ պրակտիկայում, սակայն, օժանդակությանը երբեմն տրվում է լայն մեկնաբանություն, ինչի արդյունքում որպես օժանդակություն են որակվում նաև անձի այն արարքները, որոնք ուղղակիորեն նախատեսված չեն ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մասով: Մասնավորապես, օժանդակություն են որակվում այնպիսի դեպքերը, երբ անձը կատարում է որևէ հանցատեսակի օբյեկտիվ կողմը: Օրինակ՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքում:

Սրա հետ կապված ՀՀ Վճռաբեկ դատարանը, վերլուծելով «իրացում» եզրույթի քրեաիրավական բովանդակությունը, արձանագրել է, որ. «(...) իրացման նպատակը և իրացումը բացակայում են, եթե թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը միջնորդի կողմից ձեռք են բերվել հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայությամբ.

ա) սպառողի խնդրանքով և դրամական միջոցներով,

բ) սպառողի անձնական գործածմանը համապատասխան քանակով,

գ) առանց դրանց նկատմամբ տնօրինման իրավունքի,

դ) միջնորդի դիտավորությունն ընդգրկում է ոչ թե իրացումը, այլ ձեռքբերմանն աջակցելը:

Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե կոնկրետ ո՞ր դերակատարի՝ իրացնողի, թե՞ ձեռք բերողի շահերից ելնելով է գործում միջնորդը, նրա գործողությունները պետք է որակվեն որպես իրացման կամ ձեռքբերման հանցակցություն՝ օժանդակության ձևով»¹:

Հանցագործությունների որակման հիմնախնդիրները աշխատության հեղինակները հիմնավորապես քննադատել են այս դիրքորոշումը հետևյալ պատճառաբանություններով. պետք է նկատել, որ թմրամիջոցների առքուվաճառքի հանցավոր գործարքի միջնորդությունը՝ որպես օժանդակություն գնահատելը, չի բխում քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի ձևակերպումից, քանի որ հանցագործության առարկան (տվյալ դեպքում՝ թմրամիջոցը) այլ անձի փոխանցելը, հանձնելը կամ տրամադրելը՝ որպես օժանդակության եղանակ, ուղղակիորեն նախատեսված չէ սույն հոդվածով (հոդվածում խոսվում է միայն *միջոցներ, գործիքներ* տրամադրելու մասին): Բացի այդ, եթե նույնիսկ դիտենք, որ նկարագրված դեպքերում գործ ունենք հանցագործության առարկան նախապես խոստացված ձեռքբերման՝ որպես օժանդակության եղանակի հետ (թեև օժանդակության տվյալ եղանակն ունի բոլորովին այլ քրեաիրավական բովանդակություն), միևնույնն է, սպառողին թմրամիջոց փոխանցած անձի արարքը որակելիս չի կարող հղում կատարվել ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին, քանզի տվյալ անձի արարքն իր մեջ պարունակում է համա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 122 2021

¹ Տե՛ս Ա.Ասլանյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 23.12.2010թ. թիվ ԵԷԴ/0125/01/09 որոշումը:

պատասխան հանցագործությունների (ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 266 կամ 268) օբյեկտիվ կողմի այս կամ այն դրսևորումը (փոխադրելը, առաքելը, պահելը): Իսկ այն դեպքում, երբ անձը մասնակցում է հանցագործության օբյեկտիվ կողմի կամ դրա մասի կատարմանը, նրա արարքը որակելիս ՀՀ քր. օր.-ի 38-րդ հոդվածին հղում չի կատարվում (հոդված 39-ի 2-րդ մաս)²:

Հանցագործության օբյեկտիվ կողմը կատարելու դեպքում անձի արարքը որպես օժանդակություն է որակվում նաև այն դեպքերում, երբ նա, չհանդիսանալով հատուկ սուբյեկտ, իրականացնում է հատուկ սուբյեկտով հանցագործության օբյեկտիվ կողմը՝ հատուկ սուբյեկտի դրդմամբ:

Իհարկե, գործող օրենսդրության պայմաններում այդպիսի դեպքերը օժանդակություն որակելը խնդրահարույց է, բայց, կարծում ենք, որ ըստ էության դա ճիշտ է: Ուստի, կարծում ենք, որ իրականում առկա է օրենսդրական բաց և այդ հարցը պետք է օրենսդրորեն կարգավորվի:

Օժանդակություն են որակվում նաև այն դեպքերը, երբ անձը օգնում է կատարողին հասնելու դեպքի վայր: Դա գնահատվում է որպես խոչընդոտ վերացնել նույնիսկ այն դեպքերում, երբ ակնհայտ երևում է, որ դեպքի վայր հասնելը կատարողի համար որևէ դժվարություն չէր ներկայացնում: Մասնավորապես, սպանության օժանդակություն է համարվել այն անձի արարքը, որը իմանալով կատարողի և տուժողի միջև եղած լարված հարաբերությունների և կատարողի մոտ զենքի առկայության մասին՝ իր ավտոմեքենայով օգնել է վերջինիս փնտրելու և գտնելու ապագա զոհին՝ հասնելու դեպքի վայր³:

Օժանդակություն է որակվում նաև այն անձի արարքը, որը նախապես խոստանում է չհայտնել նախապատրաստվող հանցագործության մասին: Գործող օրենսդրության պայմաններում սա խնդրահարույց է նույնիսկ այն դեպքում, երբ խոստում տվողը պարտավոր էր կան-

խելու հանցագործությունը: Մեր կարծիքով նույնիսկ այդ դեպքում, գործող օրենսդրության պայմաններում օժանդակությունը բացակայում է և օժանդակության որևէ եղանակ չկա: Եթե նույնիսկ փորձենք դա համարել խոչընդոտի վերացում, ապա պետք է նշենք, որ օժանդակություն է խոչընդոտը վերացնելը և ոչ թե դրա խոստումը: Չնայած պետք է նշել, որ տեսության մեջ կարծիք է արտահայտվել, որ այն դեպքերում, երբ չհայտնելու խոստում է տալիս հանցագործությունները կանխելու պարտականություն ունեցողը, ապա դա օժանդակություն է⁴:

Կարծում ենք, որ հիմնավոր է քրեական իրավունքի տեսության մեջ արտահայտված այն կարծիքը, որ օժանդակողի օրենսդրական բնորոշման մեջ ճիշտ չէ օժանդակության եղանակների սպառիչ ցանկ տալը: Օժանդակություն համարվող գործունեությունը բազմաթիվ դրսևորումներ կարող է ունենալ և օրենսդրորեն թվարկել օժանդակության բոլոր եղանակները հնարավոր չէ և անհրաժեշտ չէ: Օժանդակություն կարող է համարվել յուրաքանչյուր արարք որով անձը նպատում է, օգնում է հանցանքի կատարմանը, եթե, իհարկե, այն բավարարում է հանցակցության հատկանիշներին: Ուստի առաջարկվում է օժանդակող համարել յուրաքանչյուր անձի, ով որևէ ձևով օգնում է հանցանքի կատարմանը⁵:

Հարկ ենք համարում նշել, որ օժանդակությունը ցույց է տրվում ոչ միայն կատարողին, այլև մյուս հանցակիցներին (դրդիչին, օժանդակողին): Կարծում ենք, որ նման դեպքերում անձի արարքը պետք է որակել որպես համապատասխան հանցակցի արարք: Այսինքն՝ օժանդակողին օժանդակողը օժանդակող է, դրդիչին օժանդակողը՝ դրդիչ, կազմակերպիչի ինստիտուտը, ինչպես արդեն նշել ենք նախկինում, պետք չէ առանձնացնել:

Մեկ այլ խնդիր, որ առաջանում է օժանդակություն իրականացրած անձի արարքը որակելիս: Իրավակիրառ պրակտիկայում հանդիպել ենք այսպիսի որակման: Անձն ընդրկվել

² Տե՛ս Առաքելյան Ս. Վ., Մկրտչյան Պ. Վ., Հանցագործությունների որակման հիմնախնդիրները, Եր., 2020., էջ 322-323:

³ Տե՛ս գործ N ԵԴ/0359/01/18:

⁴ Տե՛ս Уголовное право России. Учебник для вузов. В 2-х томах. Т. 1. Общая часть. М., 1998, էջ 246:

⁵ Տե՛ս Рыжков Р. С. Уголовная ответственность соучастников преступления. автореф. дисс. на соиск. учен. степени док. юрид. наук. М., 2003, էջ 9:

է կազմակերպված խմբի մեջ և երեք ամիս անընդմեջ ձեռք է բերել ու իրացրել է կազմակերպված խմբի կողմից հափշտակած ոսկյա ձուկակտորները⁶: Այդ անձի արարքը որակվել է որպես կազմակերպված խմբի կողմից առանձնապես խոշոր չափերով հափշտակության օժանդակություն՝ հղում կատարելով 38-րդ հոդվածի վրա: Այսպիսի որակումը բխում է օրենքից, քանի որ, ինչպես գիտենք, ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն ստեղծած կամ դրանք ղեկավարած անձը ենթակա է պատասխանատվության սույն օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված դեպքերում կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ ղեկավարելու համար, ինչպես նաև դրանց կողմից կատարված բոլոր հանցանքների համար, եթե դրանք ընդգրկվել են նրա դիտավորությամբ: Հանցավոր համագործակցության մեջ մտնող մյուս անձինք պատասխանատվություն են կրում այդ կազմակերպությանը մասնակցելու և այն հանցանքների համար, որոնց նախապատրաստությանը կամ կատարմանն իրենք մասնակցել են: Սույն հոդվածում թվարկված անձանց պատասխանատվությունը վրա է հասնում առանց սույն օրենսգրքի 38-րդ հոդվածին հղում կատարելու:

Ինչպես տեսնում ենք խոսքը միայն հանցավոր համագործակցության մեջ մտնող մյուս անձանց մասին է: Օրենքի ձևակերպումից բխում է, որ կազմակերպված խմբին մասնակ-

ցող այլ անձի արարքը որակելիս պետք է հղում կատարել հոդված 38-ի վրա: Այս տեսակետից վերը նկարագրված որակումը ճիշտ է: Բայց կարծում ենք, որ նման դեպքերում էլ արարքը որակելիս, գործող օրենքի և առկա մեկնաբանությունների պայմաններում, ճիշտ կլիներ հոդված 38-ի վրա հղում չկատարել, քանի որ, մեր կարծիքով, հանցավոր համագործակցության և կազմակերպված խմբի մասնակիցների միջև էական տարբերություն չկա. նրանք բոլորն էլ ենթադրաբար բնութագրվում են կայուն հակասոցիալական դիրքորոշմամբ: Այդ տեսակետն է արտահայտել նաև ՌԴ Գերագույն Դատարանի Պլենումը, որի համաձայն՝ կատարող կամ համակատարող է նաև կազմակերպված խմբի այն անդամը, որը խմբի կազմում օժանդակողի գործառույթներ է իրականացնում⁷ և փաստորեն Ընդհանուր մասի համապատասխան հոդվածին հղում պետք չէ: Պետք է նշել, որ ՌԴ Գերագույն Դատարանի Պլենումի այս դիրքորոշումը քննադատության է արժանացել⁸:

Մեր կարծիքով ևս, երկու դեպքում էլ հղումը 38-րդ հոդվածի համապատասխան մասին անհրաժեշտ է՝ տվյալ կազմակերպության յուրաքանչյուր անդամի գործառույթները պարզելու, քրեական պատասխանատվության ու պատժի անհատականացման համար: Վերջին հաշվով այն անձը, որը կատարողի գործառույթներ չի կատարել, չի կարող կատարող համարվել և նրա արարքը որակելիս անհրաժեշտ է հղում կատարել Ընդհանուր մասի համապատասխան հոդվածի վրա:



⁶ Տես գործ N ԱՎԴ1/ 0042/01/17

⁷ Տես Бюллетень Верховного Суда РФ, 1995, N9, էջ 14:

⁸ Տես Иванов Н.Г. Постановление Пленума Верховного Суда РФ «О судебной практике по делам об убийстве (ст. 105 УК РФ)». Критический взгляд // Уголовное право. – 2000. – № 2. – էջ 21–26:

ԱՐԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի պետին առընթեր ՀԿԳ ավագ քննիչ, մայոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս

**ՇՈՐԹՄԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆ
ՍԱՀՄԱՆՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՇՈՐԹՄԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԿՆԵՂԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրության 8-րդ հոդվածը հռչակում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, իսկ 31-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում արտադրական հարաբերությունների հիմքը և սեփականության պաշտպանության պետական գործառույթն իրականացվում է ֆիզիկական և իրավաբանական, այդ թվում՝ քրեաիրավական ձևերով:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, որպես սեփականության դեմ ուղղված հանցագործություն, նախատեսված է նաև շորթումը:

Շորթումը լուրջ վնաս է պատճառում այն անձանց սեփականության, կյանքի և առողջության, պատվի և արժանապատվության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերություններին, ովքեր հանդիսանում են գույքի սեփականատեր կամ օրինական տիրապետող կամ գույքի նկատմամբ իրավունքի իրավատեր: Այն դասվում է սեփականության դեմ ուղղված վտանգավոր հանցագործությունների շարքին, որի կանխարգելումը պահանջում է մասնագիտացված և ոչ մասնագիտացված սուբյեկտների կողմից համաձայնեցված

և շարունակական աշխատանքների իրականացում:

Շորթման հանցակազմը հայրենական քրեական օրենսդրությամբ նախատեսված է արդեն մի քանի տասնամյակ, թեև այդ տերմինը հանդիպում է նաև ավելի վաղ աղբյուրներում:

Այսպես, հայ հին և միջնադարյան օրենսդրական-իրավաբանական հուշարձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական իրավանորմերում խիստ պատիժներ էին նախատեսվում սեփականության դեմ կատարվող ամեն մի հնարավոր ոտնձգության համար: Այդ իրավանորմերի գոյությունը միաժամանակ վկայում է այն մասին, որ հին և միջնադարյան Հայաստանում գույքային հանցագործությունները բավականին տարածված են եղել: Աղքատությունը, տևական կարիքն ու սովը ստիպել են մարդկանց ձեռք մեկնել ուրիշի սեփականությանը և այդ արարքի համար օրենսդրությամբ նրանք պատժվել են:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայ հին և միջնադարյան օրենսդրական-իրավաբանական հուշարձաններում նախատեսված են եղել այնպիսի գույքային հանցագործություններ, ինչպիսիք են գողությունը, կողոպուտը, ավազակությունը, խարդախությունը, վաշխառությունը, ինչպես նաև ուրիշի գույքի ոչնչացման կամ փչացման ամենատարբեր ձևերը¹:

1922-1925 թվականների սկզբում ՌՍՖՍՀ-ում, այնուհետև սովետական մյուս հանրապետություններում ընդունվեցին բովանդակությամբ և ձևով սոցիալիստական առաջին քրեական օ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 122 2021

¹ Տե՛ս Ա.Թ.Թովմասյան «Հին և միջնադարյան հայ քրեական իրավունք», Երևան, 1977, էջեր 233-265:

րենսագրքերը: Այդ ժամանակներից սկսած պետական և հանրային սեփականության հափշտակումների դեմ մղվող պայքարը որոշվեց ու կարգավորվեց հանրապետությունների քրեական օրենսագրքերի հոդվածներով²:

Հանրային գույքի դեմ ուղղված հանցագործությունները նախատեսող հոդվածները ցրված էին օրենսգրքի հատուկ մասի համարյա բոլոր գլուխներում, իսկ այդ հոդվածները նախատեսում էին պատասխանատվություն գողության, կողոպուտի, յուրացման, ավազակային հարձակման, խարդախության, շորթման, գույքի ոչնչացման, վնասման և մի քանի այլ հանցակազմերի համար³: Փաստորեն, հենց այդ ժամանակաշրջանի քրեական օրենսդրությամբ առաջին անգամ շորթումը նախատեսվեց որպես ինքնուրույն հանցագործություն:

Հայաստանում, ինչպես նաև միութենական այլ հանրապետություններում նոր՝ 1959-1961 թվականների քրեական օրենսագրքերի ընդունմամբ սոցիալիստական սեփականության դեմ ուղղված հանցագործությունների պատժելիության մասին իրավանորմերը գիտականորեն, ինչպես նաև իրավաբանական տեխնիկայի կանոնների պահպանման տեսակետից կատարելագործված և լրջորեն կոնկրետացված էին:

Շորթման համար քրեական պատասխանատվությունը սահմանված էր 1961 թվականի ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածով: Սկզբնական խմբագրությամբ քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածը վերնագրված էր «Պետական կամ հանրային գույքի շորթում»: Շորթումը բնորոշվում էր որպես մեկ այլ անձի կամ թե նրա մերձավորների նկատմամբ բռնություն գործադրելու, նրա մասին կամ նրա մերձավորների մասին անվանարկող տեղեկություններ հրապարակելու կամ նրանց գույքը ոչնչացնելու հետագայում կիրառվելիք սպառնալիքի տակ այդ անձի կառավարման կամ պահպանության ներքո գտնվող պետական կամ հանրային գույքի կամ գույքի նկատմամբ իրավունքի զիջման պահանջ:

Շորթման հանցակազմի այսպիսի ձևա-

կերպման պարագայում հանցագործության օբյեկտ էր դիտվում սոցիալիստական սեփականությունը, ինչով էլ պայմանավորվում էր այդ հանցագործության յուրահատուկ քրեահրավական բնութագիրը: Մասնավորապես, եթե շորթման դիմելիս հանցագործն անմիջապես հասներ իր նպատակին, այսինքն տվյալ անձից կորզեր պետական կամ հանրային գույքը կամ նման գույքի նկատմամբ իրավունքը, ապա երկու կողմն էլ փաստորեն հանրային գույքի կամ գույքի նկատմամբ իրավունքի հափշտակում էին կատարում: Անձը, ում կառավարման կամ պահպանության ներքո էր գտնվում պետական կամ հանրային գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը, զիջում էր այն՝ դրանով վատնելով այդ գույքը, թեկուզև սպառնալիքի ազդեցության ներքո, իսկ շորթողն էլ հափշտակում, տիրապետում էր այն: Դրա հիման վրա էլ նրանք երկուսն էլ ենթակա էին քրեական պատասխանատվության⁴: Անձը, ում կառավարման կամ պահպանության ներքո էր գտնվում պետական կամ հանրային գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը, չէր ազատվում քրեական պատասխանատվությունից, քանի որ չէր գտնվում ծայրահեղ անհրաժեշտության վիճակում:

ՀԽՍՀ 1961 թվականի քրեական օրենսգրքով շորթումը նախատեսված էր ձևական հանցակազմի միջոցով, այսինքն՝ հանցանքն ավարտված էր համարվում պետական կամ հանրային գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը զիջելու պահանջի ներկայացման պահից՝ անկախ այդ պահանջի իրագործումից: 1990 թվականի մարտի 10-ի օրենսդրական փոփոխությամբ շորթման հանցակազմը ենթարկվեց որոշակի փոփոխությունների և քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածում ձևակերպվեց շորթման հետևյալ հասկացությունը՝ «Անձի կամ նրա մերձավորների նկատմամբ բռնություն գործադրելու, նրա կամ նրա մերձավորների մասին անվանարկող տեղեկություններ հրապարակելու, գույքը վնասելու կամ ոչնչացնելու սպառնալիքով գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու պահանջը (շորթում)»: Ինչպես տեսնում ենք, օրենսդրական փոփոխու-

² Տե՛ս Ա.Թ. Թովմասյան «Սովետական քրեական իրավունք», Հատուկ մաս, Ուս. ձեռնարկ, Երևան, 1979թ., էջ 237:

³ Տե՛ս Ա.Թ. Թովմասյան «Սովետական քրեական իրավունք»: Նշվ. աշխ., էջ 239:

⁴ Տե՛ս Ա.Թ. Թովմասյան «Սովետական քրեական իրավունք»: Նշվ. աշխ., էջ 310:

թյունը վերաբերում էր շորթման առարկային. գույքի կամ գույքի նկատմամբ իրավունքի պետական կամ հանրային բնույթի մասին նշումը վերացվեց, այսինքն՝ շորթման առարկան ընդլայնվեց: Մյուս փոփոխությունը վերաբերում էր նրան, որ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը զիջելու փոխարեն օրենքում նշվեց գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի հանձնման մասին:

2003 թվականին ընդունված ՀՀ քրեական նոր օրենսգրքում շորթումը նախատեսվեց 182-րդ հոդվածով, որում շորթման հանցակազմի շրջանակներն ընդլայնվեցին: Շորթման հասարակ տեսակը քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի առաջին մասում բնորոշվեց հետևյալ կերպ՝ «Շորթումը՝ անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի, նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջը»:

1961 թվականի ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածի և 2003 թվականի ՀՀ քրեական նոր օրենսգրքի 182-րդ հոդվածների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ շորթման հանցակազմն ընդլայնվեց հանցագործության առարկայի և եղանակի հատկանիշների լրացման հաշվին: Մասնավորապես, որպես շորթման առարկա նախատեսվեց նաև գույքային բնույթի այլ գործողությունների կատարումը, իսկ որպես շորթման եղանակ՝ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքը:

Այսպիսով, շորթման համար քրեական պատասխանատվություն սահմանող օրենսդրու-

թյան զարգացումն ուղեկցվել է հանցագործության առարկայի և օբյեկտիվ կողմի հատկանիշների հաշվին շորթման հանցակազմի շրջանակների ընդլայնմամբ:

Այնուամենայնիվ, մինչ օրս քրեական իրավունքի գիտության մեջ միանշանակ կերպով լուծված չեն շորթման որակմանն ու հարակից հանցակազմերից սահմանազատմանը վերաբերող առանձին հարցեր, ինչը գործնականում բացասաբար է անդրադառնում այդ հանցատեսակի դեմ պայքարի արդյունավետության, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում կատարվող որակումների տեսանկյունից:

Մասնավորապես, Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքով, որպես շորթման առարկա, նշված է ոչ միայն գույքային բնույթի գործողությունների կատարումը, այլև՝ անգործությունը: Լիտվայի քրեական օրենսգրքը որպես շորթման առարկա նշում է նաև գույքային պարտականությունից ազատելը⁵:

Բացի այդ, մի շարք երկրների քրեական օրենսգրքերում հատուկ շեշտվում է, որ շորթման հատկանիշ հանդիսացող պահանջը պետք է լինի ակնհայտ ապօրինի, անհիմն: Օրինակ՝ Լատվիայի քրեական օրենսգրքում՝ «...առանց իրավական հիմքերի գույքային պահանջ», Լիտվայի քրեական օրենսգրքում՝ «նա, ով չունենալով օրինական հիմք...»⁶:

Այսպիսով, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության ուսումնասիրության հիման վրա կարելի է ներկայացնել առաջարկություններ ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի կատարելագործման վերաբերյալ:

Մասնավորապես՝ առաջարկում ենք Գերմանիայի և Լատվիայի քրեական օրենսգրքերի օրինակով ընդլայնել շորթման առարկան: ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասում «գույքային բնույթի այլ գործողություններ» ձևակերպումը որոշակիորեն սահմանափակում է շորթման հանցակազմի շրջանակները: Մասնավորապես՝ պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ հանցավորը տուժողից պահանջի կատարել ոչ թե գույքային բնույթի

⁵ Sին Уголовный кодекс ФРГ / Пер. с нем. А. В. Серебренниковой. М.: Зерцало-М, 2001, էջ 185:

⁶ Sին Додонов В.Н., Капинус О.С., Щерба С.П. Сравнительное уголовное право. Особенная часть. Монография. М., 2010, էջ 221:

գործողություններ, այլ՝ անգործություն: Օրինակ՝ հանցավորը կարող է պահանջել, որ տուժողն իրենից այլևս չպահանջի պարտքը:

Այդ բացը լրացնելու համար առաջարկում ենք ընդլայնել շորթման առարկան և ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասը «գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու» բառերից հետո լրացնել «կամ գույքային բնույթի պահանջներից հրաժարվելու» բառերով:

Դրա հետ մեկտեղ, Լատվիայի և Լիտվայի քրեական օրենսգրքերի օրինակով առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածում հատուկ շեշտել, որ շորթողի պահանջը պետք է լինի ակնհայտ ապօրինի: Թեև ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի առաջին մասում նշված է, որ գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը պետք է լինի ուրիշինը,

ինչով հիմնավորվում է պահանջի ապօրինի լինելը, սակայն գույքային բնույթի գործողությունների կապակցությամբ այդպիսի նշում չկա: ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածում շորթողի պահանջի ակնհայտ ապօրինի լինելու մասին նշումը թույլ կտա նաև օրենսդրորեն սահմանել շորթման և ինքնիրավչության սահմանազատող չափանիշը:

Այսպիսով, որպես ամփոփում հարկ է արձանագրել, որ ցանկացած հանցագործության, այդ թվում նաև շորթման հանցակազմի պարագայում, պետության օրենսդիր մարմինն իր իրավաստեղծ գործառույթի շրջանակներում խնդիր ունի հաշվի առնել իրավակիրառ պրակտիկայում որակման հետ կապված առաջացող հիմնախնդիրները և դիմամիկ կերպով մշտապես կատարելագործել առկա օրենսդրական ձևակերպումները:



ՔՐԻՍՏԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՅՈՒՍ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հանրային ընդհանուր շահերը կենսագործելու համար վարչական մարմինները օժտվում են որոշակի լիազորություններով, որոնց շրջանակը և իրականացումը կարգավորվում է օրենքով: Երբ վարչական մարմինը կոնկրետ դեպքում պետք է որոշում կայացնի, վերջինս սահմանափակված է ինչպես օրենսդրությամբ ամրագրված ընդհանուր կանոններով, այնպես էլ կոնկրետ գործով շոշափվող հիմնական իրավունքներով և վարչարարության ընդհանուր սկզբունքներով:

Վարչարարություն իրականացնելիս, մարդու իրավունքների պաշտպանության գործում վարչարարության սկզբունքներից թերևս առավել մեծ դեր ունի համաչափության սկզբունքը, քանի որ այս սկզբունքի բուն նպատակը հենց վարչական մարմինների գործունեության ողջամիտ սահմանափակումն է: Հանդիսանալով մարդու իրավունքների երաշխավորման գործիք, այս սկզբունքը պայմանավորում է, որ բավարար չէ գործողության կատարման՝ օրենքով սահմանված լիազորության առկայությունը. այն նաև պահանջում է հավասարակշռում հանրային և մասնավոր շահերի միջև, վարչական մարմինների կողմից մարդու իրավունքների ցանկացած սահմանափակման իրավաչափություն և հիմնավորվածություն:

Վարչարարության համաչափության սկզբունքը սերտորեն հարաբերակցում է վարչարարության մյուս հիմնարար սկզբունքների հետ, որոնք, որոշ դեպքերում նաև միահյուսվելով, փոխլրացնում են միմյանց՝ ապահովելով մարդու իրավունքների պատշաճ և առավել համակարգված պաշտպանություն: Այս աշխա-

տանքի շրջանակներում մենք փորձելու ենք ներկայացնել վարչարարության համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքների միջև կապն ու փոխգործակցության ներդաշնակությունը մարդու իրավունքների երաշխավորման և պաշտպանության համատեքստում:

Անդրադառնանք օրինականության և համաչափության սկզբունքների հարաբերակցությանը: Օրինականության սկզբունքը վարչարարության կարևորագույն սկզբունքների մեկն է: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) «Վարչարարության օրինականությունը» վերտառությամբ 4-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը: Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

Օրենքով ամրագրված վարչարարության օրինականության սկզբունքը, նախ, նշանակում է, որ վարչական մարմինների յուրաքանչյուր գործողություն պետք է ունենա իրավական հիմք: Մինչույն ժամանակ, որպեսզի հասարակությունը կարողանա համարժեք ընկալել վարչական մարմնի լիազորությունների բնույթը և ծավալը, այդ լիազորությունները պետք է լինեն հստակ, ճշգրիտ և լայնորեն հրապարակվեն¹: Նշված պահանջը բխում է նաև իրավական որոշակիության սկզբունքից, որը հիմնական երաշխիք է համարվում իրավական նորմերի, դրանցում օգտագործված եզրույթների անհրաժեշտ հստակության համար, մաս-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 122, 2021

¹ Տե՛ս THE ADMINISTRATION AND YOU. A handbook Principles of administrative law concerning relations between individuals and public authorities, Council of Europe, October 2018, էջ 10:

նավորապես նախապատվությունը տրվում է այնպիսի եզրույթների օգտագործմանը, որոնց իրազեկվածության առնչությամբ գործնականում խնդիրներ չեն ծագում²: Վարչարարության օրինականության սկզբունքի երկրորդ բաղադրիչն այն է, որ այն ըստ իր ձևի և բովանդակության՝ պետք է ենթարկվի, ստորադասվի օրենքի պահանջներին, այսինքն՝ պետք է չհակասի դրանց՝ ապահովելով դրա պահպանումն ու իրացումը³: Իրավաբանական գրականության մեջ այս սկզբունքը հաճախ կոչվում է նաև «օրենքի միջոցով կառավարման» սկզբունք⁴:

Համառոտ ներկայացնելով վարչարարության օրինականության սկզբունքի ընդհանուր բովանդակությունը, այժմ անդրադառնանք վարչարարության օրինականության և համաչափության սկզբունքների հարաբերակցությանը: Այս առումով, նախ, նշենք, որ օրինականության սկզբունքը համարվում է համաչափության սկզբունքի իրավական աղբյուր⁵:

Մինչույն ժամանակ, այժմ իրավաբանական գրականության մեջ վարչարարության օրինականության սկզբունքի պահանջն է նաև այն, որ այն նպատակները, որոնց համար պետական մարմիններն օգտագործում են իրենց լիազորությունները, պետք է համապատասխանեն օրենքով սահմանված կարգով ամրագրված նպատակներին: Պետական մարմինները չպետք է իրենց լիազորություններն օգտագործեն ոչ պատշաճ պատճառներով կամ նպա-

տակներով, նույնիսկ եթե արդյունքը կարող է լինել նույնը⁶:

Օրինականության սկզբունքի այս տարրը շատ նման է համաչափության սկզբունքի պատշաճ նպատակի տարրի հետ, ըստ որի՝ վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին: Կարող ենք նաև նշել, որ օրինականության սկզբունքի այս տարրը «փորձում է» օգնել կամ ինչ-որ չափով փոխարինել համաչափության սկզբունքի պատշաճ նպատակի տարրին: Սակայն հարկ է նկատել, որ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից վարչարարության համաչափության սկզբունքը ավելի ավելի ընդգրկուն է՝ պահանջելով, որ վարչական գործողությունները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակներին՝ անձանց չզրկելով ավելիից, քան խիստ անհրաժեշտ է այդ նպատակին հասնելու համար (համաչափության սկզբունքի անհրաժեշտության պահանջը):

Վարչարարության հաջորդ կարևոր սկզբունքը, որը կցանկանայինք քննարկել իրավական որոշակիության սկզբունքն է: Վարչական իրավունքում իրավական որոշակիության սկզբունքը կարող ենք բխեցնել վարչարարության այնպիսի սկզբունքներից, ինչպիսիք են՝ վարչարարության օրինականությունը, կամայականության արգելքը⁷, ինչպես նաև վարչական ակտի որոշակիության (Օրենքի 56-րդ հոդված)⁸, վարչա-

² Տես Գ. Դանիելյան, Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները | «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016 № 2 (20), էջ 5, http://ysu.am/files/01G_Danielyan-1476101269-.pdf (10.01.2021թ.):

³ Տես Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք, Հ. Թովմայան, Օ. Լուխեթրիանյա, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմերս, Ռ. Ռուբել – Եր.: Բավիդ, 2011, էջ 192:

⁴ Տես SIGMA Papers, No. 27, European Principles for Public Administration, OECD, 2 rue André-Pascal, 75775 Paris Cedex 16, France, էջ 9:

⁵ Առավել մանրամասն տես Aharon Barak, Proportionality: Constitutional Rights and their Limitations, Cambridge University Press, 2012, էջեր 226-234:

⁶ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Անդամ պետությունների պատշաճ վարչարարության մասին» հանձնարարականի 2-րդ հոդվածը, օրինականության սկզբունքը ներկայացնելիս, նշում է, որ պետական մարմիններն իրենց լիազորություններն իրավասու են իրականացնել միայն, եթե սահմանված փաստերը և կիրառելի իրավունքը նրանց լիազորում է անել այդպես, և բացառապես այն նպատակով, որի համար դրանք լիազորվել են: Տես Recommendation CM/Rec(2007)7 of the Committee of Ministers to member states on good administration (Adopted by the Committee of Ministers on 20 June 2007 at the 999bis meeting of the Ministers' Deputies):

⁷ Սահմանադրական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Տես Սահմանադրական դատարանի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213 որոշումը:

⁸ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Օրենքի 56-րդ հոդվածի մեկնաբանությանը՝ նշել է, որ հոդվածում ամրագրված վարչական ակտի որոշակիության պահանջն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի

կան ակտի՝ սահմանված կարգով իրագելելուց հետո ուժի մեջ մտնելու պահանջներից (հոդված 60, 61) և վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունքից (Օրենքի 63-րդ և 64-րդ հոդվածներ):

Վենետիկյան հանձնաժողովն այս սկզբունքի վերաբերյալ նշել է, որ իրավական որոշակիությունը պահանջում է, որ գործադիր իշխանությունը հարգի այս սկզբունքը իրավական փաստաթղթերը կիրառելիս և ընդհանրապես կամ առանձին հարցերով որոշումներ կայացնելիս⁹: Արևմտյան Եվրոպայի երկրներում որպես վարչական իրավունքի հիմնական սկզբունք՝ իրավական որոշակիությունը ներառում է **հուսալիությունը և կանխատեսելիությունը**¹⁰:

Վարչարարության շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում իրավական որոշակիության սկզբունքը կարևոր հիմք է հանդիսանում օրինական ակնկալիքների պաշտպանության գործում: Օրինական ակնկալիքների պաշտպանությունը իրավական որոշակիության սկզբունքի կարևոր մաս է¹¹: Օրինական ակնկալիքների սկզբունքը վերաբերում է վարչական մարմնի և կոնկրետ անհատի միջև հարաբերություններին: Այս սկզբունքը նշանակում է, որ վարչական վարքագծի արդյունքում առաջացած սպասումները կարող են իրավական հետևանքներ ունենալ: Կամ վարչական մարմինը պետք է հարգի այդ ակնկալիքները, կամ համոզիչ պատճառներ ներկայացնի, թե ինչու պետք է հանրային շահերն առաջնահերթություն ունենան¹²:

Ինչ վերաբերում է քննարկվող սկզբունքի

և վարչարարության համաչափության սկզբունքի հարաբերակցությանը, ապա վարչարարության համաչափության սկզբունքը, հանդիսանալով մարդու իրավունքների պաշտպանության գործիք, կարևոր դեր ունի նաև օրինական ակնկալիքների պաշտպանության գործում: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ օրինական ակնկալիքների պաշտպանությունը բախման մեջ է մտնում այլ շահերի հետ: Այս դեպքում, հատկապես, կարևորություն է ձեռք բերում համաչափության սկզբունքի վերջին՝ չափավորության տարրը, որը պահանջում է կոնկրետ գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ հավասարակշռել մի կողմից օրինական ակնկալիքների, մյուս կողմից՝ հանրային շահերի պաշտպանությունը:

Այս համատեքստում ցանկանում ենք քննարկել 2018 թվականի ապրիլի 7-ի թիվ ՎԴ/0883/05/16 վարչական գործով Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումը: Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է. «... Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավունքի սուբյեկտների, մասնավորապես՝ միջամտող վարչական ակտի հասցեատերերի համար պետք է կանխատեսելի և որոշակի լինի, որ իրենց նկատմամբ ընդունված հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտը ենթակա է լինելու հարկադիր կատարման այդ վարչական ակտի անբողքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում: Ըստ Վճռաբեկ դատարանի եզրահանգման՝ անբողքարկելի վարչական ակտերը հարկադիր կատարման ներկայացնելու ժամկետների վերաբերյալ օրենսդրական հստակ կար-

մասնավոր դրսևորում է: Տե՛ս ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն ընդդեմ «Կրիստալ» ՍՊԸ-ի ՎԴ/65320/03/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.06.2014 թվականի որոշումը:

⁹ Տե՛ս Venice Commission, Opinion on Legal Certainty and the Independence of the Judiciary in Bosnia and Herzegovina, Opinion No. 648 / 2011, Strasbourg, 18 June 2012, պարագրաֆ 24: Հիմնվելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, գիտական հայացքների և իր կարծիքների վրա՝ Վենետիկի հանձնաժողովն առանձանցրել է իրավական որոշակիության հետևյալ պահանջները՝ հրապարակայնություն, ճշգրտություն, հետևողականություն, կայունություն, հետադարձ ուժի բացակայություն և որոշումների վերջնական և պարտադիր ուժ: Այս պահանջներից յուրաքանչյուրի մասին տե՛ս Venice Commission, Opinion on Legal Certainty and the Independence of the Judiciary in Bosnia and Herzegovina, Opinion No. 648 / 2011, Strasbourg, 18 June 2012, պարագրաֆ 27, 28:

¹⁰ Տե՛ս SIGMA Papers, No. 27, European Principles for Public Administration, OECD, 2 rue André-Pascal, 75775 Paris Cedex 16, France, էջ 8:

¹¹ Տե՛ս Venice Commission, Rule of Law Checklist, պարագրաֆ 61:

¹² Տե՛ս Robert Thomas, Legitimate Expectations and Proportionality in Administrative Law, Hart Publishing Oxford and Portland, Oregon, 2000, էջ 41:

գավորումների սահմանումն ուղղակիորեն բխում է իրավական որոշակիության սկզբունքից, քանի որ նշված ժամկետների ավարտից հետո այդ վարչական ակտերը որևէ եղանակով (թե՛ դատական, թե՛ արտադատական) այլևս հարկադիր կատարման ենթակա չեն: ... *Քննարկվող իրավիճակում հանրային իրավական դրամական պահանջի վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտը ընդունած վարչական մարմնի հետագա վարքագիծը կանխատեսելի է դառնում այդ վարչական ակտի հասցեատիրոջ համար, քանի որ վերջինիս մոտ կարող է ձևավորվել համոզմունք առ այն, որ իր նկատմամբ անբողոքարկելի վարչական ակտով առաջադրված հանրային իրավական դրամական պահանջն այլևս չի կարող ներկայացվել հարկադիր կատարման: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական մարմնի վարքագիծը հակասում է ոչ միայն իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, այլ նաև **վարչարարության համաչափության** և **տնտեսավարության սկզբունքներին:**»:*

Այսպիսով, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը հենց վարչարարության համաչափության սկզբունքի, մասնավորապես, չափավորության տարրի կիրառման արդյունք է:

Այս համատեքստում, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև այն դեպքերը, երբ օրինական ակնկալիքների պաշտպանությունը բախման մեջ է մտնում օրինականության սկզբունքի հետ: Այսպես, եթե հանրային մարմնի վարքագիծը (գործողությունը կամ անգործությունը), որն առաջացրել է սպասումը, հակասում է օրենքին կամ ինքնին դուրս է այդ մարմնի լիազորություններից, ապա կարող է, արդյոք, գոյություն ունենալ օրինական ակնկալիք: Այս հարցադրումը ևս պահանջում է որոշակի հավասարակշռում՝ մի կողմից վստահության, որը անհատը փոխկապակցում է սպասումների հետ, և մյուս կողմից՝ վարչական

մարմնի՝ իր օրինական լիազորությունների շրջանակներում գործելու անհրաժեշտության միջև:

Գերմանական վարչական իրավունքում ամրագրված դիրքորոշումն այն է, որ եթե վարչական մարմինն առաջացրել է իր լիազորությունների սահմաններից դուրս եկող ակնկալիքներ, ապա վարչական դատարանը պետք է լուծի բախումը՝ հավասարակշռելով օրինականության շահերը և իրավական որոշակիության շահերը: 1956 թվականի մի գործով որոշվեց, որ այրին Արևելյան Գերմանիայից տեղափոխվել է Արևմտյան Գերմանիա այն բանից հետո, երբ նրան խոստացել են, որ նա իրավունք կունենա սոցիալական նպաստներ ստանալ, և որոնք նա որոշակի ժամանակահատվածում ստացել է: Սակայն հետագայում վարչակազմը որոշել է, որ այդ վճարումներն օրինական չեն եղել: Վճարումները դադարեցվել են, և այրին պետք է վերադարձնել այն, ինչ ստացել էր: Բեռլինի վարչական դատարանը վճռել է, որ օրինականության և իրավական որոշակիության միջև բախումը պետք է կարգավորվի «ad hoc» հավասարակշռման միջոցով¹³: Այս դեպքում, դատարանը որոշել է պաշտպանել այրի կնոջ ակնկալիքները, որ վճարումները կատարվել են օրինական: Այդ որոշման ընդունումից հետո Գերմանիայի վարչական դատավարության մասին 1976 թվականի ակտի նախագծում ներառվել է իրավիճակի այս տեսակը կարգավորող դրոյթ: Հոդված 48 (2)¹⁴-ը նշում է. «Դրամական օգուտ տալու մասին ապօրինի վարչական որոշումը չի կարող չեղյալ համարվել, եթե շահառուն վստահել էր այդ որոշմանը և նրա ակնկալիքները, որոնք գնահատվել են որոշման վերացման հանրային շահերի դեմ, արժանի են պաշտպանության»: Համանման կարգավորում նախատեսված է նաև Օրենքում¹⁵:

Այսպիսով, վարչարարության համաչափության սկզբունքը կարևոր նշանակություն ունի օրինական ակնկալիքների պաշտպանության հարցում: Բոլոր դեպքերում, երբ վարչական

¹³ Sten Decision of the Berlin Oberverwaltungsgericht (1957) 72 Deustches Verwaltungsblatt 503; affirmed by the Federal Administrative Court (Bundesverwaltungsgericht) (1959) 9 BwerGE 251:

¹⁴ Sten M.P. Singh, German Administrative Law in Common Law Perspective (Springer-Verlag, Berlin, 1985), էջ 46:

¹⁵ Օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի:

մարմնի գործողությունը կամ վարչական ակտը (ընտրած միջոցը) վնաս է հասցնելու անձի օրինական ակնկալիքներին, վարչական մարմինը կամ դատարանը, կիրառելով համաչափության սկզբունքը, պետք է որոշի թե արդյո՞ք ձեռք է բերվել պատշաճ հավասարակշռություն հետապնդվող նպատակի և այդ նպատակին հասնելու համար անձի օրինական ակնկալիքներին պատճառվող վնասի միջև: Վարչական մարմինը միջոցը կարող է կիրառել միայն այն դեպքում, երբ համաչափության սկզբունքի հետևողական կիրառման արդյունքում գտնի, որ այդ միջոցները արդարացնում են օրինական ակնկալիքներին միջամտությունը:

Օրինական սպասումները կարող են առաջանալ նաև վարչական պրակտիկայի արդյունքում: Այս համատեքստում անդրադառնալով համաչափության սկզբունքի և իրավական որոշակիության (հատկապես, վերջինիս տարրեր հանդիսացող կանխատեսելիության և օրինական ակնկալիքների պաշտպանության) հարաբերակցությանը, գտնում ենք, որ իրավական որոշակիության սկզբունքը վարչական մարմնից պահանջում է հավատարիմ մնալ սեփական պրակտիկային: Այսպես, երբ վարչական մարմինը համաչափության սկզբունքի բոլոր տարրերի հետևողական կիրառման արդյունքում մարդու իրավունքների սահմանափակման կոնկրետ հարցում ձևավորել է որոշակի պրակտիկա, ապա նա այդ ձևով օրինական ակնկալիք է ձևավորել անձի մոտ, որ իր մասնակցությամբ հարցը նույնպես պետք է լուծվի նույն ձևով:

Վարչարարության համաչափության և օրինական ակնկալիքների պաշտպանության հարաբերակցությունն այսքանով չի սահմանափակվում: Այն դեպքում, երբ վարչական մարմինը ցանկանում է փոխել իր իսկ ձևավորած պրակտիկան, այս դեպքում արդեն վարչական մարմինների կամայականություններից մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորում է համաչափության սկզբունքը, ըստ որի՝ վարչական մարմինի ընտրած միջոցը չպետք է անհամաչափ միջամտի մարդու իրավունքներին: Ընդ որում, այս դեպքում վարչարարության համաչափության սկզբունքը գործում է Օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված կամայականության արգելքի սկզբունքի հետ միասին¹⁶:

Քաղաքականության փոփոխությունը, որը ինչպես արդեն նշվեց, միջամտություն է օրինական ակնկալիքներին, ևս նպատակահարմար է ուսումնասիրել համաչափության սկզբունքի տեսանկյունից: Նախ, Օրենքի 7-րդ հոդվածը պահանջում է, որ վարչական մարմնի քաղաքականության փոփոխությունը կարող է կատարվել գերակա հանրային շահի առկայության դեպքում (համաչափության պատշաճ նպատակի տարր): Բացի այդ, անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք վարչական մարմինը կարող է օգտագործել այլընտրանքային միջոցներ, որոնք հավասարապես կարող են հասնել նույն նպատակին, բայց որոնք նաև չէին դիտարկվի, որպես միջամտություն՝ անհատի ակնկալիքներին (համաչափության անհրաժեշտության տարրի պահանջ): Եվ վերջապես, վարչական մարմինը պետք է հավասարակշռի քաղաքականության փոփոխության արդյունքները և օրինական սպասելիքներին պատճառվող վնասը (համաչափության չափավորության տարրի պահանջ): Եթե գերակա հանրային շահը պահանջում է քաղաքականության փոփոխություն, ապա վարչական մարմինը պետք է որոշի, թե արդյո՞ք օգտագործվող միջոցները արդարացնում են ակնկալիքներին միջամտությունը:

Վարչարարության մյուս հիմնարար սկզբունքը, որի հետ վարչարարության համաչափության սկզբունքը սերտորեն հարաբերակցվում է՝ հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքն է: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը վարչական հայեցողությունը բնորոշում է որպես օրենքով վարչական մարմ-

¹⁶ Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ: Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով: Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում:

նին վերապահված իրավունք՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը: Խոսելով վարչարարության համաչափության և հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքների փոխհարաբերակցության մասին՝ հարկ է նշել, որ օրենքը համաչափության սկզբունքը համարում է հայեցողական լիազորությունների իրավաչափության գնահատման հիմնական միջոցը: Այսպես, օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել վարչարարության իրականացման համաչափության սկզբունքով: Ասվածի համատեքստում հարկ է նաև նկատել, որ «հնարավոր լուծում» եզրույթը հարկ է ընկալել ոչ միայն այն լուծումների շրջանակում, որոնք ուղղակիորեն նախատեսված են օրենքով, այլ նաև այն լուծումները, որոնք բխում են օրենսդրությունից, ինչն էլ առավել իրատեսական է դարձնում համաչափության սկզբունքի կիրառումը:

Վարչարարության հաջորդ կարևոր սկզբունքը տնտեսվարության սկզբունք է: Օրենքի 11-րդ հոդվածը նախատեսում է, որ վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը: Այսօր ֆինանսական սահմանափակումների պատճառով շատ պետություններում ավելի մեծ ուշադրություն է դարձվում հանրային ծառայությունների մատուցելիս պետական կառավարման մարմինների տնտեսվար և արդյունավետ աշխատանքին¹⁷:

Անդրադառնալով վարչարարության համաչափության և տնտեսվարության սկզբունքների հարաբերակցությանը, պետք է նշենք, որ համաչափության սկզբունքի վերջին՝ չափավորության տարրը ներառում է նաև տնտեսվարության պահանջը: Պետք է նկատի ունենալ,

որ իրավաբանական գրականության մեջ համաչափության սկզբունքը ներկայացվում է որպես տնտեսական արդյունավետության սկզբունք, իսկ սկզբունքի վերջին՝ չափավորություն տարրը հաճախ անվանվում է հենց «ծախսարդյունքի» վերլուծություն¹⁸: Համաչափության չափավորության տարրը պահանջում է շահերի հավասարակշռում (հետևաբար, ներգրավված յուրաքանչյուր շահերի հետ կապված օգուտների և ծախսերի) այնպես, որ որոշակի իրավունքի սահմանափակման արդյունքում ձեռք բերվող օգուտները գերակշռեն առաջացած ծախսերը:

Մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության համատեքստում տնտեսվարության և համաչափության սկզբունքների փոխհարաբերակցությունը որոշակի հետաքրքրություն է ձեռք բերում այն հարցը, թե արդյո՞ք տնտեսվարության նկատառումները պատշաճ նպատակ են կամ կարելի է արդյո՞ք պատշաճ նպատակ համարել բյուջետային նկատառումները: Այս հարցը բարձրացվել է և բավականին մանրամասն քննարկվել է Կանադայի Գերագույն դատարանում Սինգհի գործով¹⁹, որտեղ դատարանը քննել է այն հարցը, թե արդյո՞ք յուրաքանչյուր անձի, ով խնդրել է տրամադրել փախստականի կարգավիճակ Կանադայում, պետք է տրվի լաված լինելու իրավունք: Պետությունը պնդում էր, որ հազարավոր պոտենցիալ փախստականներից յուրաքանչյուրին նման իրավունքի տրամադրումը ամեն տարի չափազանց ծանր բեռ կլինի պետական բյուջեի համար: Այս փաստարկը մերժվել է: Իր կարծիքում դատավոր Ուիլսոնը բացատրել է. «Ես լուրջ կասկածներ ունեմ, որ պարոն Բուրի առաջադրած օգտապաշտական նկատառումները կարող են արդարացում ծառայել Խարտիայով ամրագրված իրավունքների սահմանափակման համար: Բնականաբար, Խարտիայի երաշխիքները երևակայական կլինեին, եթե դրանք հնարավոր լինեին անտեսել, քանի որ դա հարմար կլինեին վարչական տեսանկյունից:»²⁰: Սակայն Սինգհի գործից հետո Կանա-

¹⁷ Տե՛ս SIGMA Papers, No. 27, European Principles for Public Administration, OECD, 2 rue André-Pascal, 75775 Paris Cedex 16, France, էջ 13:

¹⁸ Տե՛ս Portuese A., Principle of Proportionality as Principle of Economic Efficiency. European Law Journal, 19(5), (2013):

¹⁹ Տե՛ս Singh v. Minister of Employment and Immigration [1985] 1 SCR 177:

²⁰ Տե՛ս նույն գործով, պարագրաֆ 70:

դայի Գերագույն դատարանը ընդունել է, որ կարող են լինել որոշ դեպքեր, երբ ծախսերը կդիտարկվեն իբրև ավելորդ²¹, կամ կհանգեցնեն ֆինանսական ճգնաժամի²², այնպես, որ սահմանադրական իրավունքի սահմանափակումը կարող է արդարացված լինել:

Ինչ վերաբերում է Վճռաբեկ դատարանին, ապա 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով դատարանն ուղղակիորեն նշել է. «Վարույթի մասնակցի լաված լինելու իրավունքի սահմանափակման համար իրավաչափ հիմք չի կարող հանդիսանալ նույնիսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածում ամրագրված վարչական մարմնի արագ գործելու պարտականության կատարման անհրաժեշտությունը, քանի որ վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու օրենսդրական պահանջի կատարումը չի կարող տեղի ունենալ ի վնաս վարչական վարույթի ընթացքում անձի լաված լինելու իրավունքի պատշաճ իրացման»²³:

Տնտեսվարության կամ ինչպես նշվում է նաև «վարչական արդյունավետության» վերաբերյալ գործերի այս շարքից բխող եզրակացությունն այն է, որ քանի որ ժողովրդավարական հասարակությունները մեծ նշանակություն են տալիս մարդու իրավունքներին, ելակետ պետք է ընդունել այն, որ այդ իրավունքները առաջնահերթություն ստանան ազգային բյուջետային գործընթացում²⁴: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ տնտեսվարությունը կամ բյուջետային սահմանափակումները չեն կարող բացառվել որպես պատշաճ նկատառումներ,

որոնք պետք է հավասարակշռված լինեն հանրային շահերի շրջանակներում, քանի որ կան հանգամանքներ, երբ տնտեսական նպատակը բավարար կհամարվի մարդու իրավունքների սահմանափակումներն արդարացնելու համար:

Ընդհանրացնելով վերոշարադրվածը՝ կարող ենք եզրակացնել, որ վարչարարության համաչափության սկզբունքը սերտորեն կապված և փոխհարաբերակցվում է վարչարարության մյուս, մասնավորապես, վարչարարության օրինականության, իրավական որոշակիության և օրինական ակնկալիքների պաշտպանության, կամայականության արգելման, հայեցողական լիազորությունների սահմանափակման և տնտեսվարության սկզբունքների հետ: Վարչարարության համաչափության սկզբունքը մի դեպքում փոխլրացնում է վարչարարության մյուս սկզբունքներին, մյուս կողմից վարչարարության մյուս սկզբունքները անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում այս սկզբունքի հետևողական և կայուն կիրառման համար: Ինչպես նշում է համաչափության սկզբունքի ուսումնասիրության գործում ամենամեծ ներդրում ունեցող հեղինակ Ալեքսին. «Համաչափության սկզբունքը շատ յուրահատուկ բնույթ ունի այլ սկզբունքների շարքում, քանի որ համաչափության սկզբունքը բնորոշ է այլ սկզբունքների բնույթին և հակառակը»²⁵:

Այսպիսով, գտնում ենք, որ համաչափության սկզբունքը ներդաշնակորեն գործում է վարչարարության նշված սկզբունքների հետ՝ ապահովելով մարդու սահմանադրական իրավունքների համակողմանի պաշտպանությունը:



²¹ Տե՛ս Hogg, P. W., Constitutional Law of Canada, 5th edn., vol. II (Toronto: Thomson Carswell, 2007), էջ 140, M. P. Singh, German Administrative Law in Common Law Perspective, 2nd edn. (Berlin: Springer, 2001), էջ 202:
²² Տե՛ս Newfoundland (Treasury Board) v. N APE [2004] 3 SCR 381:
²³ Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ՎԴ/5539/05/11 վարչական գործով որոշումը:
²⁴ Տե՛ս L. Weinrib, “The Supreme Court of Canada and Section 1 of the Charter,” 10 Sup. Ct. L. Rev. 469 (1988), էջ 486:
²⁵ Տե՛ս R. Alexy, A Theory of Constitutional Rights (Oxford University Press, 2002), էջ 66:

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Իրավական համակարգերը մեծ ուշադրություն են հատկացնում սեփականության պաշտպանությանը: Այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ «սեփականության իրավունք» հասկացությունը առանցքային դեր է խաղում օրենքով ճանաչված այլ տարատեսակ իրավունքների շարքում: Սակայն ամենամանրակրկիտ վերլուծությունը հնարավորություն չի տվել սահմանել չափորոշիչներ, որոնց օգնությամբ հնարավոր է հստակ տալ «սեփականության իրավունք» հասկացության մեկնաբանությունը, չնայած շատ բան է արվել նրա համար, որպեսզի չեզոքացվեն որոշակի սխալներ, անհստակություններ և խեղաթյուրումներ:

Սեփականությունը և սեփականության իրավունքը

Ամենից առաջ անհրաժեշտ է տարբերակել սեփականության իրավունքը՝ այդ իրավունքի օբյեկտից: Դրա հետ կապված՝ «սեփականություն» տերմինի կիրառությունը որոշակի շփոթություն է առաջացրել¹: Այսպես, հողատարածքը, գիրքը, ավտոմեքենան սովորական մարդու և իրավաբանի կողմից դիտարկվում են որպես սեփականության ձևեր և այնպիսի նյութական օբյեկտների իմաստով, որոնց նկատմամբ կարելի է իրականացնել սեփականության իրավունքը, և որպես կոնկրետ սեփականատերերի ժառանգության հատված, իսկ, հետևաբար, դրանում ընդգրկված առարկաների նկատմամբ՝ իրավունքների համախումբ: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ չնայած «սեփականություն» տերմինը հաճախ կիրառվում է այդ՝ բավականին ընդլայնական իմաստով, ինչպես առարկաների, այնպես նաև վերջիններիս նկատմամբ իրավունքների նշման համար, «սեփականության իրավունք» հասկացությունը տար-

բերվում է նյութական ցանկացած առարկայից, քանի որ հանդիսանում է ընդամենը իրավական նորմերի ամբողջական շարքի ազդեցության արդյունքում ծագած իրավահարաբերության արտահայտող: Դա ակնհայտ է դառնում նրա գիտակցմամբ, որ ժամանակակից իրավունքի մեջ գոյություն ունեն «սեփականությունների» բազմաթիվ տիպեր, որոնք հնարավոր է հարաբերակցել անմիջապես որոշակի նյութական օբյեկտների հետ: Նման սեփականությունների օրինակներ հանդիսանում են հեղինակային իրավունքը և արտոնագրերը, որոնք իրենցից ներկայացնում են առաջին հայտնագործողի կամ սեփական հայտանագործության արտադրման, կամ գրքի հրատարակման հեղինակի իրավունքը (նման արտադրության կամ հրատարակության ցանկացած կոնկրետ արդյունքի սեփականության իրավունքը հանդիսանում է, իհարկե, բացարձակ իրավունք): Որևէ ընկերության բաժնետոմսերի սեփականության վերաբերյալ արտոնագիրը կարելի է դիտարկել որպես տվյալ փաստաթղթի նկատմամբ սեփականության իրավունքի օբյեկտ: Սակայն փաստացի այն կարևոր իրավունքները, որոնցով այն օժտում է ֆինանսական տեսանկյունից, դասվում են բացարձակ անշոշափելի առարկաներին, ինչպիսիք են՝ դիվիդենդների ձևով ժամանակ առ ժամանակ շահույթի մի հատվածի, իսկ վերջնական արդյունքում, ընկերության ակտիվների արժեքի մասնաբաժնի ստացումը՝ դրա պոտենցիալ հնարավոր բաժանման դեպքում: Եվ բոլոր դեպքերում, չպետք է մոռանալ, որ նյութական առարկայի նկատմամբ սեփականության իրավունքը, ինչպես ասենք հողատարածքը կամ ապրանքը, նույնքան «անշոշափելի» է, որքան արտոնագրի սեփականության իրավունքը, քանի որ երկուսն էլ իրենցից ներկայացնում են ուղղակի օրինական իրավունք-

¹ Стэн Бетелл Том.Собственность и процветание.М.,2008.

ների տարատեսակներ՝ անկախ համապատասխան օբյեկտից, որի վրա տարածվում է են դրանց գործողությունները:

«Իրավունքի» նկատմամբ սեփականության իրավունքը

Հավասարազոր շփոթության է մատնում նաև սեփականության իրավունքի հասկացությունը կիրառական իրավունքի ցանկացած այլ տեսակի նկատմամբ: Այսպես, ցանկացած իրավունքի մասին, հանդիսանա այն սեփականության, կամ որևէ այլ իրավունք, կարելի է ասել, որ այն հանդիսանում է կոնկրետ անձի «սեփականություն» կամ որ այն փոխանցում են մեկ անձից մյուսին²: Օրինակ, պայմանագրով պարտավորված պարտքի կամ հեղինակային իրավունքի սեփականատիրոջ կողմից տրամադրված գրքի հրատարակման արտոնագրի մասին կարելի է ասել, որ դրանք հանդիսանում են վարկառուի կամ արտոնագրի տիրոջ սեփականություն և կարող են նրանց կողմից որպես սեփականություն փոխանցվել այլ անձանց: Դա չի նշանակում, որ այսպես կոչված բոլոր «օրինական իրավունքները» կարող են փոխանցվել այլ անձանց, քանի որ որոշ իրավունքներ իրենց բնույթի ուժով բացահայտ փոխանցվող չեն, ինչպես, օրինակ, հեղինակային իրավունքը: Հաճախ իրավունքները չեն կարող փոխանցվել հանրային կարգի վերաբերյալ վերապահման ուժով կամ որևէ այլ պատճառով. օրինակ, իրավախախտման արդյունքում հատուցման պահանջի իրավունքի դեպքում (մասնավորապես՝ ըստ ծայրահեղ անհրաժեշտության ժամանակ պատճառված վնասի հատուցման մասին հայցը): Բաց թողնելով իրավունքի չփոխանցվելու թեման, ինչի նկատմամբ սովորաբար չի կիրառվում սեփականության իրավունքի հասկացությունը՝ կարելի է պնդել, որ իրավունքը հիմնականում ունակ է հանդիսանալ սեփականության օբյեկտ: Դա, սակայն, նշանակում է, որ իրավունքը իրականացվում է կոնկրետ անձանց կողմից, ովքեր էլ կարող են անվանվել այդ իրավունքների «սե-

փականատերեր»: Այս ընդհանուր իմաստով հղումն առ սեփականատիրոջը որևէ բան չի ասում կոնկրետ փոխանցված իրավունքի բնույթի վերաբերյալ, և այն անհրաժեշտ է չչփոթել սեփականության իրավունքի այն կոնկրետ տեսակների հետ, որոնք դիտարկվում են որպես «սեփականության իրավունք» և որոնց մասին այստեղ խոսք է գնում: Իսկապես, նման կրկնակի իմաստով «սեփականատեր» տերմինի կիրառության դեպքում ձևավորված խառնաշփոթը միանգամից բացահայտվում է, երբ գիտակցում ես, որ եթե տվյալ տերմինը կիրառվում է համապարփակ ձևով, ապա անհրաժեշտ է խոսել գույքային իրավունքի մասին (owner of a proprietary right) որպես «սեփականության իրավունքի» «սեփականատիրոջ» մասին³: Այս արժույթը սովորաբար շրջանցում են, սակայն բարդությունները մնում են, քանի որ, օրինակ, անգլերենում բացակայում է ցանկացած կոնկրետ իրավունքի իրականացմանը լիազորված անձի նշման համար համապատասխան համարժեքը⁴: Երբեմն նրան անվանում են «տիրապետող» և «տնօրինող», սակայն լեզվաբանական տեսանկյուններից «սեփականատեր» տերմինը հաճախ իրենից ներկայացնում է պահանջվող իմաստի արտահայտման համար առավել բնական համարժեք եզրույթ:

Եթե հիմա շեղվենք այս ամբողջ խառնաշփոթից, որ սեփականության իրավունքը լիարժեք զգայական առարկայի նկատմամբ ծնում է անզգայական իրավունք, կամ որպես ցանկացած անձի իրավունքի նկատմամբ որոշակի հարաբերության դիտարկման փորձի արդյունքում, ապա կմնա առարկայական իրավունքի հատուկ չափորոշիչների սահմանման խնդիրը, և վերջիններս առավել ճիշտ կլինեն անվանել «սեփականության իրավունքի ձևեր»:

Ազդու՞մ է արդյոք սեփականության իրավունքը «առարկայի» վրա՞ բացարձակ իրավունքով

Տվյալ խնդրին մոտեցումներից մեկն է սեփականության իրավունքին, ինչպես նյութա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 122, 2021

² Մանրամասն տե՛ս Толстой Ю.К.К. учению о праве собственности Правоведение, 1992.№ 1:

³ Տե՛ս Суханов Е.А. Лекции о праве собственности.М.,1991.

⁴ Մանրամասն տե՛ս Нарышкина Р.Л. Доверительная собственность в гражданском праве Англии и США.М.,1965

կան, այնպես էլ ոչ նյութական հանդիսացող որոշակի առարկայի նկատմամբ՝ որպես բացարձակ իրավունք, վերաբերմունքը: Միանգամից ծագում է երկու առարկություն: Առաջինը. որպես սեփականության իրավունքի օբյեկտ՝ ոչ առարկայական իրի գաղափարը հանդիսանում է ընդամենը հեղինակային իրավունքների կամ արտոնագրերի վերաբերյալ բարդությունների շրջանցման փորձ: Սակայն, փաստացի, ինչպես արդեն նշվել է վերևում, նման իրավիճակներում գոյություն ունեն նույնականացմանը ենթակա սեփականության օբյեկտներ, բացի օրինական շահերից: Եվ այդ իսկ պատճառով տվյալ սահմանումը հավասարազոր է այն պնդմանը, որ գոյություն ունի օրինական իրավունքների նկատմամբ բացարձակ իրավունք, իսկ այն իր հերթին նույնական է «բացարձակ օրինական իրավունքներին»: Երկրորդը. բացարձակության հասկացությունը ներածվում է նրա համար, որ ընդգծվի իրավունքի անսահմանափակ բնույթը (նա կարող է անել ինչ ցանկանում է իր առարկայի հետ): Այս չափորոշիչը պիտանի չէ երկու պատճառների ուժով, իսկ հատկապես՝ քանի որ սեփականության իրավունքը կարող է լիարժեք զուրկ լինել օգտագործման և հսկման տարրերից և բոլոր դեպքերում մնալ նմանատիպ, և այն պատճառով, որ իրավունքում առկա չէ այնպիսի առարկա, ինչպիսիք են անսահմանափակ իրավունքները, և օրենքը պարտադիր սահմանափակումներ կղնի սեփականության օգտագործման և տնօրինման վրա: Նախկինում իրավական համակարգերում հիմնական սահմանափակումները բխում էին քրեական իրավունքի ոլորտներից, սակայն մեր օրերում սեփականության հանրային - իրավական ասպեկտի բուռն զարգացումը բավականին նեղ շրջանակներով սահմանափակել է սեփականատերերի պոտենցիալ ազատությունները⁵: Կարելի է բերել ընդամենը նրա մեկ օրինակ, թե ինչ աստիճանով է հողի սեփականատերը սահմանափակված իր հողատարածքի՝ ինչպես ներկա պահին, այնպես էլ ապագայում՝ օգտագործման, տիրապետման և տնօրինման եղանակի նկատմամբ քաղաքային պլանավորման կանոնների և սկզբունք-

ների, շինարարական նորմերի և ստանդարտների ամբողջ համախմբով, ինչպես նաև պետական տարբեր մարմինների կողմից հողատարածքի հարկադիր գնման հնարավորությամբ: Սակայն այն համոզիչ կերպով վկայում է, որ սեփականության իրավունքը հիմնականում և ամբողջականորեն հանդիսանում է ոչ այնքան մարդու՝ իրեն պատկանող սեփականության հետ ցանկացած բան անելու անձնական ազատություն, որքան իր բնույթի ուժով մնացորդային իրավունք, որը մնում է մնացյալ բոլոր համապատասխան իրավունքների և սահմանափակումների պատշաճ հաշվառումից հետո:

«Գույքային իրավունք» (Rights “in rem”)

Սեփականության իրավունքին այլ մոտեցումը կայանում է ոչ այնքան իրավունքի բովանդակության, որքան դրա ազդեցության ոլորտի հաշվառումը: Դա իր արտահայտումն է ստանում ավանդական տերմինաբանությունում (մինչ այսօր իրավաբանների կողմից կիրառվող), որը տարբերակում է in rem (առարկային վերաբերող) իրավունքները և in personam (անձին վերաբերող) իրավունքները⁶: Այս տարանջատման հիմքում ընկած գաղափարի համաձայն, որոշակի իրավունքներ իրականացվում են միայն որոշակի անձանց և անձանց հստակ սահմանված խմբի, այն դեպքում, երբ այլ իրավունքներ գործում են բոլորի և յուրաքանչյուրի նկատմամբ: Պայմանագրով սահմանված պարտքի մարման պահանջները կամ վնասի հատուցման մասին հայցը կարող են ներկայացվել դատական կարգով միայն պարտապանի կամ իրավախախտողի նկատմամբ, այն դեպքում երբ սեփականության իրավունքը տարածվում է բոլորի և յուրաքանչյուրի նկատմամբ: Դա, իհարկե, բավականին կարևոր տարբերություն է, բայց ինքնին այն չի հանդիսանում սեփականության իրավունքի սահմանման արդյունավետ միջոց, քանի որ, մի կողմից, գոյություն ունեն ինչ-որ իրավունքներ, որոնք չի կարելի դասակարգել իրավաբանական տեսանկյունից սեփականության իրավունքի որա-

⁵ Տե՛ս Бетелл Том. Собственность и процветание.М., 2008.

⁶ Տե՛ս Толстой Ю.К. к учению о праве собственности Правоведение,1992,№1,с.6

կով, սակայն որոնք բոլոր դեպքերում հարկադիր կերպով կարող են իրականացվել բոլորի նկատմամբ՝ ներառելով նաև սեփականատիրոջը: Դրա օրինակներից մեկն է էքսկյուզիվ արտոնագիրը, որը տրամադրվում է հեղինակային իրավունքի սեփականատիրոջը: Մյուս կողմից, նույնիսկ սեփականության իրավունքը չի կարող հարկադրաբար իրականացվել՝ առանց բացառության բոլոր դեպքերում, օրինակ «առևտրային գործակալի» կողմից այլ անձին կամ «բաց շուկայում» ապրանքի անիրավաչափ վաճառքի դեպքում: Դրա հետ կապված, մտավախություն է ծնում այն փաստը, որ դարեր ի վեր, օրինակ, անգլիական իրավունքում գոյություն ունեն սեփականատերերի երկու տարբեր կատեգորիաներ՝ հայտնի որպես ըստ ընդհանուր իրավունքի և ըստ արդարության իրավունքի սեփականատերեր⁷: Սեփականատերերի վերջին կատեգորիան ծագել է այսպես կոչված «կամավոր սեփականության» (“trust”) ծագման հետ կապված: Լիազորման (թրասթի) ինստիտուտը, որը հանդիսանում է սեփականության ժամանակակից իրավունքի հիմնական գիծ՝ ընդհանուր իրավունքի բոլոր համակարգերում, ապահովում է լիազորված անձին կամ անձանց՝ սեփականության նկատմամբ իրավունքներով, սակայն շահառուի, այն անձի շահերում նրա կամ նրանց կողմից այդ սեփականության պահպանության կամ տնօրինման պայմաններով, ի օգուտ ում ստեղծվել է տվյալ «թրասթը», և ով ըստ էության հանդիսանում է իրական սեփականատերը: Սակայն նման իրավիճակում լիազորված անձինք օժտված են սեփականության լիարժեք օրինական իրավունքով, իսկ արդարության իրավունքի նկատմամբ շահառուի կարգավիճակը կարող է չեզոքացվել, եթե լիազորված անձանց կողմից սեփականությունը վաճառվում է դրա համար լավ գին վճարող գնորդին, ով լիովին անտեղյակ է այդ սեփականության լիազորված կառավարման առկայությունից:

Իրականում, չնայած սեփականության իրավունքը հանդիսանում է իրավունքի ամենակարևոր հասկացություններից մեկը, այն չի կարող հանգեցվել մեկ այլ առանցքային գաղափարի: Փաստացի դրա իմաստը և արժեքը

այնքան ընդլայնական են, իսկ դետալները՝ բարդ, որ ժամանակակից իրավունքում դրա դերը լիարժեք կգիտակցվի բոլորի փոխկապակցված իրավական նորմերի և սկզբունքների, դրանց բաղադրիչների գործող իրավական համակարգի համատեքստում, մանրակրկիտ վերլուծության արդյունքում: Շարադրվածը սակայն չի նշանակում, որ այդ՝ բավականին քառասային նորմերի զանգվածի որոշակի դասակարգումը չի նպաստի որպես այդպիսին սեփականության իրավունքի հասկացության ներքին իմաստի առավել լավ գիտակցմանը:

Սեփականության իրավունքը՝ որպես իրավունքների «համախումբ»

Սեփականության իրավունքը չի հանդիսանում «օրինական իրավունքի» միակ կատեգորիա, այլ իրենից ներկայացնում է իրավունքների համախումբ, բարդ համալիր, որոնց հստակ բնույթը և բովանդակությունը տատանվում են իրավական մեկ համակարգից մյուսը: Իրավունքների այս համախումբը ստորաբաժանվում է երկու կատեգորիաների՝ մեկը՝ դասվող նրան, ինչը կարելի է անվանել «իրավական տիտղոսի արմատ», իսկ մյուսը՝ «շահառուի» սեփականության իրավունքներին: Այս երկուսից առաջինը հանդիսանում է առավել արժեքավոր: Այստեղ իմաստը նրանում է, որ կոնկրետ օբյեկտի (ոչ պարտադիր նյութականի) նկատմամբ իրականացվող որոշակի իրավունքը, որը կարելի է դիտարկել ֆինանսական շահի կամ դրամական արժեքի տեսանկյունից, և որը կարող է իրականացվել ամբողջ հասարակության նկատմամբ, համարվում է իրավունքի օբյեկտի կամ տվյալ «առարկայի» նկատմամբ իրավական տիտղոսը կրող անձին պատկանող: Եթե նման տեսակի յուրաքանչյուր պոտենցիալ իրավունք ենթարկվեր գրանցման որոշակի համակարգի, այդ դեպքում նախնական սեփականատերը կարող էր դիտարկել առաջին շահագրգիռ անձի որակով, իսկ տվյալ պահի փաստացի սեփականատերը՝ որպես ձեռք բերման օրինական եղանակներից մեկով, ինչպես առք-վաճառք, նվիրատվություն, ժառանգություն և այլն, տվյալ անձից իրավա-

⁷ Մանրամասն տե՛ս Навышкина Р.Л. Доверительная собственность в гражданском праве Англии и США. М., 1965:

կան տիտղոս ստացող: Սակայն քանի որ որևէ իրավական համակարգ գործնականում ունակ չէ իրականացնել նման գրանցում (չնայած վերջին ժամանակներում լայն տարածում է ստացել հողի և սեփականության որոշ այլ տեսակների, ինչպես օրինակ՝ ընկերության բաժնետոմսերի նկատմամբ իրավական տիտղոսների գրանցումը), իրավունքը ստիպված է դիտել իրավական տիտղոսի աղբյուրի սահմանման այլ եղանակներ: Այդ իսկ պատճառով սեփականության իրավունքում տնօրինման գաղափարը խաղում է այդպիսի կարևոր դեր, քանի որ իրավական համակարգերն ունեն տիրապետումը՝ որպես իրավական տիտղոսի օրինականության ծանրակշիռ ապացույց դիտարկման տենդենցներ⁸: Այստեղից «possession vaut titre» («տիրապետումը հավասար է տիտղոսին») դոկտրինան կամ, ինչպես ասվում է Ժողովրդի մոտ՝ «տիրապետել նշանակում է ունենալ օրինական միավորներ»: Եվ բոլոր դեպքերում, տիրապետումը, ի տարբերություն գրանցման, չի կարող դիտարկվել իրավական տիտղոսի համոզիչ ապացույցի որակով, սակայն միշտ պետք է հարաբերակցվի դրա ձեռքբերման հանգամանքների հետ: Դրա հետ կապված՝ իրավաբանը տարբերակում է իրական և փաստացի տիրապետում, «տիրապետման իրավունք»: Եթե, օրինակ, ինչ-որ անձ տնօրինում է սեփականությամբ, իսկ այլ անձ բռնի ուժով (կիրառելով ֆիզիկական ուժ) խլում է դա, վերջինս նման կերպ կարող է ձեռք բերել փաստացի տիրապետում, սակայն դրա իրավունքը բոլոր դեպքերում կարող է պատկանել առաջինին, ով էլ դատարանի միջոցով կարող է պահանջել սեփականության վերադարձ՝ վերջինիս նկատմամբ իր նախկին տիրապետման հիմքերով:

Շահառուի սեփականության լիազորային իրավունքը՝ ըստ արդարության իրավունքի

Շահառուի սեփականության իրավունքի հասկացությունը կապված է տարբեր եղանակների հետ, որոնց օգնությամբ սեփականատերը կարող է իրականացնել իր օբյեկտի նկատմամբ որոշակի լիազորություններ կամ «ազա-

տություններ»: Այն ներառում է գործողությունների լայն դիապազոն, ինչպես լիազորված սեփականության օգտագործումը կամ տիրապետումը, դրա՝ մյուսների կողմից տիրապետման արգելքը և նույնիսկ նյութական առարկայի ոչնչացումը: Նման լիազորությունները, չնայած հանդիսանում են, լայն հանրության տեսանկյունով, սեփականության իրավունքի հասկացության հիմնական իմաստ, սովորաբար կարող են օտարվել գույքային տիտղոսի սկզբնաղբյուրից, և որպես դրա հետևանք իրական սեփականատերը զրկվում է այդ կարգավիճակի բոլոր շահերից և առավելություններից: Հատկապես այդպիսին է ըստ արդարության իրավունքի սեփականության իրավունքով օժտված շահառուի շահերում՝ նրա գույքին տիրապետող և դրանով տնօրինող լիազորված սեփականատիրոջ կարգավիճակը: Նրա կարգավիճակը նույնական է վարձակալի կարգավիճակին, ով կառուցապատման համար 99 տարով վարձակալել է հողատարածք, սեփականատիրոջ նկատմամբ, ում պարտավորվում է վճարել «անվանական» վարձավճար: Իսկապես, հատկապես ընդհանուր իրավունքի համակարգի համար առավել բնորոշ է նման կերպ զատել սեփականության իրավունքի «շահավետ ձեռքբերման» ասպեկտը: Դա էական ճկունություն է հաղորդում անգլիական գույքային իրավունքին, սակայն միաժամանակ անխուսափելի բարդեցնում այն: Այսպես կոչված «խիստ կարգավորումը», որի համապատասխան հողի սեփականության իրավունքը բաժանվում է ցմահ վարձակալների ժառանգման և հողի նկատմամբ այլ ապագա իրավունքների միջև, մեծ դեր կխաղար անգլիական հասարակության ձևավորման մեջ, չնայած դրա ազդեցությունը մեր օրերում բացատրվում է առավել շուտ հարկային դատողություններով, քան հողի նկատմամբ ընտանեկան հսկողության պահպանման մասին հոգացությամբ: Մյուս կողմից, քաղաքացիական իրավունքի համակարգերն ունեն Հռոմեական իրավունքին հետևելու միտումներ և այդ իսկ պատճառով չեն դիտարկվել որպես հիմք՝ սեփականության իրավունքի՝ այդքան պարզ բաժանման համար: Ժամանակակից մայրցամաքային իրավունքի համար ծանոթ չէ

⁸ Տե՛ս. Суханов Е.А. Лекции о праве собственности. М., 1991.

լիազորված սեփականության (թրասթի) անգլիական ինստիտուտը: Եվ այն դիտարկում է վարձակալությունը ոչ որպես սեփականության իրավունքի ձևերից մեկը, այլ որպես պայմանագրային իրավունքի տարատեսակ: Սակայն ամուսնա-ընտանեկան հարաբերությունների ոլորտում մայրցամաքային իրավունքը հանդիսացավ առավել ճկուն՝ սեփականության իրավունքի հասկացության նկատմամբ իր վերա-

բերմունքում: Այստեղ այն ցուցադրեց կնոջ և ամուսնու՝ իրենց ընդհանուր սեփականությունում ընտանեկան իրավունքների հնարավոր տեսակների ընդունման իրենց պատրաստակամությունը՝ ի տարբերություն ընդհանուր իրավունքի կոշտ դիրքորոշման, որի համաձայն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը համարվում է առանձին:



МИЛЕНА САРГСЯН

Магистрант 2-ого курса Института Права и
 Политики Российско-Армянского (Славянского) университета
 по направлению «Корпоративный юрист»

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ПРИЗНАНИЯ НЕСОСТОЯВШИХСЯ ТОРГОВ НЕДЕЙСТВИТЕЛЬНЫМИ

Институт торгов, будучи в немалой степени исследованным доктриной гражданского права, содержит много проблемных вопросов, ответов на которые либо до сих пор не получено, либо ответы существуют в условиях противоречия между выработанными учеными и практикой подходами.

Учитывая сложный механизм проведения торгов и возможную дефектность их той или иной стадии, законодатель Республики Армения допустил возможность «отмены» порожденных ими правовых последствий. Так, в соответствии с частью 1 статьи 465 Гражданского кодекса Республики Армения (далее - ГК РА) торги, проведенные с нарушением правил, установленных законом, могут быть признаны недействительными по иску заинтересованного лица. При этом признание торгов недействительными влечет недействительность договора, заключенного с лицом, выигравшим торги.

Анализ законодательства Республики Армения показывает, что, помимо недействительности, выделяется также понятие несостоявшихся торгов. Однако данное понятие никоим образом не раскрывается, и законодатель ограничивается только закреплением оснований для признания торгов несостоявшимися. Законом Республики Армения «О публичных торгах» (далее - Закон) предусматриваются следующие основания:

- 1) ни один покупатель не явился на аукцион,
- 2) лицо, признанное победителем аукциона, или организатор аукциона отказались от подписания протокола о результатах торгов,
- 3) лицо, признанное победителем аукциона, не оплатило в установленный срок цену покупки лота;
- 4) в процессе аукциона не было произведено повышения стартовой цены лота;

5) на участие в конкурсе не подано ни одной заявки;

6) ни один из поданных заявок не соответствует требованиям, указанным в публичном извещении о конкурсе, а также если подача заявок не соответствовала требованиям закона и публичного извещения о конкурсе;

7) по причине чрезвычайных ситуаций становится невозможным исполнение предусмотренных конкурсом работ или оказание услуг.

Закон предусматривает конкретные правовые последствия для несостоявшихся торгов. В связи с этим предлагаем обратить внимание, например, на следующие положения Закона:

1. В соответствии с частью 3 статьи 15 в случае признания аукциона несостоявшимся условия последующего аукциона, в том числе стартовая цена, могут быть изменены.

2. В соответствии с частью 2 статьи 35, касающейся второго и последующих принудительных аукционов, если аукцион не состоялся вследствие отсутствия покупателей или того, что не было произведено повышения стартовой цены лота, то при организации второго аукциона цена лота уменьшается на 10 % стартовой цены предыдущего аукциона. Если аукцион не состоялся по тем же причинам, то при организации третьего и каждого последующего аукционов цена лота уменьшается на 10 % цены, установленной принудительным исполнителем для предыдущего лота.

3. В соответствии с частью 10 статьи 35, если после четвертого аукциона лот не продается, то принудительный исполнитель вправе реализовать его путем прямой продажи в установленном законом порядке.

Учитывая вышеуказанное, можно сказать, что возможны случаи, когда объявлением торгов несостоявшимися и наступлением в результате

этого установленных законом правовых последствий права и интересы заинтересованного лица будут нарушены. Так, например, если в результате неправомερных действий принудительного исполнителя (нарушения правил извещения о торгах) ни один покупатель не явился на аукцион, после чего цена лота уменьшилась на 10% стартовой цены предыдущего аукциона, либо не состоялись также второй и третий аукционы, а после четвертого аукциона лот был реализован путем прямой продажи, то тем самым могут быть нарушены права должника, имущество которого реализуется посредством аукциона. Или, например, права заинтересованного лица, являющегося потенциальным участником аукциона или собственником продаваемого имущества, могут быть нарушены в случае, когда в результате неправомερных действий организатора аукцион не состоялся, лицо лишилось возможности реализовать своё право на участие в нем, а последующий аукцион может быть проведен только с изменением некоторых условий аукциона, в том числе стартовой цены.

Causa qua supra (по указанной выше причине) возникает вопрос: может ли лицо, права и интересы которого были нарушены проведенными торгами, потребовать признания несостоявшихся торгов недействительными? Или же недействительные торги не могут быть признаны несостоявшимися по аналогии с запретом признания незаключенных сделок недействительными. К сожалению, ответа на этот вопрос законодательство Республики Армения не содержит, а соответствующая судебная практика отсутствует.

В гражданско-правовой доктрине прева-лирует мнение о том, что несостоявшиеся торги не могут быть признаны недействительными аналогично тому, что незаключенная сделка не может быть признана недействительной. Отмечается, что: «Несостоявшиеся торги – это торги, которые фактически проведены, но правовой силы изначально не имели. Несосто-

явшиеся торги не могут быть признаны недействительными, так как отсутствует сам предмет спора. Общим в правовой природе недействительных и несостоявшихся торгов является то, что они представляют собой несуществующие юридические факты. Поэтому единственным правовым последствием как недействительных, так и несостоявшихся торгов должна быть недействительность договора, заключенного по их итогам»¹.

Для более детального и глубоко изучения данного спорного вопроса хотелось бы обратиться к опыту Российской Федерации, где этот вопрос также не получил окончательного ответа, однако практикой были выработаны значимые подходы.

Согласно Гражданскому кодексу Российской Федерации (далее – ГК РФ) торги, проведенные с нарушением правил, установленных законом, могут быть признаны недействительными по иску заинтересованного лица (часть 1 статьи 449 ГК РФ). В одно и то же время согласно части 5 статьи 447 ГК РФ торги, в которых участвовал только один участник, признаются несостоявшимися. При этом отдельными федеральными законами устанавливаются и иные основания признания торгов несостоявшимися. Здесь же важно заметить, что законодательство Республики Армения в части организации и проведения торгов не предусматривает такого основания для объявления торгов несостоявшимися, как участие только одного участника (что не вполне понятно, так как в любом случае если в торгах отсутствует обязательный элемент состязания, то торги должны быть объявлены несостоявшимися).

Буквальное толкование статьи 449 ГК РФ, как отмечает Кузнецова О.А., показывает, что она регулирует только последствия нарушений правил проведения **состоявшихся** торгов, и регламентация последствий нарушений, допущенных при несостоявшихся торгах, в ГК РФ отсутствует².

¹ Беляева, О. А. Правовые проблемы аукционов и конкурсов [Электронный ресурс] / О. А. Беляева // КонсультантПлюс. Россия / ЗАО «КонсультантПлюс». – Москва, 2019.

² Кузнецова О.А. Признание недействительными несостоявшихся торгов как способ защиты гражданских прав// <https://cyberleninka.ru/article/n/priznanie-nedeystvitelnymi-nesostoyavshih-sya-torgov-kak-sposob-zaschity-grazhdanskih-prav/viewer> (электронный ресурс – дата обращения: 19.12.2020)

Судебная практика по res controversa (предмету спора) противоречива. 05.08.2010г. Высший арбитражный суд РФ (далее – ВАС РФ) в составе трех судей выразил правовую позицию, согласно которой: «Правовым последствием признания торгов недействительными является недействительность заключенного на торгах договора, влекущего приведение сторон в первоначальное положение. Торги, на участие которых было подано менее двух заявок, признаются несостоявшимися. Следовательно, по результатам таких торгов договор не может быть заключен, и такие торги, как способ заключения сделки, не могут быть признаны недействительными»³. Таким образом, судьи ВАС РФ исходили из того, что несостоявшиеся торги невозможно признавать недействительными.

По истечению нескольких месяцев Президиум ВАС РФ признал **несостоявшийся аукцион недействительным** в силу того, что допущенные организатором торгов нарушения по поводу разрабатывания необходимой документации в части доведения до всеобщего сведения необходимой информации об аукционе и заключаемого по их результатам условий договора и по поводу срока рассмотрения заявок оказали существенное влияние на результат открытого водного аукциона и лишили заявителя возможности реализовать своё право на участие в нем по лоту⁴.

В сентябре 2011г. ВАС РФ сформулировал следующую позицию: «По смыслу положений пункта 5 статьи 447 Гражданского кодекса Российской Федерации.... объявление публичных торгов несостоявшимися **является результатом проведения таких торгов (выделено мной- М.С.)**. Будучи проведенными с нарушением правил, установленных законом, **они могут быть признаны недействительными (выделено мной- М.С.)** по иску заинтересованного лица (статья 449 Кодекса)»⁵.

В мае 2011г. судьи ВАС РФ, рассматривая вопрос о передаче дела в Президиум ВАС РФ,

упомянули ту же вышеуказанную позицию и отметили, что, несмотря на установленную законом возможность залогодержателя оставить за собой имущество после объявления повторных торгов несостоявшимися, все же залогодержатель является заинтересованным лицом и может оспорить повторные несостоявшиеся торги, так как при оставлении залогодержателем имущества за собой сумма, составляющая разницу между дисконтированной стоимостью заложенного имущества и размером требований, обеспеченных залогом, подлежит уплате залогодержателем в пользу залогодателя (Постановление Президиума Высшего Арбитражного Суда Российской Федерации от 10.06.1997 N 632/97). Следовательно, при таких обстоятельствах залогодержатель, оставляя имущество за собой, вынужден нести дополнительные расходы и на него ложатся соответствующие риски последующего изменения рыночной цены на имущество, а также бремя собственника по содержанию этого имущества. Поэтому залогодержатель заинтересован в надлежащем проведении торгов, а его права и законные интересы нарушаются, если правила проведения торгов не соблюдаются и торги признаются несостоявшимися.⁶

Как вытекает из вышеизложенного, мнения по поводу возможности оспаривания несостоявшихся торгов расходятся. На наш взгляд, такое расхождение обусловлено неодинаковым пониманием правовой природы торгов.

Как видно, сторонники запрета признания несостоявшихся торгов недействительными исходят из того, что по результатам несостоявшихся торгов не может быть заключенного договора, и, соответственно, нет смысла признавать несостоявшиеся торги недействительными, если цель признания торгов недействительными – это последующее признание недействительным **заключенного договора** по части 2 статьи 449 ГК РФ. Следовательно, сторонники такого подхода признают торги **способом, процедурной особенностью заключения договора** и руко-

³ Определение ВАС РФ от 05.08.2010 № ВАС-8730/10 по делу № А50-15701/2009.

⁴ Постановление Президиума ВАС РФ от 9 декабря 2010 г. № 9461/10 по делу № А58-8731/08

⁵ Постановление Президиума ВАС РФ от 6 сентября 2011 г. № 2436/11 по делу № А41-11850/10.

⁶ Определение ВАС РФ от 17 мая 2011 № ВАС-2436/11 по делу № А41-11850/10.

водствуются формулой «есть состоявшиеся торги – есть заключенный договор, нет состоявшихся торгов – нет заключенного договора»⁷. Именно такая позиция была выдвинута в уже упомянутом Определении ВАС РФ от 05.08.2010 № ВАС-8730/10 по делу № А50-15701/2009.

Однако мы считаем, что торги являются не процедурной особенностью заключения договора, а **способом выбора предпочтительного контрагента**. И если торги не состоялись, то это всего лишь означает, что невозможно было именно «выбрать предпочтительного контрагента», так как либо вообще не было участников торгов, либо был один участник и не было других для сравнения и выявления наилучшей кандидатуры, либо выявленный кандидат впоследствии сам отказался от заключения договора. При этом несостоявшиеся торги не исключают возможности появления контрагента вообще.

Речь идет, например, о случаях, когда торги не состоялись по причине участия в них только одного участника (часть 5 статьи 447 ГК РФ), но договор был заключен с лицом, подавшим единственную заявку на участие в аукционе, так указанная заявка соответствовала требованиям и условиям, предусмотренным документацией об аукционе, либо с лицом, признанным единственным участником аукциона⁸. Иначе говоря, несостоявшиеся торги не предполагают запрета на заключение договора, напротив, в вышеуказанных случаях у организатора торгов, как отмечает Федеральная антимонопольная служба России, есть обязанность по заключению договора. Это, в первую очередь, объясняется именно тем, что торги – это не способ заключения самого договора, а способ выбора предпочтительного контрагента. Если есть контрагент (единственный участник торгов или подавший единственную заявку), то с ним заключается договор, которым, однако, могут нарушаться права заинтересованного лица. В таком случае, если договор будет заключен, способом вос-

становления прав заинтересованного лица выступит признание несостоявшихся торгов и, как следствие, договора недействительными. Аналогичная позиция была выражена в уже упомянутом Постановлении Президиума ВАС РФ от 06.09.2011 № 2436/11 по делу № А41-11850/10.

Однако даже в условиях отсутствия заключенного договора по результатам несостоявшихся торгов может встать вопрос о необходимости признания несостоявшихся торгов недействительными, учитывая те конкретные правовые последствия, которые предусматриваются законодательством для несостоявшихся торгов. Свидетельством сказанного может выступить позиция, выраженная в уже упомянутом Определении ВАС РФ от 17 мая 2011 № ВАС-2436/11 по делу № А41-11850/10, согласно которой интересы залогодержателя, несмотря на предоставленные им законом права, нарушаются объявлением повторных торгов несостоявшимися.

Чаще всего заинтересованными субъектами в признании несостоявшихся торгов недействительными выступают лица, неправомерно не допущенные к торгам, либо лица, в чьих интересах проводились торги (например, взыскатели в исполнительном производстве). У лиц, неправомерно не допущенных к торгам, будет нарушено субъективное право на участие в конкретных торгах (с конкретным объектом и условиями), что и подлежит восстановлению. Иные заинтересованные лица, оспаривая торги, будут желать проведения торгов на тех же условиях, и если несостоявшиеся торги не будут признаны недействительными, то последующие торги будут проводиться на других условиях, например, со снижением цены лота. Следовательно, вряд ли можно игнорировать юридическую значимость возможности признания несостоявшихся торгов недействительными.

Торги имеют довольно сложный характер и не образуют единой сделки, что, конечно, не

⁷ Более детально о правовой природе торгов – в следующей статье: Милена Саргсян Практические проблемы определения правовой природы торгов как способа заключения договора или как способа выбора предпочтительного контрагента/ г.Ереван: ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ, № 118 2020, стр. 43-50.

⁸ Разъяснения ФАС России от 30 мая 2018 г. N 14 «О квалификации соглашений хозяйствующих субъектов, участвующих в торгах»// https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_299485/ (электронный ресурс – дата обращения: 19.12.2020)

исключает, но существенно затрудняет применение по аналогии норм относительно сделок. При этом применение судами норм по аналогии ни в коем случае не отождествляет “торги” и “сделку”. Как отмечал М.И. Брагинский: недействительный договор - это “ничто”, а несостоявшийся договор - это всегда “ничто”⁹. Сделка, которая не состоялась, не может породить какие-либо правовые последствия, а несостоявшиеся торги такие последствия порождают. Таким образом, сопоставляя названные понятия между собой, думается, что несостоявшейся сделке могут быть сродни лишь необъявленные торги¹⁰. И, следовательно, если несостоявшаяся сделка не может быть признана недействительной, то несостоявшиеся торги, на наш взгляд, могут быть признаны недействительными.

Alio intùitu (с другой точки зрения), в связи с этим возникает вопрос надлежащего способа защиты, так как ни законодательством РФ, ни законодательством РА не предусмотрено возможности оспаривания несостоявшихся торгов. По мнению Беляевой О.А., выходом из этой ситуации должна стать практика оспаривания неправомерных действий организатора торгов в виде пресечения действий, нарушающих право или создающих угрозу его нарушения. В такой ситуации оспариваются не торги (ведь они не состоялись), оспариваются неправомерные действия организатора торгов¹¹. Однако, на наш взгляд, это значительно усложнит получение заинтересованным лицом защиты своих нарушенных прав, так как необходимо будет сперва оспорить неправомерные действия организатора торгов, а потом (при наличии заключенного договора) и сам договор, если он был заключен вследствие признания торгов несостоявшимися. Помимо этого, возможность оспаривания неправомерных действий организатора торгов не должно исключать возможности оспаривания несостоявшихся торгов.

Итак, принимая во внимание все вышеизложенное, считаем, что возможность признания несостоявшихся торгов недействительными зависит от подхода к определению их правовой природы. Признание торгов не процедурной особенностью заключения торгов, а **способом выбора предпочтительного контрагента допускает существование заключенного договора по результатам несостоявшихся торгов** (когда торги не состоялись по причине участия одного участника в силу части 5 статьи 447 ГК РФ, но с единственным участником был заключен договор). Такой подход сводится к возможности признания несостоявшихся торгов недействительными при том, что цель признания торгов недействительными заключается, в частности, в признании недействительным заключенного по их результатам договора.

Даже в условиях отсутствия заключенного по результатам несостоявшихся торгов договора не исключается нарушение прав и интересов заинтересованного лица объявлением торгов несостоявшимися и предусмотренными законодательством конкретными правовыми последствиями. В таких случаях восстановления нарушенных прав и интересов заинтересованного лица можно будет достичь посредством оспаривания несостоявшихся торгов.

Во обеспечение возможности оспаривания несостоявшихся торгов необходимо:

1. либо предусмотреть соответствующий способ защиты права, изложив часть 1 статьи 465 ГК РА следующим способом: «Торги, проведенные с нарушением правил, установленных законом, **в том числе несостоявшееся торги**, могут быть признаны недействительными по иску заинтересованного лица.»;

2. либо допускать возможность оспаривания несостоявшихся торгов посредством расширительного толкования части 1 статьи 465 ГК РА.

⁹ Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Общие положения. М.: Статут, 2001. Кн. 1, С. 129//СПС “КонсультантПлюс”.

¹⁰ Чваненко Д.А. Оспаривание несостоявшихся торгов// <https://wiselawyer.ru/poleznoe/60651-osparivanie-nesostoyavshikh-torgov> (электронный ресурс - дата обращения: 19.12.2020г.)

¹¹ Беляева, О. А. Правовые проблемы аукционов и конкурсов [Электронный ресурс] / О. А. Беляева // КонсультантПлюс. Россия / ЗАО «КонсультантПлюс». – Москва, 2019.

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Հայաստանում Ֆրանսիական համալսարանի և
Ժան Մուլեն Լիոն 3 համալսարանի ասպիրանտ

**ՀԵՂԻՆԱԿԱՎՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԱՐՅԵՍՏԱԿԱՆ
ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ՍՏԵՂԾՎԱԾ
ԱՇԽԱՏԱԼՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

Մտավոր սեփականության իրավունքի արդի հարցերից է արհեստական բանականության (այսուհետ՝ ԱԲ) օգտագործմամբ ստեղծված աշխատանքների նկատմամբ հեղինակային իրավունքի տարածումը: Տվյալ հիմնախնդիրը գտնվում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության ուսումնասիրությունների ոլորտում¹: ԱԲ-ան ներքո պետք է հասկանալ այն ինֆորմացիոն համակարգերը, որոնք աշխատում են փոփոխվող և հաճախ անկանխատեսելի հանգամանքներում առանց մարդու կողմից ինտենսիվ հսկողության, ինչպես նաև այնպիսի համակարգերը, որոնք կարող են փոխել իրենց գործելակերպը փորձի հիման վրա և բարելավել իրենց արդյունավետությունը²: Դրանք տեխնիկական մեխանիզմներ են, որոնք փորձում են կրկնօրինակել մարդկային մտածելակերպը³: Ներկայումս ԱԲ-ը լայնորեն օգտագործվում է գրական և գեղարվեստական բնագավառներում աշխատանքներ ստեղծելիս: Վերջինիս կիրառման առավել հայտնի օրինակն է «Google» ընկերության կողմից ստեղծված «The Next Rembrandt» աշխատությունը, որը գեներացվել էր ծրագրային ալգորիթմների կողմից՝ օգտագործելով հոլանդացի նկարիչ Ռեմբրանդի մի քանի հարյուր աշխատանքներ⁴:

Թեմայի վերաբերյալ քննարկումները պայմանավորված են ԱԲ-ան անկանխատեսելիությամբ. չնայած որ ալգորիթմները ծրագրավորված են մարդու կողմից, այնուամենայնիվ, ո-

րոշ դեպքերում վերջինիս համար ամբողջովին պարզ չէ, թե ինչպիսի վերջնական արդյունք կստեղծվի ԱԲ-ան կողմից: Այլ կերպ ասած, որոշակի աշխատանքների ստեղծման գործընթացն ամբողջությամբ չի իրականացվում և վերահսկվում անձի կողմից: Այս կոնտեքստում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք մտավոր սեփականության արդի կոնցեպտները թույլ են տալիս պաշտպանել այդ աշխատանքները հեղինակային իրավունքով:

Նախևառաջ, հեղինակային իրավունքը տարածվում է ստեղծագործության վրա: Վերջինս, ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի, «*հեղինակի ստեղծագործ գործունեության հետևանքով մարդկային զգացմունքների ընկալման համար կոնկրետ ձևով արտահայտված և վերարտադրության հնարավորություն տվող գաղափարների, մտքերի, կերպարների ամբողջությունն է: Այն ոչ նյութական բարիք է, մարդկանց հոգևոր գործունեության արդյունք, մարդու մտավոր գործունեության ոչ նյութական արդյունք*»⁵: Սույն հոդվածի շրջանակներում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ԱԲ-ան կողմից գեներացված աշխատանքը կարող է համարվել հեղինակի կողմից ստեղծված արդյունք, որում արտացոլված է վերջինիս ստեղծագործական միտքը:

Ի տարբերության դասական դեպքերի, ԱԲ-ան մասնակցությամբ գեներացված աշխատանքները ստեղծվում են ծրագրային լուծումների միջոցով: Սկսած 20-րդ դարից, համա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 122 2021

¹ WIPO Conversation on Intellectual Property (IP) and Artificial Intelligence (AI): Second Session, July 7 to July 9, 2020
² Future of Artificial Intelligence Act of 2017, H.R.4625
³ Bertrand, André R, « Conditions de la protection par le droit d'auteur. Deux cas particuliers: intelligence artificielle et réalité virtuelle », Dalloz, 2010, page 150
⁴ GUADAMUZ, Andres, Artificial intelligence and copyright, WIPO Magazine, 2017, https://www.wipo.int/wipo_magazine/en/2017/05/article_0003.html (14.12.2020)
⁵ ՀՀ Վճռաբեկ դատարան, Քաղաքացիական գործ թիվ 3-19 (ՎԴ), 2007 թ

կարգչային ծրագրերի օգտագործմամբ ստեղծված օբյեկտները պահպանվել են հեղինակային իրավունքով: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի դիրքորոշման՝ «երբ համակարգիչներն օգտագործվում են ստեղծագործությունների ստեղծման համար, պեղությունները պետք է դրանք նախևառաջ դիտարկեն որպես տեխնիկական միջոց, որն օգտագործվում է անձի կողմից ցանկային արդյունքները, ստանալու համար»⁶: Դեռևս նախորդ դարում, Ֆրանսիայի դատարանները, հանձնիս Դուայի Վերաքննիչ դատարանի, հաստատել են, որ համակարգիչ օգտագործելն «ակնհայտորեն այնպիսին չէ, որ խնդրո առարկա ստեղծագործությունը կորցնի իր ինքնատիպությունն ու նորությունը»⁷: Հետագա վճիռները կոչված էին լրացնելու այդ դիրքորոշումը. մասնավորապես, ըստ մեկ այլ որոշման՝ «համակարգիչի միջոցով ստեղծված երաժշտական կոմպոզիցիան, երբ դա ենթադրում է մարդու միջամտությունը, հեղինակի ազատ ընտրությունները [...] հանգեցնում է ստեղծագործությունների ստեղծմանը»⁸: Այս դիրքորոշումները հիմնված են այն կանխավարկածի վրա, որ դասական համակարգչային ծրագրերը համարվում են իներտ գործիքներ⁹, օժտված չլինելով որևէ ինքնուրույնությամբ: Վերջիններս ընդամենը մարդու ստեղծագործական մտքի արտահայտման մեթոդ են:

Ինչ վերաբերում է ստեղծագործության ստեղծման եղանակին, ապա Ֆրանսիայի վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ, որպես ընդհանուր կանոն, ստեղծագործության հեղինակ է համարվում այն անձը, ով անձամբ ստեղծում է հեղինակային իրավունքով պահպանվող օբյեկտը¹⁰: Միաժամանակ, բարձրագույն դատական ատյաններն ընդունել են, որ հեղինակը կարող է մասնակցել ստեղծագործության ստեղծմանը նաև անուղղակի եղանակով: Մասնավորապես, Ռենուար-Գինոի գործով Ֆրան-

սիայի վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատն արձանագրել է, որ «քանդակագործը, չունենալով սեփական ձեռքերով քանդակելու հնարավորություն, սակայն ունենալով հնարավորություն հրահանգներ տալ այլ անձի, որն անմիջականորեն քանդակում էր, ինչպես նաև վերահսկել վերջինիս աշխատանքը, համարվում է ստեղծագործության հեղինակ»¹¹: Անուղղակի մասնակցության դոկտրինի կողմնակից է Անդրես Գուադամուզը, ով ընդգծել է, որ Եվրամիության օրենսդրությունը և նախադեպային իրավունքը չեն պահանջում, որ «լուսանկարչի կողմից անձամբ ակտիվացվի ֆոտոխցիկի կոճակը»¹², և հետևաբար կենդանու կողմից կատարված ֆոտոնկարը կարող է պահպանվել հեղինակային իրավունքով:

Եթե կիրառենք այս բանաձևը ԱԲ-ան մասնակցությամբ ստեղծված աշխատանքների նկատմամբ, ապա հարկավոր է կատարել հետևյալ հարցադրումը. արդյո՞ք անձը, ով ուղղակիորեն չի մասնակցում ստեղծագործության ստեղծմանը, սակայն նախագծում է ալգորիթմեր, որոնց օգտագործումը հանգեցնում է աշխատանքների ստեղծմանը, ընտրում ալգորիթմերի կողմից օգտագործման և վերլուծման ենթակա տվյալները, կարող է համարվել ստեղծագործության հեղինակ, եթե վերջինիս ստեղծման մեջ նրա մասնակցությունը չի կրել ինտենսիվ բնույթ և ամբողջությամբ չի արտացոլել նրա կատարած ընտրությունները:

Վերը նշված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է պարզել թե արդյո՞ք ԱԲ-ան կողմից աշխատանքներ ստեղծելը արտացոլում է ֆիզիկական անձի ստեղծագործական միտքը, որն էլ համարվում է հեղինակային իրավունքի պահպանման անհրաժեշտ նախապայմանը:

Այսպես, համաձայն «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ

⁶ «2^{ième} Comité d'experts gouvernementaux sur les problèmes découlant, sur le plan du droit d'auteur, de l'utilisation d'ordinateurs pour l'accès aux œuvres ou à la création d'œuvres. Paris, 1982», Dr. auteur 1982, 234

⁷ Cour d'appel de Douai, 4 décembre 1964

⁸ TGI Paris, 1^{er} ch. 5 juillet 2000

⁹ LEROUX, Christophe, LABROUTO Roberto, « euRobotics The European Robotics Coordination Action - Suggestion for a green paper on legal issues in robotics - Contribution to Deliverable D3.2.1 on ELS issues in robotics», 2012

¹⁰ Cass. civ. 1^{re}, 15 nov. 2005; Cass. civ. 1^{re}, 17 oct. 2000

¹¹ Cass. civ. 1^{ère}, 13 novembre 1973

¹² GUADAMUZ, Andres, «L'affaire du selfie réalisé par un singe peut-elle être source d'enseignements sur le droit d'auteur?», OMPI Magazine, 2018 https://www.wipo.int/wipo_magazine/fr/2018/01/article_0007.html, (14.12.2020)

օրենքի 3-րդ հոդվածի, աշխատանքը պահպանվում է հեղինակային իրավունքով, եթե այն ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք է: Այսպիսով, ստեղծագործության յուրօրինակությունը համարվում է հեղինակային իրավունքի անկյունաքարը¹³: Վերջինիս բովանդակությունը մշտապես հստակեցվել է եվրոպական դատարանների կողմից՝ տարաբնույթ աշխատանքների նկատմամբ կիրառվելու նպատակով: Մասնավորապես, «Infopaq» գործով ԵՄ դատարանն արձանագրել է, որ հեղինակային իրավունքը տարածվում է միայն յուրօրինակ ստեղծագործությունների վրա, և որ յուրօրինակությունը պետք է արտացոլի հեղինակի սեփական ինտելեկտուալ ունակությունները¹⁴: Այսպիսով, ստեղծագործությունը համարվում է հեղինակի անձնավորության արտացոլումը¹⁵:

Յուրօրինակության գնահատումը հատկապես տատանվում է ուտիլիտար, տեխնիկական աշխատանքների ոլորտում, որոնց դեպքում ավելի բարդ է ընկալել հեղինակի ստեղծագործական միտքը¹⁶: Այդ պատճառով, իրավունքը ցույց տվեց իր հարմարվողականությունը տնտեսական իրականությանը՝ մշակելով յուրօրինակության նոր չափանիշներ: Մասնավորապես, տվյալների բազաների վերաբերյալ «Football Dataco Ltd» գործով ԵՄ դատարանը հաստատել է, որ վերջիններս պաշտպանվում են հեղինակային իրավունքով, եթե արտացոլում են հեղինակի սեփական ինտելեկտուալ ներուժը, որն էլ իր հերթին արտահայտվում է տվյալների բազայի բովանդակության ընտրության կամ դասավորության մեջ¹⁷: Յուրօրինակության չափանիշը բավարարված չէ, «երբ տվյալների բազայի ստեղծումը թելադրված է փոխնիկական նկատարումներով, կանոններով կամ սահմանափակումներով, որոնք անձին ստեղծագործական ազատության հնարավորություն չեն ընձեռում»¹⁸:

Բավականին հետաքրքիր որոշում է կայացվել 2005թ.-ին Բորդոյի Վերաքննիչ դատարանի կողմից, ըստ որի «համակարգչի կողմից ստեղծված մտավոր գործունեության աշխատանքը պաշտպանված կլինի նույնիսկ նվազագույն յուրօրինակության դեպքում»¹⁹:

Յուրօրինակության աստիճանի նվազման այս միտումը համահունչ է ստեղծագործության գեներացման պրոցեսում ԱԲ-ան ներգրավմանը, որի ընթացքում օբյեկտիվորեն սահմանափակվում են անձի ստեղծագործության ազատության արտահայտման եղանակները: Օրինակ, եթե տվյալների բազայի դեպքում դա արտահայտվում է բազայի էլեմենտների ընտրության և դասավորության մեջ, ապա ԱԲ-ան կողմից երաժշտական կոմպոզիցիա ստեղծելիս անձի ազատ ընտրությունն արտահայտվում է ալգորիթմների ստեղծմամբ, որը կայանում է երաժշտական գործիքների հերթականության, տեսակի, երաժշտության ժանրի, վերլուծման ենթակա կոմպոզիցիաների ընտրության մեջ: Տվյալ դեպքում օբյեկտիվորեն սահմանափակվում է անձի կողմից իրականացվող գործողությունների քանակը, որոնք դելեգացվում են ալգորիթմներին:

Նմանատիպ մոտեցումը տեսականորեն թույլ է տալիս քննարկել հեղինակային իրավունքի տարածումը, մասնավորապես, ԱԲ-ան առավել կանխատեսելի տեսակի՝ «supervised learning»-ի կամ «վերահսկվող ուսուցման» համար, որի պարագայում «ալգորիթմը նախապես մարզվում է որոշակի առաջադրանքի համար՝ հիմնվելով ծրագրավորողի կողմից տրված կոնկրետ հրահանգների վրա վերջինիս հսկողության ներքո»²⁰: Այն պահանջում է, որ «ծրագ-

¹³ VIVANT, Michel, BRUGUIERE, Jean-Michel, Droit d'auteur et droits voisins, Dalloz, Précis, 4e éd., page 293 ; GRYNBAUM, Luc, LE GOFFIC, Caroline, MORLET, Lydia-Haidara, Droit des activités numériques, Daloz, Précis, éd., 1, 2014, page 274
¹⁴ CJUE, n° C 5/08, Arrêt Infopaq, 16 juillet 2009
¹⁵ LUCAS, André, Propriété littéraire et artistique, Paris, Dalloz, Connaissance du droit, 2015, éd.,5, page 18
¹⁶ GRYNBAUM, Luc, LE GOFFIC, Caroline, MORLET, Lydia-Haidara, Droit des activités numériques, Daloz, Précis, éd., 1, 2014, page 276
¹⁷ Arrêt de la Cour (troisième chambre) du 1er mars 2012, Football Dataco Ltd e.a. contre Yahoo! UK Ltd e.a.
¹⁸ Case C-393/09 Bezpečnostní softwarová asociace [2010] ECR I-13971 paragraphs 48 and 49
¹⁹ Cour d'appel de Bordeaux, 31 janvier 2005
²⁰ Vocabulaire de l'intelligence artificielle (liste de termes, expressions et définitions adoptés), Journal Officiel du 9 décembre 2018 - Numéro 285
²¹ «Comment permettre à l'homme de garder la main ? Les enjeux éthiques des algorithmes et de l'intelligence artificielle». Synthèse du débat public animé par la CNIL dans le cadre de la mission de réflexion éthique confiée par la loi pour une république numérique, décembre 2017, page 16

րավորողները մեքենային նախապես սովորեցնեն արդյունքները, որոնք անհրաժեշտ է հասնել»²¹: Հետևաբար, անձը հավաստիանում է, որ կարող է հասնել ցանկալի արդյունքի ալգորիթմների մարզման արդյունքում:

Սակայն ներկայումս առկա են իրավական համակարգեր, որոնցում նման տրամաբանությունը չի գործի: Վերը նշվածի վառ օրինակն է Ավստրալիայի նախադեպային իրավունքը, որը որդեգրել է էպես տարբերվող դիրքորոշում: Ակոհսի և Տելստրայի գործերով ավստրալական դատարանները հաստատել են, որ հեղինակային իրավունքով պաշտպանվում են միայն մարդու կողմից ստեղծված յուրօրինակ աշխատանքները²²: Հեղինակային իրավունքի պաշտպանությունից դուրս են համակարգչային ծրագրերի կողմից ստեղծված աշխատանքները²³:

Նմանատիպ հետևություն կարելի է կատարել նաև ԱՄՆ իրավունքի վերաբերյալ: Միացյալ Նահանգներում Հեղինակային իրավունքի գրասենյակը հաստատել է, որ «կգրանցի հեղինակային ստեղծագործություն, եթե ստեղծագործությունը ստեղծվել է մարդու կողմից»: Այս դիրքորոշումը բխում է դատական պրակտիկայից, որը սահմանում է, որ հեղինակային իրավունքի մասին օրենքը պաշտպանում է միայն «մտավոր գործունեության արդյունքները», որոնք «հիմնված են մտքի ստեղծագործական ուժերի մեջ»²⁴:

Այսպիսով, առավել կանխատեսելի ԱԲ-երի կողմից ստեղծված աշխատանքների նկատմամբ հեղինակային իրավունքի տարածումը ընդունելի կլինի ոչ բոլոր իրավական համակարգերի կողմից:

Ավելին, չնայած այն հանգամանքին, որ յուրօրինակության պահանջը բացարձակ խոչընդոտ չի հանդիսանում, որպեսզի ԱԲ-ան մաս-

նակցությամբ ստեղծված աշխատանքները պահպանվեն հեղինակային իրավունքով որոշ երկրներում, այնուամենայնիվ այն առաջացնում է էական խնդիրներ:

ԱԲ-ը աշխատանքին հաղորդում է իր «սեփական ձեռագիրը», որը միշտ չէ, որ կանխորոշված է անձի կողմից և արտահայտում է վերջինիս ստեղծագործական միտքը: Ստեղծագործության ակտը ավանդաբար կապված է մարդու հետ, սակայն ԱԲ-ան զարգացումը մարտահրավեր է նետում հաստատված կարծիքին²⁵: Հարցը հատկապես խնդրահարույց է՝ կապված ԱԲ-ան առավել զարգացած տեսակի՝ «deep learning»-ի կամ «խորը ուսուցման» մասնակցությամբ աշխատանքների ստեղծման պարագայում: Այս դեպքում ալգորիթմները մշտապես գտնվում են փոփոխման և էվոլյուցիայի մեջ²⁶, որի արդյունքում ստեղծարարության ընթացքը և ստեղծագործությունը՝ որպես դրա արդյունք, ամբողջությամբ չեն արտացոլում անձի մտավոր գործունեությունը: Հետևաբար, հեղինակային իրավունքը չի տարածվում նմանատիպ աշխատանքների վրա, չնայած որ անձանց կողմից կատարվել են ներդրումներ նման արդյունք ստանալու համար: Արդյունքում առաջանում է իրավիճակ, երբ անհրաժեշտ է հավասարակշռել առանց շահագրգիռ անձանց օրինական շահերը խախտելու ԱԲ-ան մասնակցությամբ ստեղծված աշխատանքների ազատ օգտագործման իրավունքը և ԱԲ-ան բնագավառում կատարվող ներդրումների պաշտպանվածությունը²⁷:

Այս կոնտեքստում, ի տարբերություն գերակշռող երկրների կողմից նախատեսված իրավակարգավորման՝ Մեծ Բրիտանիայի օրենսդրության կողմից որդեգրվել է այն դիրքորոշումը, որ ԱԲ-ան մասնակցությամբ ստեղծված աշխատանքների նկատմամբ հեղինակա-

²² Acohs Pty Ltd v Ucorp Pty Ltd [2012] FCAFC 16 (2 March 2012)

²³ Telstra Corporation Ltd v Phone Directories Company Pty Ltd (2010) 194 FCR 142 at [118] per Perram J and [169] per Yates J

²⁴ Feist Publications v Rural Telephone Service Company, Inc. 499 US 340 (1991)

²⁵ Саргсян, Л.А., Проблема распространения авторских прав на работы, сгенерированные искусственным интеллектом, Вестник РАУ, No. 1, 2018, стр. 60

²⁶ SERAFIN, Anthéa, RIAL-SEBBAG, Emmanuelle, « Responsabilisation éthique des concepteurs et des utilisateurs de systèmes d'IA en santé: quelles stratégies et politiques pour l'UE et l'UNESCO ? », Revue général de droit médical, No. 75, 2020, Page 239

²⁷ DeCosta F.A., Carrano A.G. Intellectual Property Protection for Artificial Intelligence, Westlaw Journal Intellectual Property, 2017, page 5

յին իրավունքը պատկանում է ծրագրավորողին: Այս մոտեցումը լավագույնս արտացոլված է «Հեղինակային իրավունքի, դիզայնի և արտոնագիրների ակտում», ըստ որի՝ «համակարգչի կողմից գրական, դրամատիկական, երաժշտական կամ գեղարվեստական ստեղծագործություն ստեղծելու դեպքում, առաջացած հեղինակը կլինի այն անձը, որի կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվում ստեղծագործությունը ստեղծելու համար»²⁸: Սույն ակտի 178-րդ բաժինը համակարգչային աշխատանքը սահմանում է որպես «աշխատանք, որը ստեղծվում է համակարգչի կողմից այն պայմաններում, երբ այդ ստեղծագործության մարդկային հեղինակ չկա»:

Հարկավոր է սակայն նշել, որ այս մոտեցումը չի ստացել լայն տարածում արդի իրավական համակարգերում²⁹: Նմանատիպ պայմաններում առաջանում է նորագույն տեխնոլոգիաների ոլորտում կատարված ներդրումները պաշտպանելու անհրաժեշտությունը. հարկավոր է նախատեսել խթաններ, որոնք իրավական պաշտպանություն կսահմանեն հեղինակային իրավունքի պահպանման չափանիշներին չբավարարող, բայց էական ներդրում ենթադրող աշխատանքների համար: Այդ կոնտեքստում կարելի է քննարկել ինչպես մրցակ-

ցային իրավունքի նորմերի կիրառումը³⁰, այնպես էլ եվրոպական դոկտրինայի կողմից առաջարկվող հատուկ հարակից կամ «sui generis» իրավունքի ստեղծումը³¹: Վերը նշված վերլուծությունները մեր կողմից կներկայացվեն հետագա աշխատանքների շրջանակներում:

Այսպիսով, ԱԲ-ան մասնակցությամբ ստեղծված օբյեկտների նկատմամբ հեղինակային իրավունքի տարածման հարցի վերաբերյալ հատուկ իրավակարգավորման, ինչպես նաև խնդրի վերաբերյալ գերակշռող մոտեցման բացակայության պայմաններում ակնհայտ է, որ վերը նշված աշխատանքները հեղինակային իրավունքով պահպանելու հարցը քննարկելիս անհրաժեշտ է պարզել, թե արդյոք դրանք բավարարում են հեղինակային իրավունքի օբյեկտի պահպանման անհրաժեշտ պայմանները, այլ կերպ ասված, արդյոք դրանք հանդիսանում են մարդու ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ որքան ավելի ինքնուրույն և անկանխատեսելի են աշխատանքը ստեղծող այգորիթմերը, և որքան ավելի քիչ է անձի միջամտությունը աշխատանքի ստեղծմանը, այնքան ավելի հավանական է, որ այդ աշխատանքը չպահպանվի հեղինակային իրավունքով:



²⁸ Copyright, Designs and Patents Act 1988, section 9(3)

²⁹ Մեծ Բրիտանիայի մոտեցումը որդեգրված է նաև Նոր Զելանդիայի կողմից

³⁰ Հնարավոր է քննարկել անբարեխիղճ մրցակցության սանկցիայի կիրառումը այլ տնտեսվարող սուբյեկտի կողմից ԱԲ-ան մասնակցությամբ ստեղծված աշխատանքի օգտագործումը առանց այդ աշխատանքի ստեղծումը կազմակերպող անձի համաձայնության: Մասնավորապես, համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ Անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսվարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

³¹ JACQUEMIN, Hervé, DE STREEL, Alexandre, L'intelligence artificielle et le droit, Bruxelles, Larcier, 2018, page 227

ՍՈՒԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԶԱՂԱՔԱՅԻԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

2020 թվականին ՀՀ իրավական համակարգում ներդրվեց բոլորովին նոր կառուցակարգ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը, որի գործառույթային և ինստիտուցիոնալ-կառուցվածքային բնույթ ունեցող տարրերի ուսումնասիրությունը դարձել է անհրաժեշտ և ժամանակի հրամայական:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը, լինելով նորույթ ՀՀ իրավական համակարգում, ենթարկվել է համալիր իրավակարգավորման Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով¹, և այս ինստիտուտը կարգավորող նորմերի վերջնական և գերակա նպատակը հանդիսանում է ապօրինի ճանապարհով ձեռք բերված գույքի տնտեսական շրջանառությունից դուրս բերումը, դրա՝ պետության տնտեսական շահերին ծառայեցնելը:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն (այսուհետ՝ նաև վարույթ) ունի բազմաթիվ առանձնահատկություններ, որոնցով տարբերվում է քաղաքացիական դատավարությանը մինչ այս հայտնի վարույթների այլ տեսակներից: Վարույթի առանձնահատկությունները, դրա էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին, վեր հանել

քաղաքացիական դատավարության իրավունքի կողմից առանձնացված մյուս կառուցակարգերի և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի (կառուցակարգի) տարբերությունները և ընդհանրությունները:

Այսպես, իրավաբանական գրականության մեջ քաղաքացիական դատավարության տեսակներն ու սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերն ընդունված է դասակարգել երկու հիմնական խմբի, որոնք իրենց հերթին ունեն իրենց ենթատեսակները՝ **հայցային վարույթ՝ ընդհանուր հայցային և հատուկ հայցային վարույթների ենթատեսակներով**, և **հատուկ վարույթներ**:² Հայցային վարույթն առանձնանում է հետևյալ հատկանիշներով՝ առկա են հակադիր շահերով օժտված կողմեր, հայցվորի՝ խախտված կամ վիճարկվող սուբյեկտիվ իրավունքի և օրինական շահի մասին նյութաիրավական վեճ, հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջ և գործը քննելու ու լուծելու մասին դատարանին ուղղված պահանջի միաժամանակյա առկայություն:³

Ինչ վերաբերում է հատուկ վարույթին, ապա այն օժտված չէ հայցային վարույթին բնորոշ հատկանիշներով, քանի որ բացակայում է նյութաիրավական վեճը: Այսինքն, հատուկ վարույթում առկա չէ վեճ, այլ միայն քաղաքացիական շրջանառության մասնակիցների՝ օրենքով պաշտպանվող շահեր, որպիսի պարագայում

¹ Համաձայն «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով:
² Տե՛ս Трейшников М. К. Гражданский процесс. М., 1999, էջ 284-289, Ռ. Գ. Պետրոսյան, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր., 2003, Երևանի համալսարանի հրատ., էջ 25-28, ինչպես նաև Վ. Վ. Հովհաննիսյան, Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2019, էջ 68-69
³ Ռ. Գ. Պետրոսյան, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր., 2003, Երևանի համալսարանի հրատ., էջ 229-231

դատարանը հաստատում է անձնական կամ գույքային իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստեր, անձի կամ գույքի իրավական վիճակ կամ անվիճելի իրավունք:⁴

Ժամանակի ընթացքում՝ քաղաքացիադատավարական հայեցակարգերի զարգացմանը զուգընթաց, ի հայտ են եկել վարույթի այնպիսի տեսակներ, որոնք նման դասակարգման տրամաբանությունից դուրս են, ընդգծվում են առավել տարբերակված որակական հատկանիշներով, ունեն քաղաքացիական դատավարության ավանդական կառուցակարգերից տարբերվող առանձնահատկություններ:⁵ Մասնավորապես, դասակարգման այս շրջանակից դուրս են վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը, արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումը չեղյալ ճանաչելու և ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումներով գործերի վարույթը, և այլն:

Այս վարույթները մի կողմից առանձնանում են իրավունքի մասին վեճի հնարավորությամբ կամ փաստացի, որը նյութաիրավական բնույթ չի կրում, այլ զուտ պրոցեսուալ իրավունքի իրականացում է ենթադրում: Մյուս կողմից՝ վարույթի այս տեսակում բացակայում են պատասխանողը, նրան ուղղված նյութաիրավական պահանջը, թեև առկա են հակադիր շահերով օժտված դատավարության մասնակիցները: Նշված իրավակարգավորումներից ակնհայտ է դառնում, որ դատավարության այս տեսակներն առանձնանում են պրոցեսուալ իրավունքի մասին վեճի առկայության հնարավորությամբ, եթե կողմը որոշում է օգտվել վճռի ճանաչման և կատարման դեմ առարկելու հնարավորությունից կամ որոշել է իրացնել վճռի վիճարկման իրավունքները, սակայն փաստա-

ցի բացակայում են հայցային վարույթին բնորոշ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը կամ սուբյեկտիվ նյութական իրավունքի մասին վեճը, այսինքն, չկա պատասխանող, սակայն առկա են հակադիր շահերով օժտված դատավարության մասնակիցներ:⁶

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ որպես քաղաքացիական դատավարության տեսակներ հարկ է առանձնացնել հայցային (ընդհանուր հայցային և հատուկ հայցային) վարույթները, հատուկ վարույթները և քաղաքացիական դատավարության **տարբերակված ձևերը:**

Հաշվի առնելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել այն հարցը, թե քաղաքացիական դատավարության վերը նշված տեսակներից որին բնորոշ նյութական և պրոցեսուալ հատկանիշներով և առանձնահատկություններով է աչքի ընկնում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը:

Առաջին հերթին պետք է նշել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը, ըստ էության, իրենից ներկայացնում է ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանման կողմից օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հայցադիմումի նախապատրաստում և ներկայացում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:⁷ Այսինքն, ՀՀ դատախազության համակարգում գործող համապատասխան ստորաբաժանումը, Օրենքով սահմանված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում դատարանին ներկայացնում է հայց՝ որոշակի գույք բռնագանձելու պահանջով: Սակայն, արդյո՞ք նշված պարագայում մենք կարող ենք փաստել պատասխանողի առկայության մասին, կամ արդյո՞ք դատախազն է հանդես գալիս որպես պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջի բավարարման կամ մերժման արդյունքում նյութաիրավական շահ կամ կորուստ կրող սուբյեկտ և առհասարակ, արդյո՞ք ապօրինի ծագում ունեցող գույքի

⁴ Տե՛ս, նույնը:

⁵ Տե՛ս, Վ.Վ. Հովհաննիսյան, Սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության քաղաքացիադատավարական կառուցակարգերի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2019, էջ 70

⁶ Տե՛ս, նույնը՝ էջ՝ 68-69

⁷ Տե՛ս, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված

բռնագանձման վարույթի շրջանակներում առկա են հակադիր շահերով օժտված կողմեր:

Կարծում ենք, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում դատախազի դերակատարումը առավել շատ կարելի է դիտարկել քաղաքացիական դատավարությանը հայտնի այլ անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար դատարան դիմելու ինստիտուտի շրջանակներում, քանի որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում դատախազը հայց է ներկայացնում պետական շահերի, այդ թվում՝ պատվիրակված լիազորությունների իրականացման համար պետության կողմից համայնքին ուղղված ֆինանսական միջոցների պաշտպանության նպատակով, ինչը բխում է քաղաքացիական դատավարության կարգով պետական շահերի պաշտպանության հայցի հարուցման դատախազական լիազորությունից:⁸

Նշվածի համատեքստում հարկ է նշել, որ դատավարության տարբերակված ձևերը առանձնանում են այն հատկանիշով, որ չկա պատասխանող, սակայն առկա են հակադիր շահերով օժտված դատավարության մասնակիցներ: Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դեպքում հայցը ներկայացվում է ենթադրյալ ապօրինի գույքի սեփականատիրոջ կամ այն փաստացի տիրապետող անձի դեմ, որը և հանդես է գալիս որպես պատասխանող կողմ, կրում է իր կարգավիճակից բխող դատավարական իրավունքներ և պարտականություններ, սակայն հայցը հարուցվում է ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի դեմ՝ in rem, այլ ոչ թե դրա սեփականատիրոջ կամ փաստացի տիրապետողի դեմ, ուստի որպես հայցային վարույթին բնորոշ հատկանիշ չկա դասական իմաստով պատասխանող կողմ: Ինդերահարույց են այն դեպքերը, երբ, օրինակ, հայցը ներկայացվել է այնպիսի գույքի բռնագանձման նպատակով, որի սեփականատերը մահացել է, կամ հանցագործության կատարման առնչությամբ հարուցված քրեական գործը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով, օրինակ՝ հայտ-

նի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ, կամ մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ:⁹ Ինդերորը կայանում է նրանում, որ նշյալ դեպքերում չկա որևէ անձ, ով կարող է հանդես գալ որպես պատասխանող, ով կարող է ապացուցել գույքի օրինական եկամուտներով ձեռք բերված լինելու հանգամանքը: Սակայն այն հանգամանքը, որ հայցը հարուցվում է գույքի դեմ, համապատասխան դատախազին հնարավորություն է տալիս (օրինակ՝ այն դեպքում, երբ հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) ամեն դեպքում հարուցել հայցը գույքի դեմ՝ չունենալով փաստացի պատասխանող կողմ:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ թեպետ տվյալ դեպքում առկա են երկու կողմեր՝ ի դեմս ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանման դատախազի, ում հայց հարուցելու իրավասությունն ընդգրկում է այն բոլոր իրավունքների ու պարտականությունների շրջանակը, որոնք դատավարական օրենքով վերապահված են հայցվորին, և ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի սեփականատիրոջ, ով հանդես է գալիս որպես պատասխանող, վերջիններս գտնվում են հակադիր կողմերում, ունեն իրարից տարբերվող հակադիր շահեր, այնուամենայնիվ, պետք է փաստել, որ տվյալ դեպքում բացակայում են դասական ձևով հայցվորի և պատասխանողի ինստիտուտները, քանի որ հայցը հարուցվում է ընդդեմ գույքի, և նույնիսկ այն պարագայում, երբ գույքի սեփականատերը մահացել է կամ հայտնի չէ այն անձը, ով պետք է ներգրավվի որպես պատասխանող, միևնույնն է դատախազը իրավասու է քաղաքացիական դատավարական կարգով հայց հարուցել: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ դասական իմաստով հայցային վարույթը բացակայում է և գործ ունենք տարբերակված ձևով վարույթի հետ:

Անդրադառնալով մյուս հատկանիշին՝ նշենք, որ համաձայն «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի՝ դատախազը առաջին ատյանի դատարանին ներկայացնում է հայց (հայ-

⁸ Տե՛ս, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդված

⁹ Տե՛ս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածը

ցադիմում), որը, ըստ էության, արտացոլում է հայցվոր կողմի նյութաիրավական պահանջը:

Նախևառաջ, նշենք, որ հայցը իրավաբանական գրականության մեջ առավել հաճախակի բնորոշվում է՝ որպես վիճելի նյութական իրավահարաբերություններից բխող և որոշակի իրավաբանական փաստերի վրա հիմնված նյութաիրավական պահանջ, որը մեկ անձի կողմից ներկայացվում է մեկ այլ անձի:¹⁰ Միաժամանակ, որոշ դատավարագետներ գտնում են, որ հայցը հանդիսանում է նաև վեճը օրենքով սահմանված կարգով քննելու և լուծելու պահանջ՝ ուղղված դատարանին:^{11,12} Սա նշանակում է, որ դատարան հայց ներկայացնելիս քաղաքացիական դատավարության կողմերից մեկը մյուսի հանդեպ իր նյութաիրավական պահանջն է ներկայացնում: Այսինքն, սա պահանջ է հայցվորի կողմից ուղղված պատասխանողին, որի օրինականությունը ստուգելով՝ դատարանը պետք է կայացնի վճիռ:¹³

Այլ կերպ, դատախազի կողմից հայցադիմումի ներկայացումը, մի կողմից, արտացոլում է վերջինիս պահանջը՝ ուղղված հակադիր շահերով օժտված մյուս կողմին՝ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի սեփականատիրոջը՝ ապացուցելու իր գույքի օրինական եկամուտներով ձեռք բերված լինելու հանգամանքը, հակառակ դեպքում՝ գույքը հանձնելու պետությանը, մյուս կողմից՝ դատարանին ուղղված պահանջը՝ քննելու և լուծելու հակադիր շահերով օժտված կողմերի միջև առկա «վեճը»:

Ինչ վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում նյութաիրավական վեճի առկայությանը, ապա այն այս պարագայում կարելի է բնորոշել որպես հայցվորի կողմից առաջ քաշած՝ բռնագանձման ենթակա գույքի ապօրինի լինելու վերաբերյալ վարկածի և տվյալ գույքի սեփականատիրոջ

կողմից հակառակի վերաբերյալ փաստի ապացուցման շուրջ ծագած նյութաիրավական վեճ, որի արդյունքը կարող է լինել տվյալ գույքի բռնագանձումը կամ դրա վերաբերյալ հայցվորի պահանջի մերժումը դատարանի կողմից:

Այսպիսով, կարծում ենք, որ թեև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթն ընդհանուր գծերով համընկնում է հայցային վարույթի հատկանիշներին, սակայն հաշվի առնելով վերը շարադրված նկատառումները՝ ճիշտ է այն դիտարկել որպես քաղաքացիական դատավարության **տարբերակված ձև**:

Նշված համատեքստում հետաքրքրական է այն հարցը, թե ինչպիսի դատավարական ձև (տիպ) է նախատեսված ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի կարգով քննվող գործերով դատաքննության ընթացքում, մասնավորապես, որքանով է գործում մրցակցության սկզբունքը, արդյո՞ք այն ձեռք չի բերում որոշակի առանձնահատկություններ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման կառուցակարգի շրջանակներում, և եթե այո, ապա որոնք են այդ առանձնահատկությունները:

Նախևառաջ, որպես դատավարության պատմականորեն հայտնի մոդելներ կարելի է առանձնացնել մրցակցային, ինկվիզիցիոն (քննչական, հետախուզական), ex officio (ի պաշտոնե) և խառը կամ հիբրիդային տիպերը, որոնցից յուրաքանչյուրը ունի իրեն բնորոշ առանձնահատկությունները:¹⁴

Մասնավորապես, ինկվիզիցիոն դատավարությունում կողմերի և դատարանի դերերը բաշխվում են մրցակցային դատավարությանը տրամագծորեն հակառակ: Դատարանի ակտիվ դերը ընդգծվում է գործի քննության ընթացքում, մինչդեռ կողմերը հարաբերականորեն պասիվ դերակատարում են ունենում:^{15,16}

¹⁰ Տեն, Ռ. Գ. Պետրոսյան, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր., 2003, Երևանի համալսարանի հրատ., էջ 330
¹¹ Տեն, Մ.Կ. Трейшников, Гражданский процесс, М., 2006, էջ 220-228
¹² Տեն, Յ. Կ. Осипов, Гражданский процесс, М., 1996, էջ 189-198
¹³ Տեն, Ռ. Գ. Պետրոսյան, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Եր., 2003, Երևանի համալսարանի հրատ., էջ 236
¹⁴ Տեն Коршунов Н.М., Мареев Ю.Л. Гражданский процесс. Учебник. 2-е изд, М., 2007, էջ 39-42:
¹⁵ Տեն, Վարդուշ Եսայան, Մրցակցության սկզբունքի հասկացությունը և էությունը քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պորֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2016թ., էջ՝ 232:
¹⁶ Տեն Коршунов Н.М., Мареев Ю.Л. Гражданский процесс. Учебник. 2-е изд, М., 2007, էջ 43:

Առանցքայնորեն հակառակ պատկերն է առկա մրցակցային դատավարության դեպքում, որը համարվում է դատավարության հիմնաքարերից մեկը, ապահովում է «զենքերի հավասարության» սկզբունք-իրավունքի իրացումը դատավարության ընթացքում:^{17,18} Դատավարության մրցակցային տիպի էությունը հիմնականում կայանում է նրանում, որ դատարանի գործողությունները կախված են հայցվորի պահանջներից և պատասխանողի առարկություններից, դատարանը գործը քննում է կողմերի հայտարարած պահանջների ծավալով, առկա է կողմերի՝ ապացուցողական միջոցների օգտագործման հնարավորության ազատություն, յուրաքանչյուր կողմ ապացուցում է փաստեր, որոնք ընկած են իրենց պահանջների և առարկությունների հիմքում, իսկ դատարանը, իր հերթին, կարող է առաջարկել կողմերին ներկայացնել լրացուցիչ ապացույցներ:^{19,20}

Քաղաքացիական դատավարության պարագայում մրցակցային ձևն արտահայտվում է նրանով, որ դատարանը, ապահովում է չեզոք դիրք, օբյեկտիվություն և անաչառություն գործի դատական քննության ողջ ընթացքում: Մյուս կողմից, դատարանը՝ որպես անկախ արբիտր, գործին մասնակցող անձանց պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները և ստեղծում գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համապատասխան պայմանները: Դատարանը, ըստ գործող օրենսդրության, ապացուցելու պարտականություն չի կրում, փոխարենը, կողմերը՝ հայցվորը և պատասխանողն են կրում իրենց պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման դատավարական պարտականությունը, իսկ այն պարագայում, երբ վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները

կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը:²¹

Իրավակիրառ պրակտիկայում արժարծվում է նաև այն կարծիքը, որի համաձայն՝ ապացուցման առարկայի մեջ որոշակի հանգամանքներ մտցնելով կամ կողմի վկայակոչած հանգամանքները գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների շրջանակից հանելով՝ դատարանը խախտում է մրցակցության սկզբունքը՝ ըստ էության իրականացնելով կողմի գործառույթ:²² Այս հարցին անդրադարձել է սահմանադրական դատարանն իր որոշումներում՝ նշելով, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշումը դատարանի կողմից ամենևին էլ չի նշանակում կողմերի իրավահավասարության կամ մրցակցության սկզբունքների խախտում, առավել ևս կողմերի միջև ապացուցման պարտականության անհավասար բաշխում: Ընդհակառակը, դրանով դատարանը կողմերին ուղղորդում է ապացույցներ ներկայացնել այն փաստերի վերաբերյալ, որոնք կհաստատեն իրենց պահանջներն ու առարկությունները, հետևաբար փաստական հիմք կստեղծեն գործով օրինական (հիմնավոր) վճիռ (որոշում) կայացնելու համար:²³

Մրցակցային դատական քննության ճիշտ հակապատկերն է գործերի ի պաշտոնե քննության մոդելը: Դատավարության տվյալ ձևին բնորոշ է ապացուցման ենթակա փաստական հանգամանքների և նյութական իրավունքին համապատասխան արդարացի որոշման կայացման պարտականության՝ ամբողջապես դատարանի վրա դրված լինելը: Մասնավորապես, դատարանը պարտավոր է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը ձեռք բերել ի պաշտոնե, այսինքն՝ սեփական նախաձեռնությամբ՝ անկախ դատավարության կողմերի ներկայացրած ապացույցների շրջանա-

¹⁷ Տե՛ս, Օջալանն ընդդեմ Թուրքիայի, *Ocalan v Turkey*, 2003 թվականի մարտի 12, գանգատ թիվ 46221/99, կետ 166,
¹⁸ Տե՛ս, Ю. К. Осипов, *Гражданский процесс*, М., 1996, էջ 22-28
¹⁹ Տե՛ս, Վարդուշ Եսայան, *Մրցակցության սկզբունքի հասկացությունը և էությունը քաղաքացիական դատավարությունում*, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պորժետորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ իրատարակչություն, Երևան, 2016թ., էջ 238:
²⁰ Տե՛ս Васильев С.В. *Гражданский процесс. Учебное пособие*. Харьков: Одиссей, 2007, էջ 45:
²¹ Տե՛ս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածը
²² Տե՛ս, Шишкин С.А. *Состязательность в гражданском и арбитражном судопроизводстве*. М., 1996, էջ 23:
²³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 08.12.2009 թ. թիվ ՍԴՈ-845 որոշումը

կից:²⁴ Սա նշանակում է, որ ex officio դատաքննության մոդելում դատարանը որևէ կերպ կաշկանդված չէ կողմերի ներկայացրած ապացույցների շրջանակով և լիովին օժտված է իր իսկ նախաձեռնությամբ հավելյալ փաստական տվյալներ ձեռք բերելու դատավարական լիազորությամբ:

Վերջապես, խառը կամ հիբրիդային տիպի դատավարության առանձնահատկությունները առավել ցայտուն կերպով արտահայտվում են քրեական դատավարությունում, երբ վարույթի հանրային մասնակիցները և մեղադրյալը մինչդատական վարույթում գտնվում են դատավարական անհավասար վիճակում, իսկ դատական քննության փուլում այդ անհավասարությունը վերանում է: Բանն այն է, որ մինչդատական փուլում անհավասարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի պահանջներից ելնելով՝ ապացուցողական պարտականություն կրող սուբյեկտ է հանդիսանում բացառապես մեղադրանքի կողմը: Թերևս իրավացիորեն նշվել է, որ հիբրիդային տիպի դատավարությունում ապացույցներ հավաքելու ոլորտում առկա անհավասարությունը վերացվում է դատավարական գործառույթների տարանջատման պահանջի հաշվին՝ վարույթի հանրային մասնակիցների վրա դնելով պաշտպանական ապացույցներ հավաքելու պարտականություն:²⁵

Ամփոփելով վերը քննարկված դատավարական չորս մոդելները և դրանց առանձնահատկությունները՝ կարելի եզրահանգել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի պարագայում խոսք չի կարող գնալ ինկվիզիցիոն կամ ex officio դատավարական տիպերի մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատաքննության փուլում գործում են քաղաքացիական դատավարության՝ ապացուցմանը վերաբերող կարգավորումները: Մասնավորապես, դատավարության կողմերը երկուսն էլ կրում են ապացուցման պարտականություն, իսկ դատարանը որևէ ակտիվություն

չի դրսևորում ապացույցների հավաքման հարցում: Փոխարենը, դատարանի ակտիվ դերակատարումը արտացոլվում է ապացուցման բեռի բաշխման, ապացույցների գնահատման պարտականությունների կատարման ընթացքում: Այսինքն, առկա չէ ինկվիզիցիոն մոդելին բնորոշ դատավարության կողմերի պասիվությունը, և հակառակը, ակնհայտ է դատարանի գերակայող դերը ապացուցման ողջ գործընթացում:

Վերլուծության ենթարկելով ex officio դատավարական մոդելի առանձնահատկությունները՝ կարելի է միարժեքորեն պնդել, որ այն նույնպես դուրս է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթին հատուկ տիպի տրամաբանությունից: Բանն այն է, որ Օրենքում առկա չէ դատարանի կողմից գործերի ի պաշտոնե քննություն իրականացնելու վերաբերյալ որևէ իրավակարգավորում: Ստացվում է, որ դատարանը կաշկանդված է հայցվոր և պատասխանող կողմերի ներկայացրած ապացույցների շրջանակով: Դատարանի պարտականությունը կայանում է կողմերի միջև ապացուցողական զանգվածի բաշխման, այդ ապացույցների գնահատման և դրա արդյունքում արդարացի որոշում կայացնելու մեջ: Այդ մոդելը հիմնականում բնորոշ է մրցակցային դատավարական ձևին, քանի որ ներկայումս գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման պայմաններում քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործին մասնակցող անձանց մրցակցության հիման վրա, որից բացառություն է կազմում հատուկ վարույթը, որտեղ բացակայում են մրցակցող կողմերը:

Այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ մրցակցության սկզբունքը հավասարապես չի կարող գործել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի բոլոր փուլերում: Մասնավորապես՝ դատախազության կողմից ուսումնասիրություն իրականացնելու փուլում մրցակցության տարրեր առկա չեն: Ստացվում, որ ինչպես քրեական արդարադատության պա-

²⁴ Տե՛ս, Հայկ Սարգսյան, Դատական քննության սահմանները մրցակցության և ի պաշտոնե քննության մոդելներում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրնտանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2014թ., էջ՝ 268-270

²⁵ Տե՛ս, Արթուր Ղամբարյան, Ապացուցման գործընթացում պաշտպանի կարգավիճակի կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Հայրապետ, 2015 թ., 7 էջ:

րագայում մինչդատական վարույթում քրեական հետապնդման մարմինների գերակա նպատակը հանդիսանում է անհրաժեշտ ապացույցների ձեռքբերումը, մինչդեռ ենթադրյալ հանցանք կատարած անձը ապացուցողական որևէ պարտականություն չի կրում, նույն կերպ էլ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի դեպքում նախքան հայց ներկայացնելը ապացուցման պարտականությունը դրված է դատախազության համապատասխան ստորաբաժանման դատախազի վրա, ով պարտավոր է իրականացնել համապատասխան որոնողական գործողություններ և գտնել հայցի ներկայացման համար ծանրակշիռ հիմքեր և ապացույցներ, մինչդեռ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի սեփականատիրոջ դերակատարումը բավականին պասիվ է:

Ինչ վերաբերում է բուն դատավարությանը, ապա, ինչպես արդեն նշվեց, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորման պայմաններում գործ ունենք մրցակցային դատավարության հետ, որպիսի սկզբունքը սահմանված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածում, մասնավորապես՝ քաղաքացիական դատավարությունն իրականացվում է գործին մասնակցող անձանց մրցակցության հիման վրա, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Դատարանը, պահպանելով անկախություն և անաչառություն, վարում է դատավարությունը, անհրաժեշտության դեպքում սույն օրենսգրքով սահմանված կարգով գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձանց պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները, նախագուշացնում է դատավարական գործողությունները կատարելու կամ չկատարելու հետևանքների մասին, պայմաններ է ստեղծում գործի փաստական հանգամանքները պարզելու, ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու համար: Ուստի, միայն դատաքննության փուլում է, որ երկու կողմերն էլ պարտավորվում են ակտիվ դերակատարում ունենալ, քանի որ հայցվորը և պատասխա-

նողն են կրում իրենց պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման դատավարական պարտականությունը, իսկ երբ որևէ վիճելի փաստ մնում է չապացուցված, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող անձը:

Նշված իրավիճակը բավականին նմանություն ունի մայրցամաքային քրեական դատավարությանը հայտնի խառը տիպի դատավարության մոդելին, որի հիմնական տրամաբանությունը և իմաստը կայանում էր նրանում, որ նախնական քննությունը պետք է ենթարկվի ինկվիզիցիոն, իսկ դատական քննությունը՝ մրցակցային մեղադրական հիմքերի:^{26,27}

Սակայն ակնհայտ է նաև, որ մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը չի կարող ունենալ մրցակցային դատավարության դասական մոդելը նաև բուն դատավարության ընթացքում:

Այսպես, նախ մրցակցության սկզբունքը ենթադրում է կողմերի առկայություն, որոնք մրցում կամ վիճում են միմյանց հետ: Հայցը հարուցվում է գույքի դեմ և ոչ անձի, ուստի հատկանշական է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում ոչ բոլոր դեպքերում է, որ պատասխանող կողմը կարող է ներկա լինել: Ինչպես արդեն իսկ նշվեց, կարող են լինել իրավիճակներ, երբ, օրինակ, ներկայացվել է գույքի բռնագանձման հայց, սակայն հանցագործության կատարման առնչությամբ հարուցված քրեական գործը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից որևէ մեկով, ուստի, նման դեպքերում հնարավոր չէ դատավարության ընթացքում ապահովել մրցակցող կողմերի պարտադիր ներկայությունը, քանի որ չկա անձը, ով կարող է հանդես գալ որպես պատասխանող, ով պետք է ապացուցի գույքի՝ օրինական եկամուտներով ձեռք բերված լինելու հանգամանքը:

²⁶ Տե՛ս, Արտակ Ղազարյան, Մինչդատական վարույթի կազմակերպման մոդելները (պատմական և համեմատաիրավական վերլուծություն), մենագրություն, Երևան, «Թասկ» ՍՊԸ, 2019, էջ՝ 26-27

²⁷ Տե՛ս, Курс уголовного процесса / Под ред. д.ю.н., проф. Л.В. Головки. М.: Статут, 2016. С.138.

Երկրորդ՝ մրցակցության սկզբունքը ենթադրում է նաև ոչ միայն կողմերի առկայություն, այլ նաև նրանց իրավահավասարություն: Բանն այն է, որ թեև ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կարգավորվում է քաղաքացիաիրավական հարաբերությունների տիրույթում, որտեղ սովորաբար երկու կողմերում հանդես են գալիս մասնավոր սուբյեկտներ, սակայն այս դեպքում մի կողմից գործում է «հանրային» սուբյեկտ, այն է՝ հայցվոր հանդիսացող դատախազը, ով, գործի դնելով օրենքով իրեն վերապահված լիազորությունները և դրանցից բխող անհրաժեշտ և բավարար գործիքակազմը, ունի առավել մեծ հնարավորություն դատաքննությունում իր համար բարենպաստ ընթացք ապահովելու համար, մյուս կողմից, օրինակ, մասնավոր սուբյեկտ հանդիսացող գույքի սեփականատերը, ով նման լիազորություններ չունի: Այս կապակցությամբ հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում գործ ունենք *գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի հետ, այսինքն՝ գույքը համարվում է ապօրինի, քանի դեռ դրա սեփականատերը չի ապացուցում դրա օրինական եկամուտներով ձեռք բերված լինելու հանգամանքը*:²⁸

Բացի այդ, դատախազը՝ որպես հանրային սուբյեկտ առաջնորդվում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով, այն՝ իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով, մինչդեռ գույքի սեփականատերը կամ փաստացի տիրապետողը, լինելով մասնավոր սուբյեկտ, հիմնվում է ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածի վրա, մասնավորապես, ազատ է անելու այն ամենը, ինչն արգելված չէ օրենքով և չի խախտում այլոց իրավունքները: Նման պայմաններում դժվար է խոսել կողմերի իրավահավասարության և իրական մրցակցության ապահովման մասին:

Բացի այդ, կարծում ենք, ճշմարտության բացահայտման կարևորագույն նպատակից ելնելով՝ ճիշտ կլինի դատարանին ևս չմեկուսացնել ապացուցմանը մասնակցելու գործընթացից, խուսափել վերջինիս պասիվ դիրքից, ներքին համոզմունք ձևավորելու համար հնարավորություն տալ, որպիսի դատարանը նույնպես իրավունք ունենա սեփական նախաձեռնությամբ ձեռք բերել ապացույցներ: Նման տեսակետ է արտահայտել նաև Տ. Մ. Յաբլոչկովը, ում պնդմամբ՝ երբ մի կողմից գործ ունենք հանրային իշխանության մարմինների հետ և դատարանին վերապահված չէ ակտիվ դերակատարություն, ապա հաճախ վճիռը կայացվում է այն կողմի օգտին, ով գործը առավել խելամիտ է վարում, իսկ ոչ փորձառու կողմը, չներկայացնելով անհրաժեշտ ապացույցները և չկարողանալով հիմնավորել իր պահանջները, հայտնվում է անբարենպաստ վիճակում:²⁹

Համանման միտք է արտահայտել նաև Օ. Վ. Պանկովան, ով նշել է, որ հաշվի առնելով հանրային իրավահարաբերություններում կողմերի անհավասար կարգավիճակը՝ անհրաժեշտ է դատարանին օժտել մրցակցությանը միջամտելու լայն հնարավորություններով, երբ դատարանը հանդես կգա որպես ապացուցման սուբյեկտ, որը ոչ միայն կօժանդակի կողմերին ապացուցման փուլում, այլև ինքը նույնպես կհավաքի ապացույցներ՝ թույլ չտալով հանրային իշխանության մարմինների կողմից ապացույցների հնարավոր շահարկում:^{30,31}

Վերոնշյալը հիմք է հանդիսանում, որպեսզի հանգենք այն եզրակացության, որ Օրենքի տրամաբանությունը ուղղորդում է դեպի ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի՝ հիբրիդային (խառը) դատավարական ձև ունենալուն, սակայն որքանով է այս մոտեցումը հիմնավոր և նպատակահարմար, ցույց կտա միայն Օրենքի կիրառման պրակտիկան:

²⁸ Տե՛ս, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված

²⁹ Տե՛ս Яблочков Т. М., Учебник русского гражданского судопроизводства, Ярославль, 1910, էջ 326:

³⁰ Տե՛ս, Լիլիթ Պետրոսյան, «Ex-officio» և մրցակցության սկզբունքների հարաբերակցությունը վարչական դատավարությունում, «Օրինականություն» հանդես, Երևան, 2020թ., էջ՝ 72-73

³¹ Տե՛ս Панкова О. В., Принципы административного судопроизводства и проблемы их реализации в судах общей юрисдикции/ Международный экспертный семинар «Роль административной юстиции в защите прав человека», Москва, 2010, էջ 77

ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Իրավ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության,
Սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի դոկտորանտ

**ՑԵՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏՈՅՄԱՑԵՂԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Պարզ ցեղավարությունը ներառում է մի քանի հանրույթներ, որոնցից մեկը գերակայում է մյուսների նկատմամբ, իսկ դրա առաջնորդը հանդիսանում է առաջնորդ մնացյալ բոլորի նկատմամբ: Պարզ ցեղավարություններ ծագում են՝ ենթահամակարգերի վերածվող պարզերի միավորմամբ: Գոյություն ունեն նաև բարդերից ձևավորվող գերբարդ ցեղավարություններ, որոնցում հաշվարկվում են հազարավոր և նույնիսկ միլիոնի հասնող անդամներ:

«Ցեղավարությունները հայտնի են աշխարհի բազմաթիվ էթնոգրաֆիկ ժողովուրդների մոտ: Աֆրիկայում՝ աշանտի, բանտու, բագանդա, վոլոֆ, գուլուն, պուշտոններ, Հյուսիսային Աֆրիկայում՝ բեդուիններ, դազախներ, կիրգիզներ, մոնղոլներ, Ֆիջիում, Հայիթիում և Հավայան կղզիների հյուսիսարևմտյան ափամերձ տարածքներում՝ հյուսիսամերիկյան հնդկացիներ, ինկեր և այլն»¹:

Առաջնորդը սկզբունքորեն տարբերվում է տոհմի ղեկավարից, ով անհատական վարքագծի արդյունքում է վաստակում իր կարգավիճակը: Ինչպես գրում է Մ. Սալզինը. «Ցեղավարությունում քաղաքական կարկասը ապահովվում է ցեղային կապերով: Սակայն այդ կապերը սեփական ձևավորման պայման ունեն, այն է ֆորմալ առաջնորդի առկայությունը: Այստեղ մարդիկ չեն հաստատում մյուսների նկատմամբ սեփական իշխանությունը անհատական ջանքերով, այլ իշխանության են գալիս արյունակցական կապերի ցանցում՝ հատուկ կարգավիճակի ուղիով: Իշխանությունը ամփոփված է ֆորմալ կարգավիճակում, առաջնորդին վայել արտոնությունների կազմակերպական ճանաչման և միջոցների ապահովման մեջ: Այստեղ ըդգրկում

է նաև գույքի և ենթակա ժողովրդի աշխատանքի նկատմամբ հատուկ հսկողությունը»²: Անտրոպոլոգ և փիլիսոփա Լ.Ե. Գրինին, նշում է, որ «իշխանության քաղաքական ձևավորման կառուցման գլխավոր սկզբունքը հավայական ցեղավարություններում՝ խստորեն կապված է արյունակցական հիերարխիայի հետ, ինչն էլ հենվում է նախնիների նկատմամբ ծագումնաբանական մերձավորության և առաջնորդի հեղինակության հիմքերի վրա: Ավագ եղբայրների և որդիների ծագումնաբանությունը համարվում է առավել բարձր: Այսպիսով, ամբողջ քաղաքական և սոցիալական հիերարխիան կառուցվում է արյունակցական հարաբերությունների շուրջ»³:

Առաջնորդի իշխանության պահպանման կարևոր մեխանիզմ է վերաբաշխումը: Այն ծագում է նախկին բարիքի փոխանակության ձևափոխման արդյունքում, որն այս դեպքում զուգահեռաբար ձեռք է բերում ուղղահայաց չափում ներքևից վերև և վերևից ներքև: Ահա ինչպես է տվյալ գործընթացը նկարագրում հայտնի անտրոպոլոգ Ռ.Ֆիրտը. «Տիկոմիերի առաջնորդին ներքևից հոսում է նվերների հոսք, սակայն նա ևս պարտավոր է լինել առատաձեռն, բոլոր դեպքերում ոչ պակաս աստիճանով, քան ունակ է կուտակել»: Առատաձեռնությունը իրականում առաջնորդի խստորեն պահպանվող հատկանիշն է: «Ցեղապետերն իրավասություն ունեն վերահսկել մթերքների հսկայական և իրենց տներում պահվող արժեքների առատ քանակությունը... Սակայն սպասվում է, որ այդ պաշարները կօգտագործվեն ի բարօրություն ժողովրդի: Համայնքի շարքային անդամների կուտակումները ևս պետք է բաժանվեին մյուսներին: Առաջնորդները հետևում են, որ գույքի

¹ Стів Крадин Н.Н. Политическая антропология. М. 2004.С. 165-166
² Стів Салзин М. Экономика каменного века. М., 1999. С. 134.
³ Стів Гринин Л.Е. Государство и исторический процесс. Эпоха формирования государство. Общій контекст социальной эволюции при образовании государства. М., 2007. С. 110.

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 122 2021

բաժանման վատ նախադեպեր չլինեին, ուստի լինում էր, երբ առաջնորդները բռնագրավում են համայնքի նման անդամի գույքը կամ նույնիսկ սպանում նրան»⁴: Առաջնորդին նվիրաբերվող թանկարժեք նվերները ձևավորում են ցեղավարության ընդհանուր ֆոնը, որով նա տնօրինում է ընդհանուր շահը՝ պարզևելով հպատակներին, իբրև թե ազատություն և միևնույն ժամանակ դրանով իսկ ուժեղացնելով վերջիններիս կախվածությունը: Ցեղավարությունում ծագած վերաբաշխումը լայն կիրառվում է որպես իշխանության ամրապնդման եղանակ, նաև ներկայիս պետությունների կողմից:

Նախկինում առաջնորդը հանդիսանում է միայն որպես գույքի տնօրինող: «Հպատակները և արյունակիցները բերում են ընտրյալ նվերներ... Բացի այլ ցեղերի և այցելուների համար զվարճանքի ծախսերից, առաջնորդը դյուրինությամբ բաժանում է բարիքը՝ նվերների տեսքով, իր որակյալ աշխատակիցներին: Նման կերպ նա ձեռք է բերում վերջիններիս հավատարմությունը և նվերների ու նյութական բարիքների շարունակական հոսքը, քանի որ կուտակում էր դրանք միայն այն պատճառով, որ նորից դյուրինությամբ բաժանի հպատակներին»⁵:

Սակայն «ցեղավարական ձևավորման տարբեր ձևերում... նման վերաբաշխումը զրկված չէր առաջնորդի համար նյութական շահից»⁶: Առաջնորդը «ամեն ինչը չէ, որ վերադարձնում էր»⁷: «Բաժանելով հասարակական արդյունքը սեփական անունից՝ առաջնորդը բարձրացնում է իր հեղինակությունը, իսկ համայնքի անդամները ստանալով նվերը, ստիպված պատասխան նվերներ էին տալիս, ինչը, որպես կանոն, և՛ ծավալով, և՛ արժեքով գերազանցում էր նախնական նվերը: Բացի դրանից առաջնորդը՝ իր հասարակական գործառույթների իրականացման, անձնական կարիքների, ընտանիքի և ծառաների ապահովման, «ներկայացման ծախսերի» համար օգտվում էր կոլեկտիվ հավելյալ արդյունքից: Նախնականում նման ծախսերը փոքր էին: Սակայն ախորժակը բացվում է ու-

տելիս: Ժամանակի ընթացքում պաշարները աճում են: Որոշ ամենազարգացած նախապետական հիերարխիկ կառույցներում կառավարիչները կարող էին իրենց թույլ տալ առանց խղճի խայթի մտնել հասարակության գրպանը և օգտագործել ժողովրդի ստեղծած արդյունքը՝ բացառապես սեփական կարիքների համար»⁸:

Այսպիսով, ժամանակի ընթացքում առաջնորդը նվերները առավել շատ է սկսում օգտագործել՝ իր համայնքի, մերձավոր հարազատների և իր սեփական կարիքների համար: Ձևավորվում է գույքային շերտավորում: Մարքսիստական պատկերացումներին ի հակադրություն, տեսնում ենք, որ այս պարագայում իշխանությունը ածանցյալ չէ, այլ՝ առաջնային է գույքային շերտավորման նկատմամբ: «Բավականին հաճախ և բավականին մեխանիկորեն են անտրոպոլոգները բացատրում ցեղավարության ծագումը հասարակական արդյունքի ավելցուկի ծագմամբ: Պատմական գործընթացում կախվածությունը պետք է առնվազն փոխադարձ հանդիսանա, իսկ պարզունակ հասարակության գործառնության ժամանակ այն, առավել շուտ, կհանդիսանար հետադարձ»⁹: Այստեղ նկատենք, որ նյութական բարիքներում իշխանության փոխակերպումը պահպանվում է բոլոր մինչկապիտալիստական պետություններում՝ որպես օրգանական և համակարգաձևավորող տարր, և միայն Նոր ժամանակներում է կոռուպցիան ձևափոխվում հակաիրավականի: Ժամանակակից բազմաթիվ երկրներում ֆորմալ գտնվելով օրենքից դուրս՝ փաստացի տվյալ մեխանիզմը մնում է որպես համակարգաձևավորող:

Վերաբաշխման ողջ կարևորությամբ, այն կարող է միայն ուժեղացնել առաջնորդին, ամրապնդել նրա ֆորմալ կարգավիճակը, սակայն չի հանդիսանա նրա իշխանության հիմք: Ցեղավարությունում իշխանությունը ապահովվում է ամենից առաջ կրոնական բնույթ կրող և աստվածների հետ առաջնորդի առավել մերձավոր կապերի առկայությամբ ներկայացող **գաղափարախոսությամբ**: «Ցեղավարությունը՝ իր ան-

⁴ Տե՛ս Крадин Н.Н. Политическая антропология. М. 2004.С. 119

⁵ Տե՛ս Салзин М. Экономика каменного века. М., 1999. С. 134.

⁶ Տե՛ս Салзин М. Экономика каменного века. М., 1999. С. 134.

⁷ Տե՛ս նույն տեղում:

⁸ Տե՛ս Крадин Н.Н. Политическая антропология. М. 2004.С. 120.

⁹ Տե՛ս Салзин М. Экономика каменного века. М., 1999. С. 135.

վանմանը համապատասխան կառավարվում է ցեղապետ-անհատը, ով գերակայում է այլ մարդկանց նկատմամբ և ունի նրանց *կառավարելու իրավունք*: Այդ իրավունքը անփոփոխ հենվում է առաջնորդի ենթադրվող աստվածային ծագման վրա, ինչը, իր հերթին, բնական կերպով ենթադրում է հորից՝ որդուն, տիտղոսի ժառանգականությունը»¹⁰: «Հատկապես նա /առաջնորդ/ անցկացնելով անհրաժեշտ արարողակարգերը և ճիշտ նվիրաբերություն անելով՝ պատասխանատու է հողի բերրիության և լավ բերքավորության ապահովման համար»¹¹: «Աստիճանական բազմաթիվ հին նախնադարյան հանրույթներում ձևավորվեցին իշխանության բացասական, մոգական ուժի վերաբերյալ պատկերացումներ այն մասին, որ միայն ցեղապետերը և նրանց հարազատներն են օժտված հատուկ հատկանիշներով, ինչը հնարավորություն է տալիս՝ ճիշտ տնօրինել իշխանությունը և շփումներ հաստատել անդրշիրիմյան աշխարհի հետ: Հասարակ ժողովրդի համար այդ ունակությունները հասանելի չեն, բացի դրանից, նրա ձեռքերում հայտնված իշխանությունը կարող է դառնալ վտանգավոր և վնասել նրան անձնապես և իր ամբողջ շրջապատին: Դրա արդյունքում աստիճանական ձևավորում են մեկ ծագումնաբանական գծում իշխանության և կառավարման պահպանության տենդենցներ»¹²: Առաջնորդին անհնազանդությունը՝ հանդիսանում է անհնազանդություն աստվածների: Ռ. Կարնեյրոն հետևյալ կերպ է շարադրում այդ իրավիճակը. «Երբ առաջնորդի ցանկությունը վերածվում է աստվածային կամքի, իսկ նրա հետ համաձայնությունը պարզևատրվում է անդրշիրիմյան աշխարհի հետ շփմամբ կամ որևէ այլ գերբնական հատկության պարզևատրմամբ՝ ով կառարկի: Եվ որպեսզի ճնշեն նրանց, ովքեր կհամարձակվեն առարկել՝ հաճախ հավելվում են շուտափույթ և սարսափելի պատիժների ապառնալիքներ աստվածների կողմից, եթե առաջնորդի հրամանը չկատարվի»¹³:

Ցեղավարությունում ծագած իշխանության կրոնական օրինականացումը պահպանվեց

մինչև Նոր ժամանակներ: Ցեղավարության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցանկացած հասարակության և ընդհանրապես իշխանության համակարգի համար իրական բազա հանդիսանում է գաղափարախոսությունը, այն դեպքում երբ պետության համար բնորոշ ուժային մեխանիզմները միայն հարմարեցվում են դրան: Բոլոր դեպքերում ցեղավարությունը լիարժեք կայուն չէ: Առավել ճշգրիտ, դա բավականին կայուն է որպես սոցիալական կազմակերպման ձև: Սակայն ցեղապետի կարգավիճակը ոչ միշտ է բնութագրվում կայունությամբ: Ահա ինչպես է տվյալ թեման ներկայացնում Ն.Ն. Կրադինը՝ համեմատելով մի շարք այլ անտրոպոգների մոտեցումներ. «Արտաքննապես բազմաթիվ ցեղավարությունների կառավարիչները միապետների տեսք ունեին: Սակայն իրականում նրանց իշխանությունը խիստ սահմանափակված էր: Որոշ խմբերի մոտ գոյություն ունեին սոցիալական հսկողության բավականին զարգացած մեխանիզմներ: Օրինակ՝ գոտենտների մոտ առաջնորդը կարող է տուգանել մեղավորին, հեզերների դեպքում մահապատժի վճիռ ընդունել, չնայած զգուշանում էր տվյալ պատիժը կիրառել գործնականում: Առաջնորդների կասկածները, անկասկած, պայմանավորված էին հարկադրման ինստիտուտների բացակայությամբ: Նույն աղբյուրում հաղորդվում էր, որ բանտուի բազմաթիվ առաջնորդներ սպանվեցին իրենց ցեղակիցների ճնշման հետևանքով (Schapera): Եթե առաջնորդը չէր հետևում ավագանու խորհրդին, փորձում էր՝ փոփոխել ավանդույթները, խախտում տաբուն կամ սպանություն գործում, նրան կարող էին գահընկեց անել (աշանտի, յորուբա, էգբա): Հավայական առաջնորդներից շատերը սպանվեցին նրա համար, որ ճնշել էին համայնքի հասարակ անդամներին: Վերջիններս ընդունում էին իրենց առաջնորդների իրավունքները՝ ստացված արդյունքի որոշակի մասնաբաժնի նկատմամբ, սակայն պնդում էին, որ նման հարաբերություններում պետք է պահպանվի «արդարությունը»: Եթե առաջնորդները և իր մերձավոր շրջապատը

¹⁰ Стів Кревельд Мартин ван. Расцвет и упадок государства. М., 2006. С. 19.

¹¹ Стів նույն տեղում էջ 29:

¹² Стів Крадин Н.Н. Политическая антропология. М. 2004. С. 118

¹³ Стів Карнейро Р. Было ли вождетство сгустком идей? // Раннее государство, его альтернативы и аналоги. – Волгоград. 2006. С. 224.

չարաշահում էին իրենց կարգավիճակը, ապա դա կարող էր ծնել ժողովրդական դժգոհություն: Քանի որ ցեղավարության կառավարիչները չունեին հարկադրանքի մասնագիտացված ապարատ, նման իրավիճակներում նրանց կարգավիճակը նախանձելի չէր (Սալզին)»¹⁴:

Այսպիսով, համառոտ նկարագրելով, թե ինչ էր իրենից ներկայացնում ցեղավարությունը՝ որպես քաղաքականության տեսակ և լուսաբանելով պատմություն մեջ առաջին ինստիտուցիոնալ կազմակերպված սոցիալական իշխանության բնույթը, կարող ենք անցնել դրա ծագման պատճառների և մեխանիզմների հարցի քննարկմանը:

Քանի որ ցեղավարություն երևույթը բացահայտվել է հարաբերականորեն վերջերս, գոյություն ունեն դրա ծագման սակավաթիվ հայեցակարգեր: Դրանցից առավել հայտնին պատկանում է քաղաքական անտրոպոլոգ Ռ. Կարնեյրոին: Ահա ինչ է գրում նա դրա հետ կապված. «Մի քանի փաստեր հանգեցրին նրան, որ նեոլիթի ժամանակաշրջանի գյուղերը ընդլայնեցին իրենց ինքնավարության սահմանները և ձևավորեցին մի քանի համայնքներից կազմված քաղաքական միավորներ, որն անվանում ենք ցեղավարություն: Ըստ էության, ցեղավարության ձևավորման նախադրյալներ հանդիսացան՝ գյուղատնտեսությունը, սոցիալական և բնական միջավայրով հավելվող սահմանափակումները, ժողովրդական ճնշումները և պատերազմները: Դրանք բոլորը համատեղ ստեղծել են բավարար և անհրաժեշտ պայմաններ, որոնք էլ հրահրեցին գործընթացը: Գրեթե անխուսափելիորեն դրանք հանգեցրին՝ ցեղավարությունների, իսկ հետագայում՝ առավել սահմանափակ տարածքներում, պետությունների ծագման:

Այսպես, ինչ տեսակի գաղափարներում արտահայտվեցին այդ պայմանները, երբ սկսեցին ձևավորվել ցեղավարությունները: Ըստ իմ տեսանկյան, համապատասխան գաղափարները պարզ և սակավաթիվ են, կարող են մտահանգվել ցանկացած հասարակ մարդու կողմից: Դրանք սակավաթիվ են, բացի հետևյալներից.

1. Զենքի ուժով զավթել հարևան գյուղերը:

2. Մարդկանց և նրանց տարածքները ներառել սեփական քաղաքական միավորում:

3. Մարդկանց գերեվարել և ստիպել նրանց աշխատել ինչպես ստրուկներ:

4. Օգտագործել մերձավոր զինակիցներին, զավթված տարածքների կառավարման համար, եթե տեղի առաջնորդները ապստամբության կազմակերպեն:

5. Պատերազմի դեպքում նրանցից ևս պահանջել զինվորական ուժի տրամադրում:

Այս գաղափարների շարքը բավարար է, որպեսզի ապահովվեր ցեղավարության ինտելեկտուալ ապարատը: Հնարավոր է արդյոք գտնել առավել պարզ գաղափարներ կամ արդյոք նման մտահաղացումներ չի կարող ունենալ ցանկացած անձ»¹⁵:

Այս գաղափարների իրականացումը հանգեցրեց ցեղավարության ծագման:

Մենք չենք կիսում բերված գաղափարները՝ որպես պարզ գիտնականներ, քանի որ դրանք դառնում են շոշափելի, երբ արդեն ձևավորվում են: Այս գաղափարները արմատապես հակասում են կազմակերպված համայնքների ձևավորման և զարգացման գործընթացին, քանի որ հարևան հանրությունների հետ պատերազմը նպատակ ուներ կամ պաշտպանության կամ ոչնչացման կամ թալանի կամ աքսորի: Մեկ հանրույթի ենթակայումը մյուսին նախկինում բացարձակ անհայտ ինչ-որ բան երևույթ էր, և այս թվացյալ պարզունակ գաղափարը իրականում երկար և բարդ է հասունացել: Սակայն չենք բանավիճի այս գաղափարի հետ, քանի որ հիմնական հակափաստարկները չեն վերաբերվում ռազմական ճանապարհով ցեղավարություն ձևավորման հնարավորությանը: Այս դեպքում սահմանափակվենք երկու դիրքորոշումներով:

Առաջինը, միմյանց չենթարկված հատվածներից կազմված պոլիտիայի կայուն ենթակայումը հնարավոր չէ, ինչպես հնարավոր չէ սանձահարել մոծակների խումբը: Ենթակայել հնարավոր է միայն այն հասարակությունը, որի ներսում արդեն առկա է ինստիտուցիոնալ սոցիալական ենթակայում: Նշանակում է, ենթա-

¹⁴ Տե՛ս Крадин Н.Н. Политическая антропология. М. 2004.С. 169.

¹⁵ Տե՛ս Карнейро Р.Л. Было ли вождетство сгустком идей? // Раннее государство, его альтернативы и аналоги. – Волгоград. 2006. С. 220.

կայող պոլիտիան արդեն պետք է ցեղավարություն հանդիսանար:

Երկրորդը, զավթված համայնքների հպատակման մեջ պահելու համար, մինչ հպատակվող բնակչության ընկալումներում զավթողի իշխանությունը օրինականացնող գաղափարախոսության ձևավորումը (իսկ դա բավականին բարդ և տևական գործընթաց է, որը սովորաբար ավարտին չի հասնում), անհրաժեշտ են ուժեղ և կայուն հարկադրանքներ՝ այսինքն պետական մեխանիզմներ: Դա կնշանակեր, որ պետությունը ծագել է ցեղավարությունից առաջ: Բանը նրանում չէ, որ դա հակասում է Կարնեյրոի և անտրոպոլոգների մեծամասնության դիրքորոշմանը: Եթե նման մեխանիզմներ ձևավորվեին ցեղավարության ծագման արևածագին, դրանք որևէ տեղ չէին անէանա: Ինչպես արդեն նշել ենք, չնայած ցեղավարությունում իշխանությունը հարաբերական կայուն է որպես ինստիտուտ, բոլոր դեպքերում, դրա կայունությունը հաճախ բավարար չէր՝ բարձր հուսալիությամբ կոնկրետ առաջնորդի կարգավիճակը ապահովելու և առավել բարդ ցեղավարությունների տրոհումը՝ առավել պարզերի կանխարգելման համար, որոնց օրինակները բավականին շատ են: Այլ խոսքերով, հարկադրման մեխանիզմների ուսումնասիրման նյութը բավականին ծավալուն է և հակասական ուստի վերջնական եզրահանգումներ անելը ճիշտ չէ:

Ռ.Կարնեյրոի հետ համաձայն ենք միայն նրանում, որ ցեղավարության ծագումը պայմանավորված է գործընթացներով, որոնք առկա են ոչ թե այս կամ այն պոլիտիայի ներսում, այլ դրանց միջև հարաբերություններում: Կազմավորման գործընթացի բնույթի ընկալումը հնարավոր է միայն նրա վերաբերյալ հետմարքսիստական տարածքում պատկերացումների տարածմամբ, քանի որ զարգացած բարդ համակարգերը դետերմինացվում են, ամենից առաջ, որոշակի ներքին հակասություններով (մարքսիստները դա անվանում են միասնության և հակադրությունների պայքարի օրենք): Իրականում հանրույթների զարգացումը (այստեղ այլ համակարգեր չենք դիտարկում) գլխավորապես

պայմանավորված է դրանց կառուցվածքով և առաջին հերթին ռազմական ինստիտուտի կառուցակարգերով: Գոյություն ունի պարզ կանոն՝ պարտվածները անհայտանում են: **Հանրույթների պայմանությունը հանդիսանում է միմյանց նկատմամբ դրանց փոխադարձ ուժեղացման գործընթաց: Այս մրցակցության առանցքային գործոններից մեկը հանդիսանում է սոցիալական կազմակերպման եղանակների ձևափոխությունը: Հարկապես այս տրամաբանությամբ է ծագում կենտրոնացված իշխանությունը՝ սկզբնական շրջանում ցեղավարության՝ հեղափոխում արդեն պետության ձևով:**

Կազմակերպված հանրույթներում չկան պատճառներ այն մասին, որ որոշակի ենթահամակարգ (համայնք, խումբ և այլն) ձեռք բերի իշխանություն մյուսի նկատմամբ: Բացի դրանից, նման գերակայությունը արմատապես հակասում է նման պոլիտատների գոյության կայուն եղանակին, դրանց ենթահամակարգերի համագործակցման բնույթին, որոնց հավասարությունը, փոխադարձ ընդունումն և փոխադարձ հարգանքը հանդիսանում են այդ հանրույթների գոյության կարևոր պայման: Ինչպես գրում է Մ.Սալզինը. «Այդ հանրույթները քաղաքականապես հավասար են: Որոշակի հանգամանքների պայմաններում որոշները կարող են մյուսներին գերազանցել քաջությամբ, սակայն ոչ առավել բարձր ենթակարգության դիրքորոշմամբ, նրանք բոլորը հավասար են մարդկանց աչքերում... և դա կարգավորում է նվազագույն հրահրման դեպքում: Նախանձախնդրորեն պաշտպանելով սեփական ինքնավարությունը՝ նրանք չեն ճանաչում որևէ քաղաքական հիմք, որը կարող է հակառակ հանդիսանալ իրենց սեփական շահերին»¹⁶:

Սոցիալական կազմակերպման տվյալ տիպը լիարժեք կայունություն ձեռք բերեց այն ժամանակ, երբ դրան համապատասխան ձևափոխվեց գաղափարախոսությունը: Նման ձևափոխությունը, որը հաստատում է, ինչպես արդեն հիշատակվել է առաջնորդի ծագումնաբանական կապը գերբնական ուժերի հետ՝ ապահովեց ցեղավարության ձևավորումը:

¹⁶ Sahlins M. Sahlins. Tribal Culture and Its Transformations// Shared diversity: peoples and cultures in the global village. Texas A&M University. Dept. Of Anthropology. 2002. P. 56.

ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ

Ժամանակակից ազգային իրավունքին վերաբերվող բազմաթիվ հարցերի շարքում ավանդաբար հետազոտողները հատուկ ուշադրություն են հատկացնում իրավունքի աղբյուրների հարցերին՝ դրանց հասկացությանը, բովանդակությանը, իրավունքի նորմերի հետ հարաբերակցությանը, իրավական համակարգում դրանց դերին և նշանակությանը ու այլն¹: Եվ պատահական չէ, քանի որ տվյալ հարցը ունի հսկայական ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն²: Նրանից, ինչպես է ընկալվում իրավունքի աղբյուրը, ինչպես են դրանք հարաբերակցվում այլ միակարգ երևույթների և հասկացությունների հետ, ներառելով ամենից առաջ իրավունքի ձևը, իրավունքի որակով այս կամ այն իրավաբանական համակարգերում ինչ իրավաբանական կարևոր երևույթներ են ընդունվում, և ինչպիսիք են որպես նմանատիպ չընդունվողները, անմիջական կախված է իրավական համակարգի բնույթից և բովանդակությունից՝ դրա սոցիալական արժեքից և արդյունավետությունից:

Չոչնչացնելով ժամանակակից ազգային իրավունքի նկատմամբ իրավունքի աղբյուրների ընդհանուր տեսական և մեթոդաբանական խնդիրների ողջ համալիրը ուշադրություն դարձնենք միայն որոշ հանգամանքների:

Ամենից առաջ անհրաժեշտ է նշել որոշ դեպքերում հայրենական և օտարերկրյա հեղինակների իրավունքի աղբյուրների և իրավունքի ձևերի հետ դրանց հարաբերակցության մասին պատկերացումների անհամարժեքությունը, իսկ առավել ճշգրիտ միակողմանությունը: Որոշ դեպքերում դրանք լիարժեք և անբեկանելի նույնականացվում են, իսկ մյուսներում՝

նույնքան անզիջում բաժանվում և մեկուսացվում միմյանցից:

Միաժամանակ ինչպես իրավունքի աղբյուրների և ձևերի բովանդակության, հասկացությունների բազմակողմ ուսումնասիրությունները, ինչպես նաև միմյանց հետ դրանց փոխազդեցությունների վերլուծությունը ուղղակի վկայում է, որ որոշ հարաբերություններում իրավունքի ձևը և աղբյուրը կարող են համընկնել և դիտարկվել որպես նույնական, սակայն այլ հարաբերություններում կարող են էական տարբերվել և չնույնականացվել:

Իրավունքի աղբյուրի և ձևի համընկումը առկա է այն դեպքում, երբ խոսք է գնում, այսպես կոչված, իրավունքի երկրորդային, ֆորմալ-իրավաբանական աղբյուրների մասին: Վերջինս գիտական գրականությունում հաճախ անվանում են իրավունքի ֆորմալ աղբյուր: Դրանով իսկ ընդգծվում է, բացի ամենից, իրավունքի ձևի և աղբյուրի նույնականությունը, որտեղ ձևը ցուցում է այն, թե ինչպես, ինչ կերպ է կազմակերպված և արտահայտված իրավաբանական (նորմատիվ) բովանդակությունը, իսկ աղբյուրը՝ այն, ինչպիսիք են իրավունքի դիտարկվող ձևը և դրա բովանդակությունը կանխորոշող իրավաբանական և այլ աղբյուրները: Տիպիկ օրինակ կարող է հանդիսանալ օրենքը կամ ցանկացած այլ նորմատիվ-իրավական ակտը:

Ինչ վերաբերվում է իրավունքի առաջնային աղբյուրներին, որոնք դիտարկվում են նյութական, սոցիալական կամ այլ գործոնների որակով, ունեն մշտական ազդեցություն և կանխորոշում են իրավաձևավորման, իրավաստեղծման և օրինաստեղծ գործընթացները, այս դեպքում

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 122 2021

¹ Տե՛ս Марченко М.Н.Источники права.М., 2014.

² Տե՛ս նաև Лейст О.Э. Сущность права. Проблема теории и философии права, М, 2002, Источники (формы) права: вопросы теории и истории// Материалы Всероссийской научной конференции.Сочи,2002,Матузов Н.И. А.ктуальные проблемы теории права.Саратов,2003.

քում իրավունքի աղբյուրների իրավունքի ձևերի հետ համընկում չկա և չի կարող լինել:

Դրա պատճառներից մեկը ամփոփվում է նրանում, որ քննարկվող երևույթները գտնվում են տարբեր մակարդակներում և «սպասարկում» տարբեր ոլորտներ: Նյութական, սոցիալական և այլ աղբյուրները՝ իրավաստեղծ և օրինաստեղծ գործընթացների վրա ազդեցության գործոնները դասվում են համապատասխան նյութերին և կյանքի այլ իրական ոլորտներին:

Ինչ վերաբերվում է իրավունքի ձևերին, ինչպես և իրավունքին, ապա դրանք ասոցացվում են հասարակության կյանքի ֆորմալ (ֆորմալ իրավաբանական) ոլորտների հետ, իսկ առավել ճշգրիտ՝ հասարակության կյանքի բարոյական, սոցիալական և այլ իրական ֆորմալ-իրավական ասպեկտների հետ:

Ելնելով շարադրվածից՝ կարելի է կատարել եզրակացություն նրա վերաբերյալ, որ իրավունքի հասկացությունների ձևերի և աղբյուրների համընկման դեպքում դրանք նշող տերմինները անհրաժեշտ է դիտարկել նույնական ըստ իրենց բովանդակային արժեքի և իմաստի: Մնացյալ բոլոր դեպքերում տվյալ տերմինների նման փոխադարձ փոխարինումը, դիտարկվող երևույթների և դրանք արտացոլող հասկացությունների անհամարժեքության ուժով, բացառվում է:

Սակայն ուսումնական, հաճախ նաև գիտական գրականության մեջ «իրավունքի աղբյուրներ» և «իրավունքի ձևեր» տերմինների և հասկացությունների տարբեր իմաստային երանգներին էական նշանակություն չի տրվում, և դրանք գրեթե բոլոր դեպքերում դիտարկվում են որպես նույնական:³ Դրա պատճառներից մեկը կայանում է նրանում, որ նման մոտեցման դեպքում որոշակի տուրք է տրվում իրավունքի աղբյուրների և ձևերի իմացության ոլորտում ձևավորված յուրահատուկ ավանդույթներին:

Դիտարկելով ժամանակակից հայկական իրավունքի աղբյուրները, անհրաժեշտ է դրանց առավել խորը և բազմակողմ հետազոտության նպատակներով հատուկ ուշադրություն դարձ-

նել այնպիսի ավանդական, սակայն իրավաբանական գրականությունում քիչ կիրառվող իմացության միջոցներին, ինչպես համեմատական (հայրենական իրավունքի աղբյուրների համեմատում օտարերկրյա իրավունքի աղբյուրների հետ) և համակարգային մեթոդները և դրանց բնույթին համապատասխանող հիերարխիկ մոտեցմանը⁴:

Անհրաժեշտ է նշել, որ իրավունքի աղբյուրների վերլուծության նկատմամբ համակարգային մոտեցման կիրառությունը, հավասարազոր դրանց հիերարխիկ կապերի և փոխազդեցությունների տեսանկյունից դիտարկումը, պայմանավորված է ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան այս կամ այն հետազոտողի սուբյեկտիվ տեսանկյուններով, պրեֆերացիաներով, որքան ուսումնասիրվող նյութի օբյեկտիվ-համակարգային և հիերարխիկ հատկություններով:

Իհարկե, դիֆերենցված, հարաբերական ինքնուրույն և միմյանցից հարաբերական զատված ձևով դիտարկվող իրավունքի ձևերի (աղբյուրների) համակարգավորվածության և հիերարխիկության մակարդակը միանման չէ, և բացի դրանից, ոչ միշտ ակնհայտ: Առավել հստակ այն արտահայտվում է իրավունքի այնպիսի ձևերում, ինչպես նորմատիվ-իրավական ակտերը: Առավել հստակ՝ իրավունքի մնացյալ աղբյուրներում: Սակայն իրավունքի տարբեր աղբյուրների միջև համակարգավածությունն և աստիճանակարգությունը միշտ առկա է և այս կամ այն ձևով միշտ արտահայտվում է:

Ելնելով համակարգավորվածության սկզբունքից՝ ժամանակակից ազգային իրավունքի ձևերի (աղբյուրների) համախմբումը, կազմված օրենքներից, դատական ակտերից, իրավական պայմանագրերից, իրավական ավանդույթներից (գործնական շրջանառության ավանդույթներ) և այլ աղբյուրներից, անհրաժեշտ է դիտարկել ազգային (ներպետական) իրավունքի ձևի ընդհանուր համակարգի որակով, որը հանդիսանում է այդպիսին իր սահմաններում ծագող և գործող մյուսների՝ մասնավոր համակարգերի (ենթահամակարգերի) նկատմամբ:

Մասնավոր համակարգերի (ենթահամա-

³ См. Теория государства и права / Под ред. М.М. Россолова, В.С. Лучина и Б.С. Эбзеева М.2000.С. 186-188.

⁴ См. Азим Д.М. Система права и ее строение: методологические методы и решения. М, 2014.

կարգերի) որակով կախված դրանց ձևակերպման այս կամ այն չափորոշիչներից, իսկ առավել հստակ, տարբեր ձևերի ստորաբաժանումից, դասակարգումից, կարող են ծագել, օրինակ, իրավունքի առանձին ոլորտների աղբյուրների համակարգեր, որոնցում կառուցվածքային տարրերի որակով ներառվում են համապատասխան օրենքները, կառավարական որոշումները, տեղի օրենսդրական և գործադիր ակտերը, նորմատիվ բնույթ ունեցող դատական ակտերը և այլն: Կախված ոլորտային պատկանելիությունից յուրաքանչյուր իրավական համակարգում առկա են սահմանադրական, քաղաքացիական, վարչական և իրավունքի այլ ոլորտների հարաբերական ինքնուրույն ձևերի (աղբյուրների) համակարգ:

Իրենց հերթին, իրավունքի աղբյուրի մասնավոր համակարգերը (ենթահամակարգերը) կարող են ստորաբաժանվել և փաստացի ստորաբաժանվում են «առավել մասնավորների» կախված իրենց ձևավորող իրավունքի աղբյուրներից, յուրահատուկ «մասնագիտացված» մասնավոր համակարգերի (ենթահամակարգերի): Իրավունքի այս կամ այն ոլորտում նմանատիպների որակով կարող են հանդես գալ, օրինակ, իրավունքի տվյալ ոլորտի առարկա կազմող օրենսդրական ակտերի կամ այն ակտերի համակարգերը, որոնք բխում են հասարակական հարաբերությունները կարգավորող տարբեր գործադիր-օրենսդրական մարմիններից:

Բացի դրանից, իրավունքի աղբյուրների մասնավոր համակարգերը (ենթահամակարգերը) կարող են դասակարգվել նաև ըստ այլ չափորոշիչների:

Ժամանակակից ազգային իրավունքի աղբյուրների հիերարխիկ բնույթը, որը ամենից առաջ, բնորոշ է նորմատիվ-իրավական ակտերի ամբողջ համակարգին (ենթահամակարգին), արտահայտվում է նրանում, որ տվյալ մասնավոր համակարգի կառուցվածքային տարրերը ազգային իրավունքի շրջանակներում առանց բացառության բոլոր առկա ձևերը ընդգրկող

ընդհանուր համակարգի նկատմամբ վերջինիս մեջ գրավում են հստակ սահմանված, իրենց իրավաբանական ուժով և սոցիալական արժեքով պայմանավորված տեղը⁵:

Ելնելով որպես «վերևից դեպի ներքև կարգով մակարդակների միջև համագործակցության կարգավորման բարդ բազմամակարդակ համակարգերի կառուցվածքային կազմակերպման սկզբունք» հիերարխիայի վերաբերյալ ընդհանուր պատկերացումներից⁶ իրավունքի տվյալ ձևերի նկատմամբ կիրառական կարելի է ասել հետևյալը, ա) ակտերի-իրավունքի ձևերի յուրաքանչյուր տեսակի իրավաբանական ուժը և սոցիալական արժեքը կախված է նրանից, թե պետական մարմինների համակարգում ինչ տեղ է գրավում մարմինը, ով հոչակել է տվյալ ակտը, այսինքն այլ խոսքերով, նորմատիվ-իրավական ակտերի հիերարխիան կանխորոշվում է համապատասխան պետական մարմինների հիերարխիայով, բ) ստորադաս մարմինների ակտերը պետք է գտնվեն վերադաս մարմինների ակտերի հետ համապատասխանության մեջ, իսկ դրանք բոլորը համատեղ, և դրանցից յուրաքանչյուրը առանձին պետք է համապատասխանեն սահմանադրությանը, գ) ստորադաս և վերադաս մարմինների ակտերը չպետք է փոխարինեն միմյանց, մասնավորապես «վերադաս մարմինը իրավասու չէ ստանձնել հարցերի լուծումը, որոնք ընդգրկվում են ստորադաս մարմինների լիազորություններում»⁷, դ) առավել կարևոր հասարակական հարաբերությունները, որոնք ենթակա են կարգավորման օրենսդրական կարգով, պետք է միջնորդվեն միայն օրենքով, և ե) ստորադաս մարմինների ակտերը կարող են փոփոխվել կամ չեղարկվել միայն այն հոչակած մարմինների, կամ վերադաս մարմինների կողմից:

Նորմատիվ-իրավական ակտերի՝ իրավունքի ձևերի աստիճանակարգությունը հարաբերակցվում է ոչ միայն համապատասխան պետական մարմինների հիերարխիկության հետ, որոնցից բխում են տվյալ ակտերը, այլ նաև ազգային իրավունքի համակարգի համապա-

⁵ Տե՛ս Шибанов А.Ф. Форма советского права.М, 1986.С.197-200, Тлембаева Ж.У.Проблемы иерархии нормативных правовых актов:Автореф.дис...,канд.юрид. наук. Алматы, 2000.С.3-19 и др.

⁶ Տե՛ս Философский энциклопедический словарь.М, 1983.С.201.

⁷ Տե՛ս Шибанов А. Ф. նշվ. աշխ., էջ 198:

տասխան որակից: Իրավունքի համակարգը, դրա հետ կապված արդարացի նշում է Դ. Քերիմովը, դա «ոչ թե ուղղակի դրա ենթահամակարգերի համախումբ է, այլ ենթահամակարգերի համակարգ», որի բազայով և որի շրջանակներում ձևավորվում է մասնավոր համակարգերի հիերարխիան, «ստեղծվում իրավական համակարգի նրբագեղ կառույցը, հիմքից (բազմաձև իրավական նորմաների համակարգից) միջանկյալ «հարկերի» միջոցով (իրավունքի ինստիտուտների և ոլորտների համակարգի) դեպի դրա գագաթ (իրավունքի համակարգ)»⁸:

Հանդիսանալով համակարգավորվածության և աստիճանակարգության սկզբունքների հիման վրա ստեղծված՝ ռուսական ազգային իրավունքի ձևի ընդհանուր համակարգը կոնկրետացվում է իր շրջանակներում ծագող պահանջված մասնավոր համակարգերին (ենթահամակարգերին) զուգահեռ և իրականացվում դրանց միջոցով⁹: Տվյալ իրավիճակը հավասար աստիճանով վերաբերվում է ինչպես իրավական երևույթների, այնպես նաև դրանք արտացոլող հասկացությունների բոլոր ձևերին: Երկուսն էլ կառուցվում և հարաբերակցվում են միմյանց հետ ոչ միայն համակարգավորվածության, այլ նաև հիերարխիկության սկզբունքի հիման վրա:

Վերջինիս էությունը ընդհանրացված ամփոփվում է գերադրապես նրանում, որ առանձին վերցված ակտերը և, համապատասխանաբար, դրանց տեսակները (օրենքներ, հրամաններ, կառավարական որոշումներ և այլն) օժտված են իրավաբանական մեծ ուժով, քան մյուսները, և դրանց միջև կոլիզիաների ծագման դեպքում առավելությունը միշտ տրվում է վերջիններիս նկատմամբ առաջիններին:

Միևնույն ժամանակ, ինչպես ճշմարիտ նշվում է գիտական գրականության մեջ, իրավական դրույթի և դրանով միջնորդվող նորմաների իրավական ուժի մեծությունը կամ արժեք «իրավական համակարգի հիերարխիկ աստի-

ճանում սկզբունքային համապատասխանում է վերացարկում-կոնկրետություն և ընդհանրացվածություն-անհատականություն հարաբերակցությամբ»¹⁰:

Կարևոր է նաև ընդգծել, խոսելով «իրավական համակարգի հիերարխիկ աստիճանի» առանձնահատկությունների մասին, որ հիերարխիկ բաղադրիչի հիմքում տեղակայված իրավական նորմերի և դրանց համապատասխանող՝ դրանք «կազմակերպող» և դրանք արտաքինում ներկայացնող, իրավական ձևերի «իրավական ուժի մեծությունը» չի հանգեցվում, ինչպես դա փոքր-ինչ պարզեցված ներկայացված է գրականության մեջ¹¹, միայն ստորադաս մարմինների ակտերի վերադաս մարմինների համապատասխան ակտերի անմիջական («բացարձակ») ենթակայությամբ: Տարբեր իրավաբանական ուժի ակտերի միջև անմիջական ենթակայության կապերին զուգահեռ ստորադաս մարմինների ակտերում անպայման հաստատվում և այս կամ այն կերպ արտահայտվում են վերադաս մարմինների ակտերի բովանդակության կոորդինատավորման, փոխլրացման¹², դետալավորման կապերը:

Հատկապես կապերի այս համախմբում, որոնք «ուղեկցում են» վերադաս մարմինների ակտերին ստորադաս մարմինների ակտերի ենթակայման իրականացման և հաստատման գործընթացներին, կայանում է իրավունքի աղբյուրների հիերարխիկ ձևերի սկզբունքի իմաստն և բովանդակությունը:

Տարածվելով առանց բացառության իրավունքի բոլոր ձևերի վրա՝ տվյալ սկզբունքը, սակայն, ինչպես և համակարգավորվածության սկզբունքը, ունի իր առանձնահատկությունները կիրառական իրավունքի տարբեր ձևերի նկատմամբ:

Առավել վառ և անմիջական այն արտահայտվում է, օրինակ, նորմատիվ-իրավական ակտերի հարաբերություններում, միաժամանակ դրանց հիերարխիկ կառուցված համակարգը (ենթահամակարգը) ոչ միայն հռչակ-

⁸ Տե՛ս Кемиров Д.А.Методология права:Предмет, функция, проблемы философии права.М, 2000,с.253.

⁹ Տե՛ս Гурова Т.В. Актуальные проблемы теории источников права:Автореф.Дис...канд. юрид.наук.Саратов, 2000.С.18-21.

¹⁰ Տե՛ս Мицайкой М. Иерархия в праве //Вестник МГУ.Сер.11.Право.1999.6.С.70

¹¹ Տե՛ս Галлиан Д., Полянский В.В., Стариков Ю,Н.Административное право:история развития иновные современные концепции.М,2002.С.92-142.

¹² Տե՛ս Тлембаева Ж.Указ.соч.С.17-19.

վում է, որպես կանոն, օրենսդրական համակարգի ձևով, այլ նաև ամրագրվում իրավական կարգով:

Կախված այս կամ այն իրավական համակարգի առանձնահատկություններից դրա օրենսդրական ամրագրումը կատարվում է կամ սահմանադրական, կամ սովորական կարգով՝ ընթացիկ օրենսդրության մակարդակում, կամ միաժամանակ երկու կարգով: Դա նշանակում է, որ բացի սահմանադրական ամրագրումից նորմատիվ-իրավական ակտերի համակարգը, կառուցված ըստ հիերարխիկ համակարգի, սահմանվում և ամրագրվում է նաև սովորական օրենքներում (ինչպես ՀՀ-ում):

Իրավունքի տրված ձևերի և որոշ այլ ձևերի միմյանց հետ հիերարխիկ հարաբերությունների վերաբերյալ կարելի է խոսել բավականին պայմանական, հենվելով «գիտակցության եզրակացություններին», որոնց համաձայն երկրում չի կարող առկա լինել կայուն և հաստատուն իրավակարգ, եթե հստակ չսահմանվի և ամրագրվի իրավունքի ձևի ընդհանուր համակարգում իրավունքի յուրաքանչյուր աղբյուրի տեղն և դերն: Իսկ դա անհրաժեշտաբար և անխուսափելի ենթադրում է դրանց կառուցվածքը և գործառնությունը ոչ միայն իրավունքի ձևերի համակարգավորվածության, այլ նաև հիերարխիկության սկզբունքի հիման վրա:

Ինչ վերաբերվում է օրենքի հետ իրավունքի տվյալ ձևերի (աղբյուրների) հարաբերությունների հիերարխիկ բնույթին, ապա երկրների մեծամասնության իրավական համակարգերում, ովքեր ընդունում են օրենքի գերակայության սահմանադրորեն ամրագրված սկզբունքը, այս հարցը լուծվում է միանշանակ, իրավունքի ձևի հիերարխիայում վերին աստիճան անփոփոխ զբաղեցնում է միայն օրենքը:

Դրանից հղվելով կարելի է ասել, որ հարաբերությունների հիերարխիկ բնույթ առկա է իրավունքի տարբեր ձևերի (աղբյուրների) միջև, մի կողմից, նաև տարբեր սահմանադրական և ընթացիկ օրենքների միջև, մյուս կողմից, անկախ նրանից, ծագում են դրանք օրենքների հիման վրա և օրենքների զարգացմամբ, ինչպես դա առկա է օրենսդրական ակտերում, կամ ծագում են միայն օրենքներով հաստատ-

ված ընդհանուր պահանջների շրջանակներում, և չեն հակասում օրենքներին, ինչպես դա տեղի է ունենում իրավունքի բոլոր այլ ձևերի հետ:

Նման հիերարխիան, ըստ հետազոտողների արդարացի նշմամբ, «ձևավորվում է իրավական կարգի բարդ կառույցի հիման վրա պետության շրջանակներում որպես որոշակի միասնության գործառնության նպատակներով: Իրավական ակտերի և նորմաների շարքում անարխիայի և քառասյնության փոխարեն հիերարխիան իրավակարգի շրջանակներում ապահովում է վերջիններիս փոխկապվածությունը և համաձայնեցվածությունը»¹³:

Կարևոր է նաև ընդգծել, որ իրավունքի ձևերի հիերարխիան, ինչպես նաև դրանց համակարգավածությունը, օբյեկտիվորեն անհրաժեշտ են ինչպես ռուսական, այնպես նաև այլ ցանկացած իրավական համակարգի համար՝ դրա պահպանման, զարգացման և արդյունավետ գործման համար: Առանց դրա չկա և չի կարող լինել որևէ իրավական համակարգ, իսկ միաժամանակ որևէ կարգավորվածություն հասարակական հարաբերություններում, ինչն էլ օբյեկտիվ անհրաժեշտ է ցանկացած հասարակության և պետության նորմալ զարգացման համար՝ ներառելով, իհարկե, նաև ռուսականը:

Տեսական-մեթոդաբանական և գործնական առումով ժամանակակից ազգային իրավունքի աղբյուրների հետազոտության գործընթացում կարևոր նշանակություն ունեն դրանց զարգացման հիմնական միտումների բացահայտումը և դիտարկումը, մասնավորապես ժամանակակից ազգային իրավունքի աղբյուրների ընդլայնման և դրանց դերի ուժեղացման միտումները:

Միաժամանակ նկատվում է երկրում շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ ներպետական պայմանագրային ակտերի, ՀՀ միջազգային պայմանագրերի, լոկալ իրավական ակտերի, որը պաշտոնապես իրավունքի աղբյուր չի ընդունվում, սակայն իրականում գոյություն ունի և գործում է նման դատական պրակտիկայի (նախադեպի) որակով, գործնական շրջանառության ավանդույթների կարգավորիչ դերի և նշանակության աճ:

¹³ Տես Мицайков М. նշվ. աշխ., էջ 69:

ԼԻԼԻԹ ԶԻՐՈՅԱԼ

Եվրոպական համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Բնապահպանական անվտանգության պահանջների կատարման գործընթացը գտնվում է անընդհատ զարգացման մեջ և կախված է բազմաթիվ դրական և բացասական հանգամանքներից: Էկոլոգիական վտանգի սպառնալիքների հետ կարելի է պայքարել միայն համատեղ կառավարման և բազմակողմանի գործողությունների և մեխանիզմների ճանապարհով:

Օ. Ս. Կոլբասովը գրում է. «Պատմականորեն պետք է փոխվեն բնության պահպանության խնդիրները և բովանդակությունը, բայց համակարգված աշխատանքի անհրաժեշտությունը, որն ուղղված է հասարակության զարգացման և բնական միջավայրի միջև ներդաշնակության պահպանմանը, մնում է հավերժ»¹:

Իրավունքների ճանաչումը խթանում է քաղաքացիների իրավագիտակցության, բնապահպանական իրազեկության և մշակույթի աճին, պետության գործունեությանը այս ոլորտում, քանի որ բարենպաստ միջավայրի իրավունքի իրացումը, այլ բնապահպանական իրավունքներ ենթադրում են համապատասխան վարք պահանջելու կարողություն առաջին հերթին՝ պետական մարմիններից, ինչպես նաև նպաստում է քաղաքացիների ներգրավմանը շրջակա միջավայրի պահպանության գործում²:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածում նշված էր. «Պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը», իսկ 48-րդ հոդվածում նախատեսված էր «տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են իրականացնել ներկա և ապագա սերունդների

բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն»³:

ՀՀ Սահմանադրություն առաջին անգամ ներմուծվել էր «բնապահպանական անվտանգություն» տերմինը և հանդիսանում էր պետության քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածում ամրագրված է.

1. «Պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:
2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»⁴:

Կայուն զարգացման սկզբունքի նախատեսումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում շատ կարևոր է, քանի որ 2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակներն՝ ընդունված աշխարհի երկրների առաջնորդների կողմից 2015թ. սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի պատմական գագաթնաժողովի ժամանակ: Նպատակների մեջ ներառված են նաև կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները: Կայուն զարգացման նպատակներն իրավաբանորեն պարտադիր չեն, կառավարություններից ակնկալվում է ստանձնել հանձնառություններ և

¹ Sեն Колбасов О.С. Экология:–Политика–право., Москва, 1976., էջ 27:
² Sեն Саркисов, О.Р. С20 Экологическое право: учеб. пособие для студ. учреждений высшего проф. образования / О.Р. Саркисов, Е.Л. Любарский. –5-е изд. переработанное и доп – Казань: Центр инновационных технологий, 2014. էջ 82. Հղումը <https://kpfu.ru/portal/docs/F331996391/PRAVO.pdf>:
³ Sեն ՀՀ Սահմանադրություն, 2005 թվականի փոփոխություններով:
⁴ Sեն ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններով:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 122 2021

մշակել ազգային ծրագրեր այդ 17 նպատակների հասնելու համար⁵:

Իսկ ինչ վերաբերում է պետության քաղաքականության հիմնական նպատակներին, ապա 86-րդ հոդվածում լիովին բացակայում է բնապահպանական անվտանգության ապահովումը:

Ուսումնասիրելով ՌԴ Սահմանադրությունը, տեսնում ենք, որ քաղաքացիների էկոլոգիական իրավունքների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման խնդիրը մտնում է Ռուսաստանի Դաշնության Կառավարության իրավասության մեջ: Իր սահմանադրական ամրագրումն այդ դրույթը գտնում է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 114-րդ հոդվածի առաջին մասում, որի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն ապահովում է Ռուսաստանի Դաշնությունում էկոլոգիական ոլորտում միասնական պետական քաղաքականության անցկացումը: Նշված հոդվածի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունն իրականացնում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման միջոցառումներ, ուր մտնում է նաև նշված իրավունքը⁶:

Հունաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրված է, որ «Շրջակա և մշակութային միջավայրի պահպանությունը հանդիսանում է պետության պարտականությունը: Վերջինս դրա պահպանության նպատակներով հատուկ ապահովության և պատժիչ միջոցներ է ձեռք առնում: Օրենքը կանոններ է սահմանում անտառների և անտառածածկ տարածքների ընդհանրապես պահպանության համար:

Արգելվում է փոփոխել պետությանը պատկանող անտառների և անտառածածկ տարածքների օգտագործման կարգը, բացի ազգային տնտեսության շահերի և պետության այլ նպատակների համար դրանց գյուղատնտեսական օգտագործման համար»⁷:

Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրության 69-րդ հոդվածում նշվում է, որ «յուրաքանչյուր ոք ունի առողջ կենսակերպ վարելու իրավունք: Պետությունը ապահովում է առողջ շրջակա միջավայր ունենալու քաղաքացու իրավունքը»:

Քաղաքացիները, պետական հանրային և տնտեսական մարմինները և միավորումները պարտավոր են իրենց իրավասության սահմաններում հատուկ հոգատարություն ցուցաբերել մարդկանց առողջության, բնության և շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ⁸:

Բուլղարիայի Հանրապետության Սահմանադրության 15-րդ հոդվածում ամրագրված է, որ «Բուլղարիայի Հանրապետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, կենդանի բնության և դրա զանազանության պահպանումը և երկրի բնական հարստությունների և ռեսուրսների խելամիտ օգտագործումը», իսկ 55-րդ հոդվածում՝ «Քաղաքացիները ունեն առողջ և բարենպաստ շրջակա միջավայրի իրավունք՝ սահմանված ստանդարտներին և նորմ երին համապատասխան: Նրանք պարտավոր են խնայել շրջակա միջավայրը»⁹:

Ուսումնասիրելով մի շարք պետությունների սահմանադրություններ, տեսնում ենք, որ պետությունների պարտականությունների շարքում պարտադիր ներառված է շրջակա միջավայրի և բնապահպանական անվտանգության ապահովման պահպանությունը:

Ուստի գտնում ենք, որ ավելի քան անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 86-րդ ամրագրված պետության քաղաքականության հիմնական նպատակների մեջ ներառել նաև «բնապահպանական անվտանգության ապահովումը»:

Սահմանադրության համաձայն, անձը, նրա իրավունքներն ու ազատությունները բարձրա-

⁵ Տե՛ս <http://un.am/hy/p/sustainabledevelopmentgoals/>:

⁶ Տե՛ս ՌԴ Սահմանադրություն 12.12. 1993թ.

Հղումը https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/russia/russia-r.htm:

⁷ Տե՛ս 11.06.1975թ. Հունաստանի Հանրապետության Սահմանադրություն հղումը https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/greece/greece-e.htm:

⁸ Տե՛ս /22.12.1990թ. Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրություն հղումը <https://legalns.com/>:

⁹ Տե՛ս 13.07.1991թ. Բուլղարիայի Հանրապետության Սահմանադրություն հղումը https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/bulgaria/bulgar-r.htm:

գույն արժեք են, և դրանց ճանաչումը, պահպանումը և պաշտպանությունը պետության պարտականությունն է: Բնապահպանական օրենսդրության առաջնային խնդիրներից մեկը շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների ապահովումն է¹⁰:

Բնապահպանական անվտանգության և բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքի սահմանադրաիրավական երաշխիքներին վերաբերում են.

- առաջին հերթին՝ իրավական ինստիտուտների սահմանումը, որոնք բազային են հանդիսանում տվյալ իրավունքի իրավաբանական պաշտպանության բոլոր երաշխիքների համար,
- երկրորդը՝ «բնապահպանական անվտանգություն» հասկացության, էկոլոգիական իրավունքների և դրանց իրականացման երաշխիքների սահմանադրական ամրագրումը,
- երրորդը՝ պետական իշխանության մարմինների կողմից մարդու իրավունքները պաշտպանելու կոչված պետական մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողության ապահովումը:

Մարդու և քաղաքացու իրավունքներին հետևելը նշանակում է մի կողմից՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների համար անհրաժեշտ բոլոր պայմանների ստեղծում, մյուս կողմից՝ այդ իրավունքները և ազատությունները ոտնահարող կամ խախտող ցանկացած գործողություններից ձեռնպահությունը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման ապահովման յուրաքանչյուր միջոցառում՝ էկոլոգիական նորմավորում, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում, էկոլոգիական փորձաքննություն, սերտիֆիկացիա, աուդիտ, շրջակա միջավայրի վիճակի դիտարկում, վերահսկողություն և այլն, իրականացնում է միայն իրեն հատուկ գոր-

ծառույթներ այս գործունեության մեխանիզմում:

Գործունեության վերոնշյալ բոլոր տեսակները կոչված են ապահովելու բարենպաստ շրջակա միջավայրի և բնապահպանական անվտանգության իրավունքը:

Բնապահպանության անվտանգության ոլորտում օրինաստեղծ գործունեության հետ կապված նշենք, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներից մեկն էլ հանդիսանում է Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի հանձնաժողովը, որի գործունեության ոլորտների մեջ ներառված է շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացում և այդ ոլորտները կարգավորող օրենքներ: Մշտական հանձնաժողովներն ստեղծվում են օրենքների նախագծերի, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող այլ հարցերի նախնական քննարկման եւ դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու, ինչպես նաեւ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու համար¹¹:

Ուսումնասիրելով բնապահպանության անվտանգության ոլորտին վերաբերող իրավական ակտերը նշենք, որ նախատեսվում էր «էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը դեռևս չի ընդունվել, ինչպես նաև կարծում ենք, որ անհրաժեշտ է «բնապահպանական անվտանգություն» հասկացության և դրա ապահովման սկզբունքների հստակ ձևակերպումը և բնորոշման ներմուծումը երկրի օրենսդրական բազա, նաև բնապահպանական օրենսդրության գործողության մեխանիզմների վերլուծությունը և գործունեության կոնկրետ ոլորտներում բնապահպանական անվտանգության ապահովման պահանջներ պարունակող նորմերի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակումը:

Բնապահպանական անվտանգության ոլորտում իրավասություններ իրականացնող գործադիր իշխանության մարմիններ են հանդի-

¹⁰ Стн Экологическое право: учебник / под ред. С. А. Боголюбова. – Э40 2-е изд., перераб. и доп. – М.: Издательство Юрайт; ИД Юрайт, 2011. էջ 70. հղումը <http://lib.mau.pfib.kg/wp-content/uploads/YEkologicheskoe-pravo2.pdf>:

¹¹ Стн Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը Ազգային ժողովի կանոնակարգ, հոդված 10, ընդունվել է 16.12.2016թ.:

սանում առաջին հերթին՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, նախարարությունները՝ Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարությունը: ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների մասին ՀՀ օրենքում կառավարության ենթակա մարմինների մեջ 4-րդ հոդվածում նշված է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, իսկ 6-րդ հոդվածում նախարարության ենթակա մարմիններում՝ Ջրային կոմիտեն և Անտառային կոմիտեն¹²:

Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքներ ընդունելու մասին ՀՀ Գերագույն խորհրդի որոշման մեջ հստակ ներառված էին պետության պարտականությունները բնության պահպանության ոլորտում, բնության պահպանության ապահովման տնտեսական մեխանիզմը, ինչպես նաև նշված էր «պետական էկոլոգիական հսկողության խնդիրն է ապահովել բնապահպանական օրենսդրության պահանջների կատարումը բոլոր պետական մարմինների, ձեռնարկությունների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց, քաղաքացիների կողմից:

Բնապահպանական օրենսդրության ճշգրիտ և միատեսակ կատարման նկատմամբ բարձրագույն հսկողությունն իրականացնում է էկոլոգիական դատախազությունը: Բնական միջավայրի պահպանության նկատմամբ հսկողությունն իրականացնում է նաև հանրապետության գլխավոր սանիտարական բժիշկը և էկոնոստիկանությունը»¹³:

Գտնում ենք, որ առանձին ուշադրություն պետք է դարձնել բնապահպանական անվտանգության ապահովման տնտեսական բաղադրիչին, քանի որ բնապահպանական ճգնաժամից դուրս գալը հնարավոր է միայն շրջակա միջավայրի պահպանության գոյություն ունե-

ցող տնտեսական մեխանիզմի ուղղման միջոցով:

Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը նախատեսում է դատական և վարչական մարմինների գործողություններ, որոնք ուղղված են խախտված իրավունքի վերականգնմանը և խախտման թույլ չտալուն:

Քննարկվող իրավունքի առավել արդյունավետ երաշխիքներից մեկը հանդիսանում է դատարանը, որի խնդիրը կայանում է կամայականության ցանկացած արտահայտություններից մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության մեջ:

ՀՀ Քրեական օրենսգրքի 10-րդ բաժնի 27-րդ գլուխը նվիրված է «Շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործություններին», որը ամփոփված է 281-298-րդ հոդվածներում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում էկոլոգիական իրավախախտումները ներառված են 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 14-րդ գլուխներում:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածում ամրագրված է, որ «յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունք»¹⁴:

Յուրաքանչյուր ոք, սահմանադրությամբ կամ օրենքով իրեն վերապահված հիմնարար խախտման դեպքում, ունի ներպետական իրավասու ատյանների կողմից արդյունավետ պաշտպանության իրավունք¹⁵:

2001թ. Հայաստանի Հանրապետությունը դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ: Միանալով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կովենվեցիային, Հայաստանի Հանրապետությունը

¹² Տե՛ս ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների մասին ՀՀ օրենք ընդունված է 2018թ.մարտի 23-ին:

¹³ Տե՛ս Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքներ ընդունելու մասին ՀՀ Գերագույն խորհրդի որոշում 09.07. 1991թ., ուժը կորցրել է 04.01.2007թ.-ին:

¹⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 2015 թվականի փոփոխություններով:

¹⁵ Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր 10.12.1948թ., հոդված 8:

ստանձնեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավագործության ճանաչման հետ կապված մի շարք պարտավորություններ: Մասնավորապես պետք է ապահովեր Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրության համապատասխանությունը եվրոպական կոնվենցիայի պահանջներին, ինչպես նաև պետք էր մշակեր և ընդուներ օրենսդրական այնպիսի կառուցակարգեր, որպեսզի կատարվեին Հայաստանի Հանրապետության դեմ կայացրած վճիռները: Թեև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայում չկա հստակ ամրագրված առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունք, մարդու իրավունքների եվրոպական դատարանը շրջակա միջավայրի հետ կապված 300 գործերում կայացրել է որոշումներ, որոնք շատ մեծ փոփոխություններ են առաջացրել եվրոպայի խորհրդի անդամ շատ պետությունների քաղաքականության և պրակտիկայի մեջ:

Ինչպես նշում է Բ. Ս. Էրզեյեվը. «պետությունների կողմից միջազգային ստանդարտների ընկալման արդյունքում բուն մարդ հասկացությունը միջպետական իրավունքում ևս ձեռք է բերում իրավական բնույթ և մատնանշում է տվյալ պետության քաղաքացիներին, ինչպես նաև օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք գտնվում տվյալ պետության տարածքում: Իսկ մարդու իրավունքները դրանք այնպիսի իրավունքներ են, որոնցով օժտված է յուրաքանչյուր մարդ՝ անկախ իր քաղաքացիական պատկանելությունից»: Ինչ վերաբերում է բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքին, ապա օբյեկտների շրջանակը, որոնց վրա այն տարածվում է, զգալիորեն ավելի լայն է, այդ իրավունքին հետևելն իր մեջ ներառում է նաև

այլ ժողովուրդների էկոլոգիական շահերը հարգելը՝ շրջակա միջավայրի ոլորտում միջազգային ստանդարտներին համապատասխան¹⁶:

Բնապահպանական խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ են այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են՝ տնտեսական, տեխնիկական, իրավական, ինժեներական, գիտական, մշակութային, քաղաքական, միջազգային և այլն¹⁷:

Քանի որ, ժամանակակից պետության բնապահպանական խնդիրների շարքում կա ինչպես ներքին, այնպես էլ արտաքին սպառնալիքների կանխարգելում, դրա բնապահպանական գործունեությունը պետք է ուսումնասիրվի այս գործառնության գլոբալ «ներքին-արտաքին» բովանդակության ձևավորման տեսանկյունից¹⁸:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ անհրաժեշտ է բնապահպանական անվտանգության ապահովման իրավական, նորմատիվ, կազմակերպչամեթոդաբանական, գիտատեխնիկական և տեղեկատվական բազայի ձևավորում: «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի ընդունում, «բնապահպանական անվտանգություն» հասկացության և դրա ապահովման սկզբունքների հստակ ձևակերպում և բնորոշման ներմուծում երկրի օրենսդրական բազա: Ինչպես նաև ՀՀ Սահմանդրությունում ներառել «բնապահպանական անվտանգության ոլորտում ապահովող քաղաքականությունը»: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բնապահպանական անվտանգության ապահովման տնտեսական բաղադրիչին: Բնապահպանական անվտանգության ապահովման հարցերով միջազգային համագործակցության իրականացում, էկոլոգիական խնդիրների լուծման համար ներդրումների և բյուջետային միջոցների գրավմանն ուղղված միջազգային ծրագրերի իրականացում:

¹⁶ Տե՛ս Эбзеев Б.С. Конституция. Демократия. Права человека. М., 1992. էջ 120:

¹⁷ Տե՛ս Дмитриев, А. Е. Д53 Экологическое право. Общая часть учебное пособие / А. Е. Дмитриев; – Екатеринбург. 2017 – 1 էջ 12 հղումը <http://lib.maupfib.kg/wp-content/uploads/Dmitriev-A.-E.-YEkologicheskoe-pravo.-Obshhaya-chast-Ekaterinburg-2017.pdf>:

¹⁸ Տե՛ս Экологическое право: пособие / С. А. Балашенко [и др.]. – Минск: БГУ, 2013. էջ 25 հղումը https://law.bsu.by/pub/25/2013_ekolog_pravo.pdf:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Զինժառայողների և նրանց ընտանիքների անդամների
իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ

**ԿԱՄԱՎՈՐ ՅԻՍՈՒՆՔՆԵՐՈՎ ՉՈՐԱՅԱՎԱՔԱՅԻՆ ՉԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**

Հայ ժողովրդի դարավոր պատմությունն առհասարակ, և Հայաստանի երրորդ Հանրապետության գոյության ողջ ընթացքը հատկապես ապացուցել են մեր ինքնության պահպանման և անկախության պաշտպանության գործում զինված ուժերի կարևորությունը: Աներկբա է զինված ուժերի թե՛ օրենսդրական, թե՛ գործնական կազմակերպվածության ապահովման անհրաժեշտությունը:

Դեռևս 1991 թվականին հայկական զինված ուժերի կազմավորման գործընթացը տեղի ունեցավ Հայաստանի համար չափազանց բարդ իրավիճակում և գրեթե 30 տարի է, ինչ զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

Ցավոք սրտի, Հայաստանի երրորդ Հանրապետությունը, շրջապատված լինելով հայ ազգի գոյության և ինքնության պահպանման դեմ պետական մակարդակով քարոզ իրականացնող, ատելություն տարածող և շարունակաբար ցեղասպան ռազմավարություն որդեգրած թշնամական երկրներով, իր ձևավորման օրվանից սկսած գտնվել է պատերազմական իրավիճակում:

Թե՛ 1988 թվականից սկսված՝ Արցախի ազատագրման տարիներին, թե՛ 2016 թվականի ապրիլին, թե՛ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած իրադարձություններն ապացուցեցին մեր երկրի համար զինված ուժերի դերն ու նշանակությունը: Այս առումով, բացի ռազմական ասպեկտներից, չափազանց կարևոր է ոլորտային օրենսդրության դինամիկ զարգացման ապահովումը, առկա խնդիրների վերհանումն ու վերացումը:

Սույն հոդվածով անդրադառնալու ենք այնպիսի մի կարևոր խնդրի, ինչպիսին է կամա-

վոր հիմունքներով մարտական գործողությունների մասնակցության մեկնող անձանց կարգավիճակի հստակեցումը:

Ինչպես միշտ, այնպես էլ 2020 թվականի սեպտեմբերի-նոյեմբեր ամիսներին Հայաստանի և Արցախի Հանրապետությունների դեմ ադրբեջանական կողմի սանձազերծած վայրագությունների և պատերազմական բազմաթիվ հանցագործություններով ուղեկցվող մարտական գործողությունների ընթացքում մեծ էր կամավոր հիմունքներով պատերազմի դաշտ մեկնելու ցանկություն հայտնած քաղաքացիների թիվը: Կամավոր հիմունքներով Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը մասնակցության գործընթացը պետությունն սկսեց օրենսդրորեն կարգավորել և որոշակիացնել միայն 2020 թվականին: Մասնավորապես, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 9.1-րդ կետով նախատեսվեց աշխարհազորի ինստիտուտը, որը քաղաքացիների կամավորության և տարածքային սկզբունքով զինված ուժերի գլխավոր շտաբի ենթակայությամբ գործող ստորաբաժանումների համալիր է, որում ընդգրկված քաղաքացիները մասնակցում են Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը

Օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ աշխարհազորը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ է:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվեցին աշխարհազորի նպատակները, որոնք են 1) Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը համընդհանուր և համազգային բնույթ հաղորդելը. 2) հակառակորդի դիվերսիոն կամ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 122 2021

ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողություններից Հայաստանի Հանրապետության տարածքի, բնակչության և ենթակառուցվածքների պաշտպանության պլանավորված միջոցառումների իրականացմանն աջակցությունը. 3) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի կիրառման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների կենսագործունեության ապահովմանն աջակցությունը:

Կասկածից դուրս է կամավոր հիմունքներով հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու ցանկություն ունեցող անձանց հետ տարվող նախապատրաստական աշխատանքները, պաշտպանությանը մասնակցությունը և պատշաճ ղեկավարումը համակարգելուն և օրենսդրորեն կարգավորելուն ուղղված պետության գործողությունների կարևորությունը: Այսպիսի ինստիտուտի ներդրումը թեպետ շատ կարևոր, սակայն չափազանց ուշացած գործընթաց էր, բացի դրանից, սահմանված կարգավորումներում առկա են խնդիրներ, որոնք մանրամասն ուսումնասիրության կարիք ունեն:

Այսպես, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսվել է, որ աշխարհագրի կիրառումը ներառում է՝ 1) մասնակցությունը Հայաստանի Հանրապետության սահմանների կամ հակառակորդի հետ շփման գծի վտանգված հատվածների զինված պաշտպանությանը. 2) մասնակցությունը հակառակորդի դիվերսիոն կամ ահաբեկչական կամ հետախուզական կամ հատուկ օպերացիաների ուժերի և այլ գործողությունների դեմ պայքարին. 3) մասնակցությունը հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների զինված պաշտպանությանը. 4) մասնակցությունը զորքերի և բնակչության զանգվածային տեղաշարժի կենտրոնական երթուղիների զինված պահպանությանը և պաշտպանությանը. 5) մասնակցությունը քաղաքացիական պաշտպանությանը:

Աշխարհագրայինի հավաքագրման հիմքը նրա հետ կնքված պայմանագիրն է, ինչից հետո աշխարհագրայինին ամրակցվում է զենք, հատկացվում է զինվորական համազգեստ, և աշխարհագրայինը նշանակվում է համապա-

տասխան պաշտոնի աշխարհագրային շտաբի ղեկավարի (պետի) հրամանով:

29.1-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսվում է, որ աշխատող աշխարհագրայինների պատրաստության և կիրառման գործընթացի վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջները: Աշխարհագրայինները պատրաստության և կիրառման ընթացքում ապահովվում են անվճար սննդով՝ զինծառայողների համար սահմանված կարգով:

Այսպիսով, թեև վերը նշված կարգավորումներով կամավոր հիմունքներով զինված պաշտպանության մասնակցող անձանց նախապատրաստության և գործողությունների ընթացքը որոշակիացվեց և կարգավորվեց, սակայն առաջ է գալիս նրանց կարգավիճակի հետ կապված հարց:

Օրենքով, փաստորեն, նախատեսվել է, որ աշխարհագրայինները զինծառայողների համար սահմանված կարգով ապահովվում են անվճար սննդով, նրանց տրամադրվում է զենք և զինվորական համազգեստ: Նույնական կարգավորում է նախատեսվում նաև «Աշխարհագրայիններին զենքի ամրակցման և պահպանման կարգը, ինչպես նաև աշխարհագրայինի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու մասին» Պաշտպանության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 9-Ն հրամանով:

Աշխարհագրայինները, բացի նշվածից, զորահավաքային զինվորական ծառայություն անցնող անձանց պես օգտվում են աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված երաշխիքից, այն է՝ ազատվում են աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով աշխատատեղը (պաշտոնը):

Այնուամենայնիվ, նշված կարգավորումներից պարզ չէ, թե ինչպիսի կարգավիճակ են ունենում աշխարհագրայինները, եթե ոչ խաղաղ, ապա գոնե ռազմական դրության և նրանց կիրառման ընթացքում. արդյոք նրանք հավասարեցվում են զինծառայողներին, արդյոք օգտվում են զինծառայողների համար օրենքով նախատեսված երաշխիքներից և արտոնություններից, վարձատրվելու են արդյոք մարտական գործողություններին մասնակցության օրերի դիմաց, թե՛ ոչ, և այլն:

2020 թվականի հոկտեմբերի 28-ին լրացումներ կատարվեցին մի շարք օրենքներում¹, սակայն ո՛չ այդ օրենքները, ո՛չ Պաշտպանության նախարարի թիվ 9-Ն հրամանը վերը շարադրված հարցերի պատասխանները չեն պարունակում:

Ուշագրավ է նաև այն, որ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինված ուժերը կազմված են զինվորական կառավարման կենտրոնական մարմնից՝ զինված ուժերի գլխավոր շտաբից, զինվորական կառավարման այլ մարմիններից, զորամիավորումներից, միավորումներից, զորատեսակներից և զորամասերից, զինվորական հաստատություններից և զինվորական այլ կազմավորումներից: Պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ զինված ուժերի կազմում ընդգրկվում են նաև այլ զորքերը, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների լիազոր պետական մարմնի ուժերը: Զինված ուժերի գլխավոր շտաբի ենթակայությամբ գործում է աշխարհազորը:

Հոդվածը թվարկում է այն մարմինները, որոնցից կազմված են զինված ուժերը, նաև նրանք, որոնք զինված ուժերի կազմում ընդգրկվում են պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ, այնուհետև՝ անջատելով թվարկը վերջակետով, հոդվածում նշվում է, որ զինված ուժերի գլխավոր շտաբի ենթակայությամբ գործում է աշխարհազորը: Տառացի նշանակությունից ելնելով՝ կարելի է արձանագրել, որ աշխարհազորը զինված ուժերի կազմի մեջ չի մտնում, նույնիսկ պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ, **այլ միայն համարվում է զինված ուժերի կազմի մեջ մտնող գլխավոր շտաբի ենթակայությամբ գործող համակարգ:**

Աշխարհազորայիների կարգավիճակին չի անդրադառնում նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, որի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ զինվորական ծառայության տեսակներն են 1) ժամկետայինը, 2) պահեստազորայինը և 3) զորահավաքայինը:

Ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություններից²: Պահեստազորային զինվորական ծառայություն է համարվում պահեստազորի պատրաստության շրջանակներում սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպված վարժական հավաքների ժամանակ իրականացվող ծառայությունը³: Զորահավաքային զինվորական ծառայություն է համարվում օրենքով սահմանված դեպքերում հայտարարված զորահավաքի շրջանակներում զորահավաքային զորակոչի հիման վրա կազմակերպվող ծառայությունը⁴:

Օրենքի 72-րդ հոդվածը նախատեսում է նաև զինծառայողներին և զինծառայողներին հավասարեցված անձանց, ինչով էլ ուղղակիորեն պայմանավորված է այն անձանց շրջանակը, ովքեր օգտվում են զինծառայողների դրամական և սոցիալական ապահովության երաշխիքներից, և նշված հոդվածով, կրկին, աշխարհազորայիների հետ կապված որևէ կարգավորում նախատեսված չէ:

Այսպիսով, ստացվում է, որ անձը կամավոր հիմունքներով ներգրավվում է զինված պաշտպանության գործին, իրականացնում զինվորական պարտականություններից բխող գործողություններ, փաստացի իրականացնում ծառայություն, սակայն դրան համարժեք իրավունքների վերաբերյալ ներպետական օրենսդրությունը կարգավորումներ չի նախատեսում (բացի աշխատանքի պահպանումը, զենքով, համազգեստով և անվճար սննդով ապահովվելը):

Հասկանալի է, որ խոսքը հատկապես վերաբերում է պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ աշխարհազորայիների ներգրավման դեպքերին, քանի որ հենց այդ ժամանակ է, որ կամավորն իրականացնում է զինծառայողի գործառույթներին համարժեք գործողություններ, և, իհարկե, հասկանալի է, որ խաղաղ ժամանակ աշխարհազորայիներին

1 Լրացումներ կատարվեցին «Պաշտպանության մասին», «Տարածքային կառավարման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ օրենքներում:
 2 Տեն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 2:
 3 Տեն նույն հոդվածի 9-րդ մաս:
 4 Տեն նույն հոդվածի 10-րդ մաս:

զինծառայողներին հավասարեցնելու գաղափարն էլստե կփոխեր այս ինստիտուտի դերն ու էությունը, քանի որ այդ պարագայում այն կհավասարվեր պայմանագրային զինվորական ծառայությանը:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «Մեկնաբանություններ» բաժնում «Զինծառայող» եզրույթը սահմանելիս նշվում է, որ զինծառայողների հարաբերությունները զինված ուժերի հետ տարբերվում են ըստ նրանց՝ պրոֆեսիոնալ (այլ կերպ նաև՝ կամավոր), զորակոչիկ (պարտադիր ժամկետային զինծառայող) կամ պահեստագրային զինծառայող լինելու հանգամանքի:

Մի շարք երկրներ ունեն ռազմական պահեստագրային ուժեր՝ կազմված պահեստագրայիններից: Պահեստագրայինները կարող են անցնել զինծառայության **սեփական կամքով** կամ ըստ պարտականության: Որոշ դեպքերում նրանք համարվում են քաղաքացիական բնակչություն, իսկ մյուս դեպքերում ասոցացվում են զինված ուժերի անձնակազմի հետ, երբ կանչվում են վարժանքի կամ մոբիլիզացվում ռազմական գործողությունների համար: **Զինված ուժերում ծառայություն անցնելու ընթացքում, այսինքն՝ պարտադիր կանոնավոր վարժանքի ժամանակահատվածում, պահեստագրայինները, ինչպես զինված ուժերի ցանկացած այլ անդամ, պետք է օգտվեն իրենց իրավունքներից**⁵:

Պրոֆեսիոնալ, զորակոչային և պահեստագրային ծառայությունների հասկացությունները նշելուց հետո նույն բացատրական հուշագրում նշվում է, որ բոլոր երեք կատեգորիաների դեպքում ընդհանուր է այն, որ նրանց համար զինվորական կարգապահության և աստիճանակարգության պահպանումը պարտադիր է մինչև զինված ուժերում ծառայության ավարտը:

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյա-

կի կողմից 2008 թվականին տպագրված «Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկում նշվում է, որ «Զինված ուժերի անձնակազմը միատարր խումբ չէ, քանի որ նրա մեջ ընդգրկված են մի շարք ենթախմբեր, ինչպես, օրինակ՝ ժամկետային զինծառայողներ, կամավորներ, զինված ուժերի տարբեր տեսակների ծառայողները (...), ինչպես նաև տարբեր կոչումներ ունեցող զինծառայողները՝ շարքայինից մինչև գեներալ: Այս ձեռնարկը ելնում է այն տեսակետից, որ մարդու իրավունքները մարդ էակի անօտարելի մասն են, և զինված ուժերի անձնակազմի որոշակի խմբին պատկանելու փաստը չի կարող բացասաբար ազդել մարդու իրավունքներից օգտվելու վրա:

Մասնավորապես, «համազգեստով քաղաքացիների» գաղափարը չի կարող սահմանափակվել միայն զորակոչված զինվորականների շրջանակով: Եթե զորակոչված անձը զենք է վերցնում պարտադիր զինվորական ծառայության շրջանակներում, ապա պրոֆեսիոնալ զինվորը համաձայն է ծառայել զինված ուժերում կամավորության հիմունքներով: Զինված ուժերին կամավոր կերպով միանալու բուն փաստն ինքնին չի նշանակում, որ անձը հրաժարվում է իր մարդու իրավունքներից (...)⁶:

Այս պարագայում աշխարհագրայինները, թեկուզև կամավոր, մտնում են զինվորական հարաբերությունների մեջ, այսինքն, նշանակվում են կոնկրետ պաշտոնի, ունենում վերահաս հրամանատար, որի հրամանները պարտավոր են կատարել: Աշխարհագրի կառուցվածքը, պատրաստության և կիրառման պլանները հաստատվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հրամանով, դրա ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝ զինված ուժերի պատրաստության գլխավոր վարչությունում ձևավորված աշխարհագրային շտաբի միջոցով: Բացի դրանից, աշխարհագրայինն ստանում է զինվորական հա-

⁵ Տե՛ս Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի 2-րդ՝ «Մեկնաբանություններ», բաժինը, էջ 36:

⁶ Տե՛ս ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից 2008 թվականին տպագրված «Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկ, էջ 17:

մազգեստ, զենք, անցնում զինվորական պատրաստություն, իսկ պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ ներգրավվում մարտական գործողություններին: Թվարկված գործառույթները համադրության մեջ դիտարկելիս պարզ է դառնում, որ աշխարհագրայինն իրականացնում է այն բոլոր գործառույթները, որն իրականացնում է, օրինակ, պահեստազորային զինծառայողը (վարժական հավաքներից ու նախնական պատրաստությունից մինչև մարտական գործողություններին մասնակցությունը): Հետևաբար, աշխարհագրայինները որոշակի պայմաններում փաստացի հավասարվում են զինծառայողներին, ինչը անհրաժեշտ է ամրագրել նաև օրենսդրորեն և նրանց ապահովել նույն երաշխիքներով (խոսքը հատկապես մարտական գործողություններին ներգրավվելու մասին է, քանի որ խաղաղ ժամանակ, կնքված պայմանագրի հիման վրա, աշխարհագրայիններին, օրինակ, դրամական հատուցում տրամադրելու պարագայում այդ ինստիտուտը գաղափարական առումով կփոխի իր դերն ու էությունը և կհավասարվի պայմանագրային զինվորական ծառայությանը):

Ավելին, աշխարհագրայիններին զինծառայողների համար նախատեսված երաշխիքներով չապահովվելը կարող է հանգեցնել նաև խտրականության արգելքի սկզբունքի խախտման, քանի որ, ըստ էության, նրանք իրականացվող գործառույթների տեսանկյունից գտնվում են նույնանման վիճակում, ինչ, օրինակ, պահեստազորային զինծառայողները: Տարբերությունը միայն նշված գործառույթների իրականացմանը ներգրավման կամարտահայտությունն է:

Խնդրի կարգավորման նպատակով անհրաժեշտ է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով «աշխարհագրային ծառայությունը» ևս համարել զինվորական ծառայություն, կամ կոնկրետ հանգամանքների առկայության դեպքում (մարտական գործողությունների կամ զորավարժությունների կամ վարժական հավաքների մասնակցություն և այլն) աշխարհագրայինն հավասարեցնել զինծառայողին և որոշել այն դրամական ու սոցիալական երաշխիքների շրջանակը, որոնցից աշխարհագրայինը կկարողանա օգտվել:



КРИСТИНЭ ТРИФОНОВА

кандидат юридических наук, доцент
доцент кафедры гражданского права,
доцент кафедры административного и
финансового права Крымского филиала
ФГБОУВО «Российский государственный
университет правосудия»

СЕРГЕЙ ТРИФОНОВ

кандидат юридических наук
доцент кафедры гражданского права,
доцент кафедры государственно-правовых дисциплин
Крымского филиала
ФГБОУВО «Российский государственный
университет правосудия»

ПРОБЛЕМЫ МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОГО УРЕГУЛИРОВАНИЯ ТРУДОВОЙ МИГРАЦИИ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ

Повышение интенсивности международной миграции непосредственно связано с активными глобализационными и интеграционными процессами, наблюдаемыми в последние десятилетия.

Иванов Д.В. писал, что «основными причинами перемещения людей в поисках работы из одного государства в другое являются бедность и неспособность зарабатывать или производить достаточно для того, чтобы обеспечить себя и свою семью».¹

Необходится согласиться с Бекяшевым Д.К., который считает, что «международная трудовая миграция – это миграция, связанная с пересечением иностранными физическими лицами государственной границы какого-либо государства на определенный срок в целях получения работы в стране въезда».²

Причинами международной трудовой миграции являются: неравномерность мирового экономического развития; неравенство доходов и возможностей в разных странах, в частности между промышленно развитыми и развивающимися странами; дисбаланс населения, проявляющийся в избытке рабочей силы в развивающихся странах и в ее недостатке в определенных отраслях в развитых странах и др.³

Цели политики в области трудовой миграции, вытекающие из общепризнанных международных норм: реализация права граждан на свободу перемещений; содействие сокращению безработицы и облегчению ситуации на национальных рынках труда; повышение благосостояния трудящихся; предотвращение утечки интеллектуального потенциала страны за границу; защита прав и интересов трудящихся-мигрантов в странах пребывания.⁴

Выработкой концепции миграции сейчас включены в полномочия международных и региональных организаций. В 1989 г. на 59-й сессии Совета Международной организацией по миграции (МОМ) были даны дефиниции «миграция» и «мигрант».

«Миграция - часть процесса развития государств: тех, из которых лица уезжают, и тех, в которые пытаются попасть, а также государств, которые принадлежат к обеим категориям, независимо от причин перемещения».⁵

«Мигрант – это лицо, перемещающееся из одного государства в другое и нуждающееся в международных миграционных услугах, которые предоставляются международными организациями».⁶

¹ Иванов Д.В. Вынужденная и трудовая миграция населения в международном и национальном праве. М., 2010. С. 206.

² Бекяшев Д.К., Иванов Д.В. Международно-правовое регулирование вынужденной и трудовой миграции: монография. М.: Проспект, 2013. 392 с.

³ Трифонов С.Г., Капранова Ю.И. Ретроспективный анализ института гражданства.// Философия права. №3, 2019

⁴ Юдина Т.Н. Миграция: словарь основных терминов: Учеб. пособие. М.: Издательство РГСУ; Академический Проект, 2007. – 472 с.

⁵ Старовойтова С.С. Анализ предпосылок миграционных процессов // Современные научные исследования и инновации. 2015. № 10

⁶ Continued effectiveness of the Organization in view of the new challenges: Doc. MC/1631 / Intergovernmental Committee for Migration. Geneva, 1989. P. 12–14.

В 1996 г. Экономический суд СНГ рассматривал вопрос о толковании термина «мигрант». Было указано на отсутствие его договорно-правовой регламентации и предложено следующее определение: мигрант - это понятие, включающее в себя все категории лиц, осуществляющие пространственные перемещения, независимо от причин перемещения, их длительности и пространственных границ⁷.

Наличие четко унифицированных понятий «миграция» и «международная миграция» облегчило бы работу по выявлению точного количества лиц, являющихся мигрантами, определению их правового статуса, что позволило им отстаивать свои интересы.

Сфера правового регулирования трудовой миграции включает в себя нормы международного публичного и международного частного права, нашедшие отражение в различных актах, принятых ООН, МОТ, Советом Европы, СНГ, региональными объединениями государств, а также многосторонних и двусторонних соглашениях РФ.

Одним из главных международно-правовых документов в области прав трудящихся-мигрантов на сегодняшний день является Международная конвенция о защите прав всех трудящихся-мигрантов и членов их семей от 18 декабря 1990 года.

Основная цель принятия Конвенции - создание международно-правового механизма защиты прав всех трудящихся-мигрантов и членов их семей. До ее принятия отдельные положения, регулирующие правовой статус трудящихся-мигрантов, содержались в ряде документов, выработанных в рамках Международной организации труда (МОТ): в Конвенции о трудящихся-мигрантах (№ 97), в Конвенции о злоупотреблениях в области миграции и об обеспечении трудящимся-мигрантам равенства возможностей и обращения (№ 143), в Рекоменда-

ции о трудящихся-мигрантах (№ 86), в Рекомендации о трудящихся-мигрантах (№ 151), в Конвенции о принудительном или обязательном труде (№ 29) и Конвенции об упразднении принудительного труда (№ 105) и других. По состоянию на 30 мая 2013 г. ее ратифицировали 47 государств; подписали, но не ратифицировали 16 государств.⁸

Статья 2 Конвенции о защите прав всех трудящихся-мигрантов и членов их семей от 18 апреля 1990 г. определяет, что «трудящийся - мигрант - это лицо, которое будет заниматься, занимается или занималось оплачиваемой деятельностью в государстве, гражданином которого он или она не являются».⁹ При этом определение трудящегося-мигранта, представленное в Конвенции, не ограничивает действие статуса такого лица в государстве, гражданином которого он или она не является и где будет заниматься, занимается или занималось оплачиваемой деятельностью, а также не ограничивает сам процесс миграции никакими временными рамками. Более того, определение охватывает мигрантов как с документами, так и без таковых.

В данном контексте понятие конкретизируется в определении отдельных категорий мигрантов.

Ранее в Конвенции МОТ №97 о рабочих-мигрантах 1949 года применяется термин не «трудящийся-мигрант», а «работник-мигрант» и обозначает «лицо, которое мигрирует из одной страны в другую с намерением получить работу, иначе, чем на собственный счет, и включает всякое лицо, допускаемое в соответствии с законом в качестве работника-мигранта. В данной Конвенции, выделяются следующие категории работников-мигрантов: пограничные работники, въехавшие на короткий срок лица свободных профессий и артисты, моряки».¹⁰

⁷ Соглашение стран СНГ от 24.09.1993 “О помощи беженцам и вынужденным переселенцам”//СПС Консультант Плюс

⁸ Азарова Е.Г., Андриченко Л.В., Бочарникова М.А., Голованова Н.А., Захаров М.Л., Коршунова Т.Ю., Ломакина Л.А., Плюгина И.В., Серегина Л.В., Чиканова Л.А. Аналитический обзор на тему: “Соответствие российского законодательства требованиям международной организации труда” / отв. ред. Л.А. Чиканова // СПС Консультант Плюс.

⁹ “Международная конвенция о защите прав всех трудящихся-мигрантов и членов их семей”(Заключена 18.12.1990)// Международное публичное право. Сборник документов. Т. 1.- М.: БЕК, 1996. С. 492 - 515.

¹⁰ Конвенции и рекомендации, принятые Международной конференцией труда. 1919 - 1956. Т. I.- Женева: Международное бюро труда, 1991. С. 965 - 981.

Принятие Конвенции МОТ № 143 о рабочих-мигрантах (дополнительные положения) было обусловлено резким ростом масштабов безработицы и нерегламентированной миграции. Данный акт представляет собой первую многостороннюю попытку рассмотреть вопрос о положении нелегальных мигрантов, а также предусматривает санкции в отношении торговцев нелегальной рабочей силой. Данная Конвенция закрепила понятие «трудящийся-мигрант» - «...лицо, которое мигрирует или мигрировало из одной страны в другую с целью получения любой работы, кроме как за собственный счет, и включает в себя любое лицо, законно въехавшее в страну в качестве трудящегося-мигранта. Однако в международном миграционном праве, как и в национальном законодательстве большинства стран мира, до сих пор не сложился единый подход к понятию трудящегося-мигранта».

В настоящее время международно-правовое регулирование трудовой миграции осуществляется в рамках Содружества независимых государств (СНГ), Союзного государства Беларуси и России, и Евразийского экономического союза (ЕАЭС), а до 1 января 2015 г. оно осуществлялось в рамках Евразийского экономического сообщества (ЕврАзЭС).

В рамках Евразийского Экономического Сообщества, на протяжении долгих велся проект по подписанию Конвенции о правовом статусе трудящихся-мигрантов. Конвенция была подписана 14 ноября 2008 года, между Азербайджаном, Молдовой, Арменией, Российской Федерацией, Грузией, Белоруссией, Таджикистаном, Туркменистаном, Узбекистаном, Кыргызстаном и Казахстаном.¹¹

Данная Конвенция была направлена на регулирование статуса трудящихся-мигрантов государств - участников СНГ и членов их семей, а также на создание условий для обеспечения одинакового количества обращений в отношении трудящихся-мигрантов, членов их семей и граждан принимающего государства в той мере,

как это регламентируется ее законодательством и международными обязательствами. В настоящее время данная Конвенция не действует в РФ, Таджикистане и Узбекистане.

Конвенция 2008 г. распространяет свое действие на всех трудящихся-мигрантов и членов их семей, находящихся на территории принимающего государства - члена СНГ. При этом круг членов семьи трудящегося-мигранта устанавливается в соответствии с законодательством принимающего государства.

Это позволит в определенной степени регулировать численность лиц, на которых будут распространяться положения Конвенции 2008 г. Кроме того, действие данной Конвенции не распространяется на ряд категорий иностранных граждан, в том числе моряков, лиц, ходатайствующих о предоставлении им статуса беженца или убежища на территории принимающей стороны и получивших его, священнослужителей, занимающихся религиозной деятельностью в официально зарегистрированных религиозных организациях, лиц, приезжающих в целях обучения (ст. 3).

В понятии «трудящийся-мигрант», данном в Конвенции 2008 г., не ясно, что именно понимается под оплачиваемой трудовой деятельностью; не уточнено, распространяется ли действие Конвенции на лиц, осуществляющих трудовую деятельность в соответствии с гражданско-правовыми договорами. Апеллирование к аналогичным понятиям, закрепленным в других международных актах, в данном случае невозможно, поскольку установленный в ст. 1 Конвенции 2008 г. понятийный аппарат применяется только для целей данной Конвенции. Учитывая, что в ст. 1 в качестве субъекта, предоставляющего работу трудящимся-мигрантам, упоминается как работодатель, так и наниматель, можно сделать вывод, что трудовая деятельность предполагает деятельность, осуществляемую не только на основе трудовых, но и гражданско-правовых договоров.¹²

¹¹ “Конвенция о правовом статусе трудящихся-мигрантов и членов их семей государств-участников Содружества Независимых Государств” (Заключена в г. Кишиневе 14.11.2008).//СПС Консультант Плюс

¹² Азарова Е.Г., Андриченко Л.В., Бочарникова М.А., Голованова Н.А., Захаров М.Л., Коршунова Т.Ю., Ломакина Л.А., Плюгина И.В., Серегина Л.В., Чиканова Л.А. Аналитический обзор на тему: “Соответствие российского законодательства требованиям международной организации труда” / отв. ред. Л.А. Чиканова // СПС Консультант Плюс. 2014.

Проведенный анализ международных актов приводит к выводу о том, что в настоящее время нет единого понимания в применении дефиниции «трудящийся-мигрант».

В заключении, необходимо отметить, что в области правового регулирования внешней трудовой миграции большое значение имеют нормы международного публичного и частного права,

закрепленные в актах, принятых ООН, МОТ, Советом Европы, СНГ, региональными объединениями государств, а также многосторонних и двусторонних соглашениях РФ. При этом международные договоры и соглашения выступают для РФ, ведущим международно-правовым источником в сфере правового регулирования внешней трудовой миграции.



ՍԵՎԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազի տեղակալ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՂԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոդվածում քննարկվում են օժանդակողի արարքների որակման, դրանց սպառիչ ցանկ օրենքով սահմանելու և այլ խնդրահարույց հարցեր: Կատարած հետազոտության հիման վրա հեղինակը հանգում է այն եզրակացության, որ օժանդակողի արարքների սպառիչ ցանկ տալու անհրաժեշտություն չկա, առաջարկում է Ընդհանուր մասի համապատասխան հոդվածի վրա հղում կատարել այն անձի արարքը որակելիս, որը թեկուզ կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության անդամ է և հանցանքը կատարել է դրանց կազմում:

Բանալի բառեր. օժանդակող, կատարող, կազմակերպված խումբ, հանցավոր համագործակցություն, նախապես խոստանալ, պարտակել

СЕВАК ПОГОСЯН

Заместитель прокурора административных округов Эребуни и Нубарашен,
соискатель кафедры уголовного права юридического факультета ЕГУ

ПОНЯТИЕ ПОСОБНИЧЕСТВА СОВЕРШЕНИЮ ПРЕСТУПЛЕНИЯ, ВИДЫ ПОСОБНИЧЕСТВА

В статье обсуждается квалификация действий пособника, их исчерпывающий перечень законом и другие проблемные вопросы. На основании исследования автор приходит к выводу, что нет необходимости приводить исчерпывающий перечень действий пособника, предлагает сослаться на соответствующую статью Общей части при описании действий лица, которое является членом организованной группы или преступного сообщества и совершил преступление в составе преступной группы.

Ключевые слова: пособник, исполнитель, организованная группа, преступное сообщество, предварительный сговор, укрывательство преступлений

SEVAK POGHOSYAN

Deputy Prosecutor of Erebuni and Nubarashen Administrative Districts,
PHD Applicant of the Chair of Criminal Law at the Faculty of Law, YSU

THE CONCEPT OF THE CRIME FACILITATOR: TYPES OF ASSISTANCE

The article discusses the issues of qualifying the actions of the facilitator, defining their exhaustive list by law, as well as other problematic issues. Based on the research, the author concludes that there is no need to provide an exhaustive list of the actions of the facilitator, suggests referring to the relevant article of the General Part when qualifying the action of a person who is even just a member of an organized group or criminal cooperation and has committed the crime being a part of them.

Keywords: facilitator; perpetrator; organized group; criminal cooperation; promise in advance; cover up

* * *

ԱՐԱՄ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտի պետին առընթեր
ՀԿԳ ավագ քննիչ, մայր, իրավաբանական գիտությունների թեկնածու,
Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս

ՇՈՐԹՄԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇՈՐԹՄԱՆ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածում ներկայացված է սեփականության դեմ ուղղված հանցագործություններից մեկի՝ շորթման հանցակազմի առաջացման և կատարելագործման պատմական զարգացումը վերջին մի քանի տասնամյակների ընթացքում: Դրան զուգահեռ, վկայակոչելով տարբեր արտասահմանյան երկրների օրենսդրական մոտեցումներն ու ձևակերպումները, առաջ են քաշվել իրավակիրառ պրակտիկայում որակման հետ կապված որոշ հիմնախնդիրներ՝ ներկայացնելով կոնկրետ առաջարկներ:

